



Վ. Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԿԻՒԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՎ ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ^X
1145-1226 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ







ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԼԵՏ

Վ. Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԿԻԼԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԵՐԶԱՎՈՐ
ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՈՆԵՐԸ
1145—1226 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

A 83468

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1994

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի ոռոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հ. Մ. Բարբեկյան
Քիրքը հրատարակության ևն երաշխավորել գրախոսներ՝ պատմ. գիտ.
բևկնածուներ Գ. Ս. Գրիգորյանը, Հ. Ա. Սահմանյանը

Տեր-Ղեոնդյան Վ. Ա.

Տ 457 Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր արևելքի
արաբական երկրները 1145—1226 թվականներին (Պատ.
խմբ՝ Հ. Մ. Բարթիկյան), ՀՀ ԳԱԱ պատմ. ին.-տ.—Եր.;
ՀՀ ԳԱԱ հրատ., 1994. էջ 159

Աշխատությունը նվիրված է Կիլիկիայի Հայկական պետության և
արաբական երկրներում (Սիրիա, Իրաք, Պաղեստին, Եգիպտոս) առկա
պետական կազմավորումների փոխհարաբերությունների պատմությանը:
Տարբեր սկզբնաղբյուրների հիման վրա շարադրված է Կիլիկյան Հայ-
աստանի արտաքին քաղաքական կապերի պատմությունը ԺՌ դարի
երկրորդ կեսին և ԺԴ դարի առաջին քառորդում: Քննարկվում է Կի-
լիկյան Հայաստանի գերը նոր ալ-Դինի և խաչակիրների, նաև Սա-
լահ ալ-Դինի և խաչակիրների մեծ հակամարտությունների ընթացքում:
Լուսարանվում է Կիլիկիայի անկախության պահպանմանն ու ամրապնդմա-
նը ուղղված Ռուբրիյան տոհմի դիվանագիտական պայքարը:

Նախատեսված է հայագետների, արաբագետների, Մերձավոր արևել-
քի միջնադարի պատմության մասնագետների համար:

8 0503020913
703(02) — 94 Զայտուն.

ԳՄԴ 63.3 (2Հ) 43

ISBN 5—8080—0328—8

(C) ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1994

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայոց պատմության մեջ իր ուրուցն տեղն ունի Կիլիկիայի Հայկական պետությունը (1080-1375), որի պատմությունը սերտորեն փոխարարերվում է Մերձավոր արեւվելքի երկրների պատմությանը:

Կիլիկյան Հայաստանի պատմությունը կարելի է դիտարկել որպես Մերձավոր արևելքի պետությունների ու այնտեղ իշխող տոհմերի հետ (Բյուզանդիա, սելջուկներ, Զանգիներ, Ալյուբյաններ, Խաչակիրներ, մամլուքներ, մոնղոլներ) քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային կապերի մի բարդ համակարգ: Այստեղ կարենրվում են արարական (կամ արաբացած) երկրներում՝ Սիրիա, Իրաք, Պաղեստին, Եգիպտոս, գոյատեած պետական կազմավորումները:

Կիլիկյան Հայաստանի պատմությունը ուսումնասիրման առարկա է դարձել դեռևս Ժմբարի վերջերից: Անցած երկու Հարյուրամյակի ընթացքում, սկսած Միքայել Զամշլանցի «Հայոց պատմությունից» մինչև նորագույն ուսումնասիրությունները, Կիլիկյան Հայաստանի պատմությանն են անդրադարձել բազմաթիվ հայ և օտար գիտնականներ: Այդ բնագավառում ակնառու են երկու կարենրաշխատություններ՝ Ղեղնդ Ալիշանի «Սիսուանը» և Գրիգոր Միքայելյանի «Կիլիկյան Հայկական պետության պատմությունը»:

Վերջին քսան-երեսուն տարում որոշակի հետաքրքրություն է նկատվում Կիլիկյան պետության և Հարեւան երկրների փոխարարերությունների պատմության ուսումնասիրման նկատմամբ:

Ավելացնելով նշենք, սակայն, որ Կիլիկիայի փոխհարաբերությունները արաբական աշխարհի երկրների հետ ցայսօր հատուկ ուսումնասիրման շեն ենթարկվել ո՛չ հայ և ո՛չ էլ օտար պատմագիտության մեջ։ Դա ավելի է կարելորվում, եթե նկատի ունենանք, որ ԺԲ դարի 40-50-ական թվականներից այդ երկրների հետ առնչությունները Կիլիկիայի համար ձեռք են բերել ծանրակշիռ, իսկ երբեմն էլ վճռական նշանակություն։

Ներկա ուսումնասիրության մեջ քննարկվում են վերոհիշյալ փոխհարաբերությունները՝ ԺԲ դարի կեսերից մինչև ԺԳ դարի Ա քառորդը, այսինքն՝ Ռուբինյան իշխանության վերահաստատումից (1145) մինչև 1226 թվականը, երբ Կիլիկիայում իշխանության գլուխ անցան Հեթումյանները։ Ինչ վերաբերվում է Ա գլխին, ապա այն հավակնություն շունի խորը գիտականության և շարադրված է իրեն նախարան։ «Մերձավոր արևելքի արաբական երկրներ» ընդհանուր անվան տակ հասկացվում են Սիրիան, Իրաքը, Պաղեստինը և Եգիպտոսը, այսինքն՝ այն երկրները, որտեղ հիշյալ ժամանակաշրջանում կային ոչ միայն արաբական, այլև լատինական, սելջուկյան և այլ պետություններ։

Ներկա աշխատության նպատակն է հայկական, արաբական, ասորական, լատինական և բյուզանդական աղբյուրների հիման վրա բացահայտել Կիլիկյան Հայաստանի և Մոսուլի աթարեկության, Զանգիների պետության, Անտիոքի իշխանության, Եգիպտիայի կոմսության, Երուսաղեմի թագավորության, Եգիպտոսի ու Հալեպի սուլթանությունների քաղաքական փոխհարաբերությունների պետության գլխավոր հանդիրներն են՝

—Հետևել Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության փոփոխություններին Զանգիների պետության նկատմամբ ԺԲ դարի 40-70-ական թվականներին՝ Մերձավոր արևելքում խաչակիրների և Զանգիների միջև ընթացող պայքարի հետնախորքի վրա։

—Գնահատել իշխան Մլեհի և Նուր ալ-Գինի ուազմական դաշինքը՝ ցուց տալով դրա հետևանքները երկու կող-

մերի, ինչպես նաև հարևան պետությունների համար:

— Նշել Կիլիկյան հայկական պետության և Սալահ ալ-Դինի սուլթանության փոխարաբերությունների հիմնական փուլերը՝ գնահատելով նաև կիլիկեցիների դիվանագիտությունը խաչակիրներ—Սալահ ալ-Դին մեծ հակամարտության մեջ:

— Յուզ տալ Մերձավոր արևելքի արաբական երկրներում ստեղծված քաղաքական իրավիճակի կարևորությունը հայկական իշխանապետության հզորացման և հետագայում նրա թագավորության վերածման գործում ժի դարի վերջում:

— Պարզել Կիլիկյան թագավորության և Հալեպի Այյուրյան սուլթանության միջև հակամարտության ու պատերազմների պատճառները՝ ցույց տալով դրանց հետևանքները:

— Պարզել հակակիլիկյան ուազմական դաշինքների առաջացման պատճառները, երբ Կիլիկյան Հայաստանը ընդդիմացավ թշնամական շրջապատմանն ու դուրս եկավ գրանից:

Կիլիկյան Հայաստանի և Մերձավոր արևելքի արաբական երկրների փոխարաբերությունների պատմության ուսումնասիրությունը այլ նույնանման աշխատությունների հետ մեկտեղ (նվիրված Հայ-բյուզանդական, Հայ-ասորական, Հայ-լատինական, Հայ-սելջուկյան, Հայ-մոնղոլական և այլ փոխարաբերություններին) հնարավոր կդարձնի ըստեղծել Կիլիկյան Հայաստանի արտաքին հարաբերություններին կամ դիվանագիտությանը նվիրված մի համապարփակ աշխատություն:

*
* *

ԱՂԲՅՈՒԽՆԵՐԻ: Ներկա ուսումնասիրության համար հիմք են ծառայել միջնադարյան տարալեզու սկզբնաղբյուրներ, որոնք տեղեկություններ են հաղորդում Կիլիկյան Հայաստանի և Մերձավոր արևելքի արաբական երկրների միջև

բազմաբնույթ կապերի ու առնչությունների մասին:

Հիշյալ աղբյուրները կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) հայկական, բ) արաբական, գ) ասորական, դ) լատինական և ե) բյուզանդական:

Կիլիկիայում Ռուբինյան իշխանության ստեղծման և նրա պատմության սկզբնական շրջանի վերաբերյալ գրլիավոր աղբյուրներից մեկը Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրութիւնն» է: Պատմիչը դեպքերի շարադրանքը սկսում է 951 թ. և հասցնում մինչև 1137 թ., որից հետո «Ժամանակագրութիւնը» շարունակում է Գրիգոր Երեցը՝ ընդգրկելով այն մինչև 1162 թ.: Մատթեոս Ուոհայեցու երկը անփոխարինելի աղբյուր է ԺԱ դարի վերջին քառորդում Կապաղովկիայում, Կիլիկիայում, Վերին Միջագետքում և Հյուսիսային Սիրիայում առաջացած հայկական իշխանությունների պատմության ուսումնասիրման համար: Ուոհայեցին շարադրում է Փիլարտոսի, Ռուբինյանների, Գող Վասիլի և հայկական առավել փոքր իշխանությունները հարևան պետությունների հետ իրենց ողջ բազմադանությամբ¹:

ԺԲ դարի հայ պատմագրության նշանավոր դեմք Մամուել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» երկում համառոտ հիշատակվում են հայոց պատմության առավել նշանակալից իրադարձությունները հնագույն ժամանակներից մինչև 1179-1180 թթ.: Նա հայ պատմիչներից թերևս միակն է, որ հիշում է Թորոս Բ-ի 1156 թ. արշավանքը ընդեմ Զանգիների ջոկատների:

Մամուել Անեցու երկը շարունակվեց այլ հեղինակների կողմից և հասցվեց մինչև 1665 թ.: Գրքի այդ մասում կամի արժեքավոր վկայություն 1185 թ. սուլթան Սալահ ալ-Դինի և Անտիոքի իշխան Բոհեմոնդի կնքած հաշտության վերջինիս կողմից Ռուբեն Գ-ի ձերբակալության և դրան հաջորդած դեպքերի մասին²:

¹ Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

² Մամուելի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց,

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ հայ պատմիչներից թերևս և ու մեկը շունի այնպիսի հարուստ տեղեկություններ, ինչպես ԺԳ դարի պատմիչ և զորավար Սմբատ Սպարապետը: Պահպանվել է Սմբատի «Տարեգրքի» երկու խմբագրություն՝ համառոտ³ և ընդարձակ⁴: Նրա տեղեկություններն ընդգրկում են 952 թ. մինչև 1272 թ. ընկած ժամանակաշրջանը: Կիլիկիայի և արաբական երկրների փոխհարաբերությունների ուսումնասիրման համար Սըմբատ պատմիշը հաղորդում է ուշագրավ տեղեկություններ, ինչպես օրինակ՝ Մլեհ—Նուր ալ-Դին գաշինքը, թուրքմեն ցեղապետ Ռոստոմի 1187 թ. արշավանքը Կիլիկիա, Հայոց թագավորության և Անտիոքի իշխանության փոխհարաբերությունները ԺԳ դարի առաջին քառորդում և այլն:

Հետաքրքիր են ԺԳ դարի պատմիշ Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները հատկապես Կիլիկիան թագավորության և Հալեպի սուլթանության փոխհարաբերությունների մասին: Նա վառ գույներով է նկարագրում Այցուրյանների նկատմամբ Լեռն Բ թագավորի տարած հաղթանակը 1205-1206 թթ.⁵:

ԺԳ դարի պատմիշ Վարդան Արևելցու աշխատությունը կոչվում է «Պատմութիւն տիեզերական»: Այս երկը թեև այնքան էլ հարուստ չէ անմիջականորեն մեր նյութին վերաբերող տեղեկություններով, սակայն անդրադառնալով խաշակրաց երրորդ արշավանքին, աղբյուրը հաղորդում է այդ արշավանքի նկատմամբ Լեռն Բ թագավորի քաղաքական դիրքորոշման մասին, որն իր հերթին լույս է սփռում Այցուրյան սուլթանության հանդեպ նրա վարած քաղաքականության վրա⁶:

Վաղարշապատ, 1893 (այսուհետև՝ Սամուել Անեցի, Հաւաքմոնք ի դրոց պատմագրաց):

³ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859:

⁴ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, Ս. Ղազար, 1956:

⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961:

⁶ Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոց Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:

Միջնադարյան հայկական սկզբնադրյուրներից օգտագործել ենք նաև Մխիթար Այրիվանեցու⁷, Վահրամ Բարունու⁸ պատմական երկերը և ԺԳ դարի մանր ժամանակագրությունները⁹:

Օգտագործված աղբյուրների մեջ իրենց հարուստութաղմագան տեղեկություններով առանձնանում են արարական պատմական երկերը: Հատկապես աշքի է ընկնում ԺԲ դարի պատմիչ Իրն ալ Կալանիսին: Նրա «Թամասկոսի պատմությունը» հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ԺԲ դարի սկզբին Հյուսիսային Սիրիայում բնակվող հայ բընակչության քաղաքական տրամադրությունների մասին: Իսկ Կիլիկյան Հայաստանին պատմիչը անդրադառնում է բյուզանդական կայսրերի (Հովհաննես Կոմնենոս, Մանուել Կոմնենոս) դեպի Կիլիկիա և Սիրիա կատարած արշավանքների մասին հաղորդելիս միայն¹⁰:

Արարական միջնադարյան պատմագրության նշանավոր դեմքերից է ԺԳ դարի պատմիչ Իրն ալ-Ասիրը: Ինչպես իր «Լիակատար պատմության» (ալ Քամիլ Ֆիլ Տարիխ), այնպես էլ «Մոսուլի աթարեկների պատմության» մեջ նա անդրադառնում է Կիլիկյան հայկական պետության և Մերձավոր արեելքի մի շարք պետությունների (Զանգիների պետություն, Ալյուրյան սուլթանություն, Եղեսիայի կոմսություն, Անտիոքի իշխանություն և այլն) փոխհարաբերություններին:

Ներկա ուսումնասիրության համար Հատկապես արժեքավոր են Իրն ալ-Ասիրի այն տեղեկությունները, որոնք վերաբերում են 1144—1152 թթ. ընթացքում Մոսուլի աթարեկ Իմադ ալ Դին Զանգիի և նրա որդու՝ Նուր ալ Դինի

⁷ Մխիթարայ Այրավանեցոյ Պատմութիմ Հայոց, Մոսկա, 1860:

⁸ Վահրամայ Բարունու Պատմութիմ Ռուբենեանց, Փարիզ, 1859:

⁹ Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., կազմ. Վ. Ա. Հակոբյան, Հ. I—II, Երևան, 1951—1956:

¹⁰ History of Damascus by Ibn al-Qalanisi, ed. by Amedroz, Leyden, 1908.

կողմից Եղեսիայի կոմսության աստիճանական նվաճմանը, Մէհմ Ռուբինյանի և Նուր ալ-Դին Զանգիի միջև ռազմական դաշինքին ու դրա հետևանքներին։ Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի ու Սիրիայի Այյուբյանների փոխարարքությունների պատմության մանրամասների բացահայտման համար ևս արար պատմիչի «Լիակատար պատմությունը» անփոխարինելի աղբյուր է։ Խոկ 1224—1226 թթ. հայոց թագավորության և Անտիոքի իշխանության միջև ռազմական բախման և այդ պայքարին Հալեպի ու Իկոնիայի սովորականությունների մասնակցության վերաբերյալ նրա հաղորդումը եղակի է և չի հանդիպում մեզ հայտնի այլ աղբյուրներում¹¹։

Ոչ պակաս կարևոր աղբյուր է Քամալ ալ-Դին իրն ալ-Ադիմ պատմիչի «Հալեպի պատմությունը»։ Այստեղ հատկապես արժեքավոր են ԺԲ դարի վերջին քառորդին և ԺԳ դարի առաջին տասնամյակին վերաբերող նյութերը։ Իրն ալ-Ադիմի երկը, երկու կարևոր (իրն ալ-Ասիրի «Լիակատար պատմության» հետ միասին) աղբյուրներից մեկը, մանրամասն հաղորդում է Կիլիկյան Հայաստանի և Հալեպի Այյուբյան սովորականության միջև 1203—1206 թթ. եռամյա պատերազմի մասին։ Կարևոր են նրա հետեւյալ հաղորդումները, 1177—1178 թթ. հայկական բանակի մասնակցությունը Հարիմ ամրոցի պաշարմանը, Սալահ ալ-Դինի երկրորդ արշավանքը Կիլիկիա 1188-ին և Լևոն Բ-ի 1208 թ. Եգիպտոսի ալ-Ադիլ սովորանին ուղարկած նամակը¹²։ Չը նայած այն նշանակությանը, որ ունի իրն ալ-Ադիմի «Հալեպի պատմությունը» Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրման համար, այնուամենայնիվ ուսումնասիրողները դրան գրեթե չեն անդրադարձել։ Այս տեղեկությունները զգալիորեն ամբողջացնում են Կիլիկյան Հա-

¹¹ Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, 11։ Արաբական աղբյուրներ, իրն ալ-Ասիր, թարգմ. Ա. Տիր-Ղանգիանի, Երևան, 1981։

¹² Kamal ad-Din Ibn al-Adim, Tarikh al-Halab, Damas, t. III. 1968.

յաստանի արտաքին քաղաքականության պատկերը ԺԲ դարի վերջին քառորդում և ԺԴ դարի առաջին տասնամյակում:

Արաբական մատենագրության նշանավոր հուշարձաններից է Յակուտ ալ-Համազիի (մահ. 1229) «Աշխարհագրական բառարանը», որից օգտագործել ենք «Թալ Բաշիր», «Թաղրաս», «Դայր Բասաք», «Սիս», «Կալաաթ առնում», «Մարաշ», «ալ Մասիսա» և Կիլիկիային վերաբերող այլ հոդվածներ¹³:

Օգտագործված արաբալեզու աղբյուրների մեջ առանձին հիշատակության են արժանի կենսագրական բնույթի երեք երկեր, որոնց հեղինակներն են Բահա ալ-Դին Իբր Շադդադը (մահ. 1234 թ.), Աբու Շաման (մահ. 1267 թ.) և Իբր Խալիֆանը (1211-1282):

Իբր Շադդադի «Այսուբյան Սալահ ալ-Դինի կենսագրության»¹⁴ մեջ հատկապես կարևորվում են հայոց Գրիգոր Դ կաթողիկոսի սուլթան Սալահ ալ-Դինին ուղարկած երկու նամակները, որոնցից առաջինը պատմիչը մեջբերել է ամբողջությամբ: Այս նամակը դիվանագիտական մի փաստաթուղթ է, որը բացահայտում է Կիլիկիայի վերնախավի քաղաքական դիրքորոշումը երկու հզոր՝ խաչակրաց դ արշավանքին մասնակցող բանակի (Կայսր Ֆրիդրիխ Ա Շիկամորուսի գլխավորությամբ) և Սալահ ալ-Դինի դինված ուժերի միջև:

Մյուս կենսագիրը՝ Աբու Շաման իր «Զույգ պարտեղների գրքում» (Քիթաբ ալ Խառըաթայն) պատմում է մահմեդական աշխարհի երկու մեծ տիրակալների՝ Նուր ալ-Դինի և Սալահ ալ-Դինի մասին: Նա արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Նուր ալ-Դինի և Մլեճի զինակցության, ինչպես նաև Սալահ ալ-Դինի գեպի Կիլիկիա կատարած առաջին արշավանքի մասին (1180): Աբու Շամա-

¹³ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965:

¹⁴ Նույն տեղում:

յի երկում ևս հիշատակվում է Գրիգոր Դ-ի Սալահ ալ Դինին ուղարկած վերոհիշյալ նամակը: Պատմիչը նամակը վերաշարադրել է համառոտ և մի փոքր գեղարվեստական ձևով¹⁵:

ԺԴ դարի հեղինակ, ծագումով ասորի, իբն Խալլիթանի «Կենսագրական բառարանը» ծավալուն երկ է, ուր տեղ են գտել մահմեդական աշխարհի առավել հայտնի անձանց կենսագրությունները: Օրինակ Սալահ ալ-Դինի կենսագրության մեջ տեղեկություններ կան Կիլիկյան Հայաստանի, Սալահ ալ Դինի տեղության և Իկոնիայի սովորականության միջև փոխհարաբերությունների մասին¹⁶:

Ուրեմն Դ-ի իշխանության վերջին տարիների պատմության ուսումնասիրման համար որոշակի է արաբալեզու պատմիչ, ծագումով հայ Արու Սալիհ ալ-Արմանիի փոքրածավալ երկի դերը¹⁷:

Արաբագիր պատմիչների մեջ ավելի փոքրաթիվ են ԺԴ դարի հեղինակները: Դրանցից է ալ-Զահարին, որի «Դիրք մահմեդական պետությունների մասին» երկում կան համառոտ, բայց բավական արժեքավոր հաղորդումներ ԺԲ-ԺԴ դարերի Կիլիկիայի և Հարեան երկրների պատմության վերաբերյալ: Ուշագրավ է պատմիչի գնահատականը՝ տրված Մլեհ իշխանապետի և Հալեպի սովորական նուր ալ-Դինի դաշինքին: Ալ-Զահարին անդրադառնում է նաև Եգիպտոսի և Սիրիայի Այցությանների դեմ Կիլիկյան Հայաստանի մղած կոփվներին ԺԲ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին¹⁸:

Ուշագրության են արժանի ալ-Զահարիին ժամանակակից պատմիչ Արու Ֆիդայի (1273-1331) «Ժամանակագրության» մեջ տեղ գտած նյութերը, մասնավորապես

¹⁵ Abu Shama, Kitab al-Raudatayn fi achbar ad-daulatayn, Beyrouth, 1974.

¹⁶ Ibn Khallikan, Biographical Dictionary, v. III, New York & London, 1868.

¹⁷ Արու Սահլ Հայ.— Պատմութիւն եկեղեցեաց և վանորէից Եգիպտոսի. Վինետիկ. 1895:

¹⁸ Al-Dahabi, Kitab duwal al-Islam, Damas, 1979.

այնպիսիները, որոնք վերաբերում են 1180 թ. Սալահ ալ-Դինի կիլիկիա կատարած արշավանքին, 1208 թ. Հալեպի և Իկոնիայի սուլթանությունների միջև հաստատված հակակիլիկյան դաշինքին և այլն¹⁹:

Ժե դարի արաբագիր պատմիչներից անհրաժեշտ է հիշատակել իրն ալ Ֆուրաթին, որն իր «Պատմության» մեջ զետեղել է Գրիգոր Դի նամակը Սալահ ալ-Դինին: Այն գրեթե շի տարբերվում իրն Շադդադի երկում հանդիպող օրինակից: Հավանաբար հենց նրա երկից էլ օգտվել է իրն ալ Ֆուրաթը²⁰:

Աշխատության մեջ օգտագործված են նաև այլ արաբ մատենագիրների՝ Ուսամա իրն Մունկիղի²¹ (1095—1188), ալ-Իդրիսիի²² (1100—1165), իրն ալ-Վարդի²³ (մահ. 1457), Թաղրիբիրգիի²⁴ (մահ. 1469) երկերը, որոնք նույնպես մեզ հետաքրքրող նյութի վերաբերյալ կարեռություն ունեն:

Հավատի և հարուստ տեղեկություններով աշքի են ընկնում ասորագիր պատմիչների (Անանուն եղեսացի, Միքայել Ասորի, Բար Հերբեոս) երկերը: Նրանք (հատկապես վերջին երկուսը) մանրամասն շարադրում են կիլիկյան Հայաստանի քաղաքական առնչությունները Մերձավոր արեւլելքի երկրների հետ, որոնք նպաստում են ԺԵ դարի երկրորդ կեսի և ԺԴ դարի առաջին քառորդի իրադարձությունների լուսաբանմանը:

Անտիոքի Հակոբիկ եկեղեցու պատրիարք Միքայել Ասորին ԺԵ դարի պատմիլ է, որի «Ժամանակագրությունը» միջնադարյան պատմագրության նշանավոր հուշարձաններից է: Ծովափնյան իշխանապետության մասին նրա հաղորդած Հարուստ տեղեկությունների մեջ հատկապես մեծ արժեք

¹⁹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965:

²⁰ Tarikh ibn al-Furat, Basra, 1967.

²¹ Սումա իբն Մունկիզ, Книга назидания, Москва, 1958.

²² Al-Idrisi, Opus Geographicum, Neapoli—Rome, 1976.

²³ Ibn al-Wardi, t. II.

²⁴ Ibn Taghibirdi, An-nugum az-Zahira fi muluk Misr-u-al-Kahira, al-Kahira, 1938.

ունեն Թորոս թ իշխանապետի (1145-1169) և Նուր ալ Դին Զանգիի փոխհարաբերություններին, Այցուբյան տերության և նրա հյուսիսային հարևանների միջև բարդ անցուդարձերին վերաբերող հաղորդումները²⁵:

Անանուն Եղեսացու «Ժամանակագրությունը», ի շարս այլ տեղեկությունների, հաղորդում է 1164 թ. Հարիմի ճակատամարտում հայերի բռնած դիրքի մասին՝ ճշգրտումներ մտցնելով Ռուբինյանների արտաքին քաղաքականության փոփոխությունների բացահայտման մեջ։ Հեղինակը իր երկով ամբողջացնում է նաև 1208-1209 թթ. Կիլիկյան Հայաստանի և Այցուբյան սուլթանության միջև եղած կապերի մասին հաղորդումները²⁶:

ԺԴ դարի ասորի պատմիչ Գրիգորիոս Աբով Ֆարազ Բար Հերբեռոսի «Ժամանակագրությունը» հայտնի է նաև իր իսկ կողմից կազմած արաբերեն համառոտ խմբագրությամբ²⁷. Բար Հերբեռոսը լայնորեն օգտվել է Միքայել Ասորու երկից և հաճախ բառ առ բառ կրկնում է նրան, սակայն ԺԲ դարին անդրադառնալիս նա ինքնուրույն է, և հենց այդ տեղեկություններն են, որ առավել արժեքավորվում են։ Նա հաղորդում է Սալահ ալ-Դինի դեպի Կիլիկիա և հարևան երկրներ կատարած արշավանքների ու կնքած հաշտությունների, 1187 թ. թուրքմեն ցեղապետ Ռոստոմի արշավանքի, 1193 թ. Լևոն Բ-ի կողմից Բաղրամի գրավման մանրամասների և այլ դեպքերի մասին։ Բար Հերբեռոսը մանրակրկիտ նկարագրում է նաև Լևոն Բ-ի մահից հետո Կիլիկիայում տիրող քաղաքական իրավիճակը և Ռուբեն-Ռայմունդի հայոց գահին տիրելու ապարդյուն փորձերը²⁸:

²⁵ Chronique de Michel le Syrien, t. 111, Bruxelles, 1963.

²⁶ Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, թարգմ. և. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982.

²⁷ Ibn al-Ibrī, Tarikh Mukhtasar ad-Duwal, Beyrouth, 1890.

²⁸ The Chronography of Bar Hebraeus, Gregory Abu-l Faraj, tr. Budge, Amsterdam, 1976.

ԺԲ-ԺԳ դարերի լատինագիր հեղինակների մեջ առանձին հիշատակության է արժանի Գիյոմ Տյուրացին, որի պատմական երկը՝ «Պատմություն անդրծովյան եղելությունների», խաչակրաց արշավանքների շրջանի պատմության գլխավոր աղբյուրներից մեկն է: Գրքում հարուստ տեղեկություններ կան հայերի ու խաչակիրների փոխհարաբերությունների մասին, սակայն մեզ համար առավել կարեվոր են պատմիչի հաղորդումները նուր ալ-Դինի պետության հետ Կիլիկյան Հայաստանի ունեցած քաղաքական առնչությունների վերաբերյալ: Տյուրացին թերևս միակ պատմիչն է, որ հիշատակում է 1157-1158 թթ. հայկական զորքի՝ Սիրիայի Շեյղար ամրոցի գրավմանը ունեցած մասնակցության մասին²⁹:

Արժեքավոր աղբյուր է էռնովի և գանձապահ Բեռնարի (ԺԳ դ.) «Ժամանակագրությունը»: Մեր նյութի համար կարեոր է երկի այն մասը, որը գրված է էռնովի կողմից (1099-1229): Այն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Կիլիկյան Հայաստանի և երուաղեմի թագավորության փոխհարաբերությունների մասին³⁰:

ԺԲ-ԺԳ դարերի լատինագիր այլ հեղինակներից ուսումնասիրության մեջ օգտագործել ենք Ֆուլքերիուս Շարտըցու³¹, Ալբերտ Աքվինացու³², Բրոկարդուսի³³ երկերը:

ԺԲ դարում Ռուբինյան իշխանապետության արտաքին քաղաքականության մասին ուշագրավ տեղեկություններ ունեն նաև բյուզանդացի պատմիչները, հատկապես երկուս՝

²⁹ A History of Deeds done beyond the Sea, by William Archibishop of Tyre, tr. by E. A. Babcock and A. C. Krey, New York, 1943.

³⁰ Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, Paris, 1872.

³¹ Fulcher of Chartres, Chronicle of the First Crusade, tr. by McGinty, London, 1941.

³² Gesta Dei per Francos, t. I, Hanoviae, 1611.

³³ Recueil des Historiens des Croisades. Documents arméniens, t. II, Paris, 1869.

Հովհաննես Կինամոսը³⁴ և Նիկետաս Խոնիատեսը³⁵:

Բացի վերօհիշյալ պատմական ու աշխարհագրական բնույթի երկերից, օգտագործել ենք նաև մի ուղեգրություն՝ ԺԳ դարի հեղինակ Վիլերանտ Օլդենբուրգցու «Ճանապարհորդությունը»³⁶:

Կիլիկյան Հայաստանի արտաքին հարաբերությունների պատմության համար կարևոր նշանակություն ունի նաև նամակագրությունը: ԺԳ դարի սկզբին հայոց թագավորության և Սիրիայի միջև կապերի լուսաբանմանը մեծապես օգնում է Հռոմի պապերի և հայ աշխարհիկ ու հոգևոր պետերի միջև նամակագրությունը, որը սկսվում է 1199 թվականից: Իննոկենտիոս Դ պապի (1198—1216) և Լևոն Բ թագավորի (1187—1219) թղթակցությունը արժեքավոր է թե՛ ժամանակի քաղաքական անցքերի լուսաբանման տեսակետից և թե՛ որպես դիվանագիտական փաստաթուղթ՝³⁷:

Նոր ժամանակներում՝ հայ գիտական պատմագրության սկզբնավորման ժամանակ արդեն, Կիլիկյան Հայաստանի պատմությունը ուշադրության է արժանացել ուսումնասիրողների կողմից: Հայ նոր պատմագրության հիմնագիր Միքայել Զամշանցը Վենետիկում 1784—1786 թթ. հրատարակեց իր եռահատոր «Հայոց Պատմությունը», որը հայ ժողովրդի պատմության առաջին ամբողջական շարադրանքն էր հնագույն ժամանակներից մինչև 1784 թ.: Այս աշխատության Դ հատորի մի զգալի մասը կազմում է Խուրինյանների պետության պատմությունը: Իր աշխատության այս մասում Զամշանցը լայնորեն օգտագործել է ինչպես հայ, այնպես

³⁴ Recueil des Historiens des Croisades, Historiens Grecs, Cinnamus, t. I, Paris, 1875.

³⁵ Никиты Хониата, История, т. 1—2, С.-Петербург, 1860.

³⁶ Wilbrandi de Oldenborg, Peregrinatio, in Peregrinatores medii aevi quatuor, Lipsiae, 1863.

³⁷ Pontificia commisio ad redigendum codicem iuris canonici orientalis, fontes, series III, vol. II. Acta Innocentii p. 111 (1198—1216), Vatican, 1944.

էլ ասորի, լատին և բյուզանդացի պատմիչների հաղորդումները Կիլիկիայի վերաբերյալ³⁸:

ԺԹ դարի կեսերից Կիլիկիայի պատմության հարցերով լրջորեն սկսեցին զբաղվել նաև եվրոպացի գիտնականները: Ֆրանսիացի նշանավոր արևելագետ Վիկտոր Լանգլուան Կիլիկիային նվիրված մի քանի աշխատություններ հրատարակեց³⁹, որով, փաստորեն, գիտական հիմքերի վրա դրեց Կիլիկիայի պատմության ուսումնասիրությունը:

Գրեթե նույն տարիներին Կիլիկիայի հայկական պետության պատմությանը նվիրված ուսումնասիրությամբ հանդես եկավ մեկ այլ ֆրանսիացի գիտնական՝ Էդ. Դյուլորիեն⁴⁰:

Հայ ուսումնասիրողներից առաջինը Կիլիկիան Հայաստանին հատուկ աշխատություն նվիրեց Դ. Ալիշանը: Դիրքը հրատարակվեց 1885 թ.⁴¹: Ալիշանը ինչպես իր այլ ուսումնասիրություններում, այնպես էլ «Սիսուանում» օգտագործել է աղբյուրագիտական հսկայական նյութ, մանրամասն շարադրելով ոչ միայն Լոռն Բ-ի ժամանակաշրջանի (որը հեղինակի գլխավոր նպատակն էր), այլև Կիլիկիան հայկական պետության պատմությունը հիմնադրումից մինչև 1226 թվականը և Կիլիկիայի աշխարհագրությունը՝ այդ ամենը կատարելով իր ժամանակի համար բարձր մակարդակով: Ալիշանի այս կոթողային գործում, դժբախտաբար, ոչ բոլոր աղբյուրներն են նշվում: Դրանով իսկ շատ հետաքրքիր մտքեր մնում են որպես ենթադրություններ:

Ալիշանի «Սիսուանից» հետո, երկար ժամանակ, Կիլիկիային նվիրված հատուկ աշխատություն լույս շտամավ,

³⁸ Մ. Զամշանց, Պատմություն Հայոց, հ. 3, Երևան, 1984:

³⁹ V. Langlois, Numismatique de l'Arménie au moyen âge, Paris, 1855; Essai historique et critique sur la constitution social et politique de l'Arménie, Paris, 1860; Le voyage dans la Cilicie, Paris, 1861; Le trésor des chartes d'Arménie, Venise, 1863.

⁴⁰ Dularier, Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite Arménie, Journal Asiatique, 1861, 5 ème série, t. XVII, XVIII.

⁴¹ Դ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885:

թեև Ֆ. Տուրնեբիզի «Հայաստանի քաղաքական և կրոնական պատմությունը»⁴² և Մազաքիա Օրմանյանի «Ազգապատմություններում մեծ տեղ էր հատկացված Կիլիկիայի պատմությանը»:

Միայն մեր դարի 20-30-ական թթ. հայկական այս պետության մասին հողվածներով ու գրեթեով հանդես եկան Ֆ. Մակլերը⁴³, Ժ. Լորանը⁴⁴, Ն. Յորգանը⁴⁵, Ա. Ալպոյանը⁴⁶ և ուրիշներ:

Խաչակրաց արշավանքների պատմությամբ զբաղվող մի շարք նշանավոր արևելագետներ բազմակողմանի անդրադարձել են Կիլիկիայի պատմությանը, երբեմն նույնիսկ ամբողջ գլուխներ հատկացնելով դրան: Օրինակ, Ռ. Գրուստիսի հուահատոր հիմնարար աշխատությունը⁴⁸, Կ. Կայենի Հյուսիսային Սիրիայի պատմությանը նվիրված աշխատությունը⁴⁹, Կ. Սեթոնի խմբագրությամբ հրատարակված աշխատությունը⁵⁰, Ս. Ռանսիմենի «Խաչակրաց արշավանքների պատմությունը»⁵¹ և այլն:

Ներկա աշխատության համար մշտական ուղեցույց է եղել Գ. Միքայելյանի ուսումնասիրությունը, որը կարեվոր քայլ էր Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության մեջ: Աշխատությունը ընդգրկում է ոչ միայն Կիլիկիայի հայկական պետության ողջ երեքհարյուրամյա պատմությունը (ժԱ.-ԺԴ դարեր), այլև նախորդող ու հա-

⁴² F. Tournebize, *Histoire politique et religieuse de l'Arménie*, P. 1900.

⁴³ Մ. Օրմանյան, *Ազգապատմություններում հայության պատմությունը*, 1913—1914:

⁴⁴ F. Macler, *Armenia*, in: *The Cambridge Medieval History*, Cambridge, 1923.

⁴⁵ J. Laurent, *Les Croisés et l'Arménie*, Handes Amsorea, 1927; *Etudes d'Histoire Arménienne*, Louvain, 1971.

⁴⁶ N. Iorga, *L'Arménie Cilicienne*, Paris, 1930.

⁴⁷ Ա. Ալպոյանեան, *Պատմություն հայ Կեսարիով, Գահիրէ*, 1937:

⁴⁸ R. Grousset, *Histoire des Croisades*, t. 1—111, Paris, 1934—1935.

⁴⁹ C. Cahen, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940.

⁵⁰ K. Setton (ed.), *A History of the Crusades*. Philadelphia, 1962.

⁵¹ S. Runciman, *A History of the Crusades*, v. I—III, London, 1965.

չորդող պատմության համառոտ շարադրանքը մինչև ի դարի 20-ական թթ.: Գրքում տրվում է Կիլիկիայի թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ մշակությային կյանքի պատմությունը իր ողջ բազմազանությամբ: Գ. Միքայելյանի այս հիմնարար աշխատությունը այսօր էլ Կիլիկյան Հայաստանին վերաբերող գիտականորեն շարադրված ուսումնասիրությունների մեջ ամենաընդգրկունն ու արժեքավորն է⁵²:

Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի բազմաթիվ հարցեր է լուսաբանում Ս. Բոռնազյանի աշխատությունը⁵³: Նա հեղինակն է նաև Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված բաժնի՝ Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ (Կիլիկյան պետության պատմությունը կազմավորման շրջանից մինչև Լեռն Բ.-ի մահը՝ 1219 թ. շարադրել է Մ. Զուլալյանը՝ հիմք ունենալով Գ. Միքայելյանի վերոհիշյալ գործի համապատասխան մասերը)⁵⁴:

Վերջին 20-30 տարում Կիլիկիայի պատմության տարբեր հարցերին անդրադարձել են թե՛ հայ և թե՛ օտար մի շարք գիտնականներ՝ Ա. Գալստյանը⁵⁵, Ա. Սուբիասյանը⁵⁶, Վ. Ռուդտ-Կոլենբերգը⁵⁷, Զ. Պտուկյանը⁵⁸, Հ. Ոսկյանը,⁵⁹ Մ.

⁵² Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952.

⁵³ Ս. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973:

⁵⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1975:

⁵⁵ Ա. Գալստյան, Մերատ Սպարապետ, Երևան, 1961:

⁵⁶ Ա. Սուբիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978:

⁵⁷ W. Rüdt-Collenberg, The Rupenids, Hethumids and Lusignans, Paris, 1963.

⁵⁸ Bedoukian Paul Z., Colingage of Cilician Armenia, New York, 1962.

⁵⁹ Հ. Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957:

Հովհաննեսյանը⁶⁰, Ե. Քասունին⁶¹, Տ. Բոեյզը⁶², Կ. Յարնլին⁶³, Ա. Բողոյանը⁶⁴, Կ. Մութաֆյանը⁶⁵ և ուրիշներ:

Հիշյալ ուսումնասիրողներից հիշատակության է արժանի սփյուռքահայ պատմաբան Երվանդ Քասունին, որը հեղինակ է երկու մենագրությունների և մի շարք հոդվածների: Դրանցից մեկում՝ «Ռուբեն Գ (1175—1187) և իր կտակը», Քասունին, ի շարս այլ հարցերի, քննարկում է նաև Կիլիկյան Հայաստանի և Այցուբյան սովորական փոխհարաբերությունները Ռուբեն Գ-ի իշխանության օրոք:

Բացի վերոհիշյալ աշխատություններից, ներկա աշխատության մեջ օգտագործվել են նաև Սիրիայի, Իրաքի, Եգիպտոսի, Պաղեստինի և արարական այլ երկրների պատմությանը վերաբերող մի շարք կարևոր ուսումնասիրություններ, ինչպես օրինակ՝ Ն. Ելիսեևի «Նուր ալ Դին» եռահատոր աշխատությունը⁶⁶, Ս. Լեյն-Փուլի «Եգիպտոսի միջնդարի պատմությունը»⁶⁷, Վ. Հեյդի երկհատոր «Լեռնայան առևտորի պատմությունը»⁶⁸, Կ. Բոսվորտի «Մահմեդական Հարստությունները»⁶⁹, Ֆ. Հիթթիի «Սիրիայի պատմությու-

⁶⁰ Մ. Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970:

⁶¹ Ե. Քասունի, Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի բաղարական հոլովոյթին մէջ (1080—1137), Պեյրութ, 1974, նույնի Ռուբեն Գ (1175—1187) և իր կտակը, Պեյրութ, 1987:

⁶² T. Boase, The Cilician Kingdom of Armenia, London, 1978.

⁶³ C. J. Yarnley, Philaretos, armenian bandit or byzantin general? «Revue des Etudes Arméniennes», 2, Paris, 1972, pp. 331—353.

⁶⁴ Ա. Բողոյան, Բյուզանդիայի արևելյան բաղարականությունը և Կիլիկյան Հայաստանը մի դարի 30—70-ական թվականներին, Երևան, 1988:

⁶⁵ C. Mutafian, La Cilicie au carrefour des empires, Paris, 1988, t I—II.

⁶⁶ N. Elisseeff, Nur ad Din, v. 1—111, Damas, 1967.

⁶⁷ S. Lane-Poole, History of Egypt in the Middle Ages, London, 1900.

⁶⁸ W. Heyd, Histoire du Commerce du Levant au moyen âge, t. I—II., Leipzig, 1886.

⁶⁹ K. Босворт, Мусульманские династии, М., 1971.

նը»⁷⁰, ինչպես նաև մի շարք Հոդվածներ Իսլամի հանրագիտարանից (Աբբասյաններ, Ալյուրյաններ, Արտուրյաններ, Դանիջմանյաններ)՝⁷¹:

Օգտագործվել են նաև խաչակիր պետություններին, Բյուզանդական կայսրությանը և Իկոնիայի սուլթանության պատմությանը նվիրված աշխատություններ։ Դրանցից են, օրինակ, Մ. Զարորովի գրքերը խաչակիրների մասին⁷², «Բյուզանդիայի պատմություն» եռահատոր կողեկտիվ աշխատությունը⁷³, Ա. Վասիլկի «Բյուզանդական կայսրության պատմությունը»⁷⁴, Վ. Դորդկանկու «Փոքր Ասիայի սելջուկների պատմությունը»⁷⁵, Վ. Պ. Ստեփանենկոյի⁷⁶ և Ա. Սավիդեսի⁷⁷ մենագրությունները։

⁷⁰ Ph. Hitti, History of Syria including Lebanon and Palestine, London, 1951.

⁷¹ Encyclopaedia of Islam.

⁷² М. Заборов, Введение в историографию крестовых походов (латинская хронография XI—XIII вв.), М., 1966; Историография крестовых походов (литература XV—XIX вв.), М., 1971; История крестовых походов в документах и материалах, М., 1977; Крестоносцы на Востоке, М., 1980.

⁷³ История Византии в трех томах, М., 1967.

⁷⁴ A. Vasiliev, History of Byzantine Empire, Madison, 1952.

⁷⁵ В. А. Гордлевский, Государство сельджукидов Малой Азии, М.—Л., 1941.

⁷⁶ В. П. Степаненко, Византия в международных отношениях на Ближнем Востоке (1071—1176), Свердловск, 1988.

⁷⁷ A. G. Savvides, Byzantium in the Near East: its relations with the Seljuk sultanate of Rum in Asia Minor, the Armenians of Cilicia and the Mongols A. D. c. 1192—1237, Thessalonike, 1981.

ԿԻԼԻԿԻԱՆ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐԱԲԱԿԱՆ
ԵՐԿՐՈՆԵՐԸ ԺԱ-ԺԹ ԴԱՐԻ Ա. ԿԵՍԻՆ

Ներկա ուսումնասիրության նյութի վերաբերյալ առավել լիարժեք պատկերացում կազմելու համար պետք է համառոտ անդրադառնալ այն հանգամանքներին, որոնց առկայությամբ Կիլիկիայում հաստատվեց հոծ հայկական բնակչություն և առաջացան հայկական իշխանություններ: Կիսովի նաև Մերձավոր արևելքի ընդհանուր քաղաքական իրավիճակի մասին ժԲ դարի 40-ական թվականներին, ինչպես նաև Խուրինյան իշխանապետության փոխարարերությունների մասին հարեան արաբական երկրների հետ՝ իշխանապետության գոյության առաջին փուլում (1080—1137):

Ժ-ԺԱ դարերում՝ նախքան սելջուկյան ներխուժումը, երբ Կիլիկիան բյուզանդական նահանգ էր, նրա բնակչությունը բաղկացած էր հույներից և ասորիներից, մասմբ՝ հայերից ու արաբներից:

Ժ-ԺԱ դարերի ընթացքում Բյուզանդական կայսրությունը՝ վարելով ագրեսիվ արտաքին քաղաքականություն, նրավաճեց գրեթե ողջ Հայաստանը և վերացրեց հայկական թագավորություններն ու իշխանությունները (967 թվականին՝ Տարոնի թագրատունիների իշխանությունը, 1000 թվականին՝ Տայքի կյուրապաղատությունը, 1021-ին՝ Վասպուրականի Արծրունիների թագավորությունը, 1045-ին՝ Անիի թագրատունիների, իսկ 1065-ին՝ Վանանդի կամ Կարսի թագրատունիների թագավորությունները:

Կորցնելով պետականությունը և անպաշտպան մնալով
ընդգեմ սելջուկյան ամայացնող արշավանքների, որոշ հայ
իշխաններ՝ իրենց գավառների բնակչության մի մասի հետ
միասին տեղափոխվեցին ու հաստավվեցին կայսրության
առավել անվտանգ նահանգները՝ Կապադովկիա, Փոքր Հայ-
քի տարբեր մասերը, Եփրատացիք, Վերին Միջազգետք և
Հյուսիսային Սիրիա:

ԺԱ. դարի 40-50-ական թվականներն, երբ սկսվեցին
սելջուկյան արշավանքները, և հատկապես կայսրության
համար կործանարար Մանազկերտի 1071 թվականի ճա-
կատամարտից հետո, հայերի արտագաղթը Մեծ Հայքից
դեպի արևմուտք և հարավ-արևմուտք զանգվածային բը-
նուլթ ստացավ: Դրա հետևանքով Մեկ հարյուրամյակի ըն-
թացքում կտրուկ աճեց հայության թիվը Մեծ Հայքից ա-
րևմուտք և հարավ-արևմուտք ընկած տարածքներում, իսկ
որոշ երկրամասերում (Կիլիկիա, Եփրատացիք) ժԱ. դարի
վերջին երեսնամյակում հայերը դարձան հիմնական ազգա-
յին տարրը: Միևնույն ժամանակ Կապադովկիայում, Կի-
լիկիայում, Եփրատացիքում և հարեւան մարզերում առա-
ջացան ոչ մեծ հայկական իշխանություններ, որոնք հետա-
գայում դարձան հայոց պետականության վերականգնման
հիմքը:

Հիշյալ հայաբնակ շրջանները միավորելու առաջին
փորձը կատարեց բյուզանդական զորավար՝ հայազգի Փի-
լարտոս Վարաժնունին, 1071 թ. Մանազկերտի ճակատա-
մարտից անմիջապես հետո: Օգտվելով բարենպաստ քաղա-
քական իրավիճակից, կապված բյուզանդական բանակի նա-
հանցի և սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանի սպանության
(1072) հետ, Փիլարտոսը ստեղծեց իր իշխանությունը՝ Մա-
րաշ կենտրոնով և 15 տարվա ընթացքում (1071-1086) խո-
շընդոտեց սելջուկների ներխուժումը Կիլիկիա և հարեւան
մարզեր: 80-ական թվականներին նրա տիրույթները ըն-
դարձակվել էին՝ ընդգրկելով Կիլիկիայի մեծ մասը, Քե-
սուն, Ալբուտան, Մելիտենե, Անտիոք, Եղեսիա և այլ քա-
ղաքները՝ իրենց շրջակա գավառներով:

Փիլարտոսի իշխանությունը ձգվում էր Հայկական լեռ-
նաշխարհի հարավարևմտյան սահմաններից մինչև Մի-
ջերկրական ծով՝ հանդիսանալով մի տեսակ միջանկյալ
իշխանապետություն Բյուզանդական կայսրության և սել-
ջուկյան տերության միջև:

Վերջնականապես ճշտված չէ, թե որ տոհմից էր Փի-
լարտոսը: Միքայել Զամշանցի ենթադրությամբ նա Վա-
րաժնունիների տոհմից էր: Այս տեսակետը ընդունված է հա-
յագիտության մեջ:

ԺԱ դարի 70-ական թվականներին սելջուկները հար-
վածն ուղղեցին իրենց գլխավոր հակառակորդներից մեկի՝
Ֆաթիմյան խալիֆայության դեմ, որի տիրույթները հաս-
նում էին մինչև Կենտրոնական Սիրիա: Սկզբում սելջուկ-
ները որոշ հաջողություն ունեցան և հասան մինչև Երուսա-
ղեմ: Սակայն Եգիպտական բանակը վեզիր Բաղր ալ-Գա-
մալիի (ծագումով Հայ) զիխավորությամբ կարողացավ կանգ-
նեցնել նրանց առաջիսաղացումը:

ԺԱ դարի 80-ական թվականների սկզբին Փիլարտոս
Վարաժնունու տիրույթների մեջ գրեթե միաժամանակ առա-
ջացան երկու փոքր իշխանություններ: 1080 թ. Ռուբեն իշ-
խանը հիմնեց իր իշխանությունը Լեռնային Կիլիկիայում՝
Բարձրերդ, Կոպիտառ և Կոռոմողու անմատչելի ամրոց-
ների շրջանում:

Սելջուկները, բնականարար, չէին կարող թույլ տալ,
որ տերության գրեթե կենտրոնում գոյատեներ Փիլարտո-
սի իշխանությունը կամ՝ ավելի ճիշտ, իշխանությունների
միությունը: Հայկառակ Փիլարտոսի իշխանությունը փրկելու
բոլոր փորձերին, 1086 թվականին այն դադարեց գոյու-
թյուն ունենալուց: Այդ տարածքի մեծ մասի վրա սելջուկ-
ները հաստատեցին իրենց տիրապետությունը:

Հայկական բազմաթիվ մանր իշխանություններից, ո-
րոնք ստեղծվել էին հիմնականում 1071 թ. Հետո, ԺԱ դա-
րի 80-ականների վերջին շարունակում էին գոյատենել միայն
մի քանիսը (այդ թվում՝ Ռուբինյան և Գող Վասիլի իշխա-

նությունները): Վերջիններիս նույնպիս վախճան էր սպասում, ինչպես և Փիլարտոսի իշխանությանը, եթե գրան ըրխանգարեր երկու հանգամանք: Առաջինը՝ Մելիք Շահի և նրա վեցիր նիզամ ալ Մուլքի մահից հետո (երկուսն էլ մահ. 1092 թ.) սելջուկյան տերությունը փաստորեն տրոհվեց մի քանի պետությունների: Շուտով նրանց միջև պատերազմ սկսվեց, որտեղ հաղթանակեց Մելիք Շահի որդին՝ Բարքիյարուքը (1093-1104): Զնայած նա համարվում էր մեծ սովորական, սակայն նրա իշխանությունը ձևական էր ինչպես Հայաստանում ու Ատրպատականում (որտեղ իշխում էր նրա եղբայր Մուհամմադը), այնպես էլ Սիրիայում, որտեղ իշխանության համար պայքարում էին Բարքիյարուքի հորեղբորորդիները: Այդ նույն ժամանակ Եգիպտոսի Ֆաթիմյանները, օգտվելով սելջուկների թուլացումից, հետ գրավեցին Պաղեստինը:

Երկրորդ հանգամանքը, որ նպաստեց Հայկական իշխանությունների գոյատևմանը, խաչակրաց առաջին արշավանքն էր՝ 1096-1099 թվականներին: Այն ավելի խճճեց Մերձավոր արևելքի առանց այն էլ բարդ ու անկայուն քաղաքական իրավիճակը: Խաչակրաց արշավանքը ուժեղ հարված հասցրեց հատկապես փոքրասիհական սելջուկներին, դրանով իսկ անուղղակիորեն նպաստելով Ծուրբինյան իշխանության ամրապնդմանը Լեռնային Կիլիկիայում:

Հայ իշխանները ԺԱ դարի վերջին ստեղծված քաղաքական իրադրության մեջ չէին կարող հույս գնել Բյուզանդիայի ռազմական օգնության վրա, քանի որ վերջինս ծանր վիճակի մեջ էր: Իսկ սելջուկների ճնշումը թեև թուլացել էր, բայց, միենույն է, կարող էր կործանարար լինել փոքր և դեռ շամրապնդված Հայկական իշխանությունների համար: Այդ դեպքում Կիլիկիայի և Հարեւան դավաների Հայ բընակչությունը լիովին կկորցներ քաղաքական ինքնուրուցնություն ձեռք բերելու հեռանկարը:

Հետեւարար զարմանալի չէ, որ Հայ իշխանները ուրախությամբ դիմավորեցին խաչակրաց առաջին արշավանքի

մասնակիցներին և նրանց բազմակողմանի օգնություն ցույց տվեցին: Այստեղ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ արևելյան քրիստոնյաները խաչակիրներին դիտում էին որպես հավատակիցներ, որոնք Արևելք են եկել հանուն Տիրոջ գերեզմանի ազատագրության:

Ընդհանուր առմամբ խաչակրաց առաջին արշավանքի հետությամբ հաջողության հասնելը պայմանավորված էր առաջին հերթին մերձավորարևելյան երկրների խիստ մասնատվածությամբ:

Նիկիայի և Դորիեռումի ճակատամարտերում ջախջախելով փոքրասիական սելջուկներին, խաչակիրները մոտեցան Տավրոսյան լեռնաշղթային և «Դրուանք Կիլիկիո»-ից մտան Կիլիկիա: Կոստանդին Ռուբինյանը (որը հաջորդեց Ռուբենին), Բաղունի և Օշին իշխանները պարեն էին մատակարարում խաչակիրներին, օգնում էին նաև Սև լեռան (Ամանոսյան լեռներ) վանքերով¹:

Կիլիկիա մտնելով երկու ուղղությամբ՝ Տարսոնով և Մարաշով, խաչակիրները շարժվեցին դեպի Անտիոք և սահշարեցին այն: Սակայն խաչակիրների մի ջոկատ Բալգուենի զլխավորությամբ՝ անջատվելով հիմնական ուժից, ուղղվեց դեպի արևելք՝ եղեսիա քաղաքը: Այստեղ իշխում էր Հայաղպի Թորոս իշխանը, որը բարեկամաբար ընդունեց խաչակիր իշխանին և մինչև իսկ որդեգրեց նրան: Վերջինս, ամրապնդելով իր դիրքերը քաղաքում, կապեր հաստատեց եղեսիայի հայ վերնախավի հետ, որը թշնամաբար էր տրամադրված Թորոսի նկատմամբ, մասնակցեց վերջինիս դեմ կազմակերպված դավագրությանը: Թորոս իշխանը սպանվեց, իշխանությունն անցավ Բալգուինին, որը, իր շուրջը հավաքելով ֆրանկ ասպետների, դարձավ եղեսիայի կոմսության հիմնադիրը (1098):

Սա առաջին ֆրանկ պետությունն էր Արևելքում: Այս և հետագա իրադարձությունները ի հայտ բերեցին խա-

¹ Մատրես Ուսհայեցի, Ժամանակագրություն, էջ 259:

շակիրների բուն նպատակները՝ երկրներ գրավելը և տեղական ժողովուրդներին հարստահարելը:

1099 թ. իննամսյա պաշարումից հետո խաչակիրները գրավեցին նաև Անտիոքը: Պաշարման ժամանակ խաչակիրներին զգալի օգնություն ցույց տվեցին Հայերը: Պատմիչների վկայությամբ, Անտիոքը գրավվեց այն բանից հետո, երբ դավաճանեցին երկու աշտարակների հրամանատարները՝ Ֆիրուզ անունով մի հայ² (իսկ բատ այլ աղբյուրների՝ թուրք)³, իսկ Անտիոքի տիրակալ Բաղի Սիյանը (Յաղի Սիյան) նույնպես սպանվեց հայի կողմից: Հստ Գիյոմ Տյուրացու, հայերը վճռական դեր խաղացին նաև խաչակիրների կողմից Հարիմի շրջանի (Անտիոքից ոչ հեռու) նվաճման ընթացքում⁴:

Շարունակելով առաջխաղացումը, նույն՝ 1099 թվականին, խաչակիրները գրավեցին Երուաղեմը և Հիմնեցին Երուաղեմի թագավորությունը, որից էլ ձևական կախման մեջ էին Եղեսիայի կոմսությունը (1099), իսկ հետագայում՝ 1109 թվականից նաև Տրիպոլիսի կոմսությունը: Սրանցից Եղեսիայի կոմսությունը և Անտիոքի իշխանությունը Կիլիկյան Հայաստանի անմիջական հարեւաններն էին և երկար ժամանակ տիրապետող դիրքեր ունեին Պաշտային Կիլիկիայում ու Եփրատացիքում:

Խաչակրաց առաջին արշավանքից հետո Պաշտային Կիլիկիան իր երեք խոշոր քաղաքներով (Տարսոն, Աղանա, Մամեստիա) և բարերեր դաշտերով կովախնձոր դարձավ Բյուզանդական կայսրության, Անտիոքի և Ռուբինյան իշխանությունների միջև: Պայքարը սկսվեց 1097-ին, երբ խաչակիրները այն խլեցին բյուզանդացիներից, և ավարտվեց ԺԲ դարի 70—80-ական թթվականներին, երբ Պաշտային Կիլիկիան մտավ Կիլիկիայի հայկական պետության մեջ: Սկզբում պայքարն ընթանում էր Բյուզանդիայի և խաչակիր-

² Fulcher of Chartres, p. 48.

³ Եթն ալ-Ասիր, էջ 230, Bar Hebraeus, էջ 235:

⁴ William of Tyre, v. I, p. 227.

ների միջև: 1100 թվականին բյուզանդացիները հետ գրավեցին Դաշտային Կիլիկիան, բայց մեկ տարի անց Անտիոքի իշխան Տանկրեղը իրեն ննթարկեց իր երկրամասը: Ապա ևս երկու անգամ (1104 և 1108 թվականներին) Դաշտային Կիլիկիան ձեռքից ձեռք անցավ⁵:

Խաչակիրները Մերձավոր արևելքում հայտնվելու առաջին իսկ օրվանից իրենց դեմ գրգռեցին տեղի ժողովուրդներին, այդ թվում և Հայերին, իսկ Հայերը Հարևան Մոսուլի աթաքեկության դեմ կռվող Եղեսիայի կոմսության մեջ մեծամասնություն էին կազմում:

Կոմսության տարածքում բնակվող Հայ բնակչությունը՝ կորցնելով իր Հայ կառավարչին և խաչակիրների կողմից ննթարկվելով ճնշումների ու Հալածանքների, օգտվում էր ամեն մի Հարմար առիթից՝ նրանց դեմ ապստամբելու համար: Ահա թե ինչու Եղեսիայի և Մոսուլի միջև ամեն մի բախում արձագանք էր գտնում Հայ բնակչության շրջանում: Նման ելույթներ եղան 1098, 1111, 1114 և այլ թվականներին: Հայ բնակչության ապստամբական տրամադրությունների մասին է վկայում արար պատմիլ Իրն ալ-Կալանիսին, որը, Հաղորդելով Հալեպի կառավարիլ Ֆախր ալ Մուլուք Ռիգուանի՝ Տրիպոլիսի վրա կատարած արշավանքի մասին, նշում է. Արտահ (Հարիմ)⁶ ամրոցում ապրող Հայերը, այլև շտանելով ճնշումներն ու Հալածանքները (ֆրանկների կողմից), ամրոցը հանձնեցին Ռիգուանին (1105 թ. մարտ-ապրիլ):⁷

Սակայն խաչակիր իշխանների անմիջական տիրապետության տակ գտնվող Հայ բնակչության տրամադրությունների փոփոխությունը բոլորովին էլ չէր նշանակում, թե Ռիգինյան կամ Գող Վասիլի իշխանությունը ևս փոխել էր իր վերաբերմունքը խաչակիրների հանդեպ: ԺԲ դա-

⁵ Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 94.

⁶ Արտահ կամ Հարիմ ամրոցը այդ ժամանակ մտնում էր Անտիոքի իշխանության կազմի մեջ:

⁷ Ibn al-Qalanisi, p. 148.

րի առաջին երկու-երեք տասնամյակում, այսինքն՝ ֆրանկ-ների առավել հզոր շրջանում, խաչակիրների հետ թշնամությունը հատկապես Ռուբինյանների համար կլիներ վտանգավոր ու անհեռատես մի քայլ:

Ռուբինյան իշխանության մեջ Կոնստանդինին հաջորդեց իր որդին՝ Թորոս Ա-ը (1100—1129), իսկ վերջինիս՝ Լեոն Ա-ը (1129—1137): Նրանց օրոք շարունակվեց պայքարը Դաշտային Կիլիկիայի հարուստ քաղաքների համար, բայց այս անգամ արդեն Ռուբինյաններն էլ էին մասնակցում դրան:

Թորոս իշխանը առաջին հերթին դրավեց Անարարդան և այն դարձրեց իր իշխանության կենտրոնը (Կոստանդինի օրոք Վահկան էր): Արաբ հնդինակ Ուսամա իրն Մունկիդի վկայությամբ, Թորոսի տիրությունների մեջ էին մտնում նաև Մամեստիան (Մոպսուեստիա) և Աղանան⁸: Իսկ ըստ մեկ այլ հեղինակի՝ Միքայել Ասորու, Թորոս Ռուբինյանը իշխում էր ողջ Կիլիկիայում⁹:

Հենց Թորոս Ա-ի օրոք Կիլիկիայի հայկական իշխանությունը՝ որպես ինքնուրուվն քաղաքական միավոր, սերտ փոխարարերությունների մեջ մտավ Մերձավոր արևելքի պետությունների հետ: Հարեան պետությունները ևս շահագրգոված էին դաշնակցային և խնամիական կապեր հաստատել Ռուբինյանների հետ: Այդ մասին է վկայում Գիյոմ Տյուրացու տեղեկությունը, որի համաձայն Երուսաղեմի թագվոր Բալդուին Բուլոնցին կնության առավ Թորոս իշխանի Արտա անունով զստերը: Պատմիչը ավելացնում է նաև, որ հայ իշխանը ուներ անմատչելի ամրոցներ և բազմաթիվ քաջ մարդիկ¹⁰:

1098-1118 թվականներին Մոսուլի աթարեկությունը գրլիավորեց զիհադը՝ մահմեդականների սրբազան պատե-

⁸ Ասամա իբն Մունկիզ, Կнига назидания, М., 1958.

⁹ Michel le Syrien, v. III, p. 227.

¹⁰ William of Tyre, v. I, p. 415—416.

րազմն լնդղեմ «անհավատների»: Այս քաղաքականությունը արտահայտում էր ինչպես իրաքի սելզուկյան սուլթանի, այնպես էլ Հենց իրենց՝ Մոսուլի աթարեկների շահերը: Զի՞հագի հիմնական նշանակետ դարձավ Եղեսիայի կոմսությունը, որը սեպի պես խրված էր Մոսուլի և Հալեպի միջև, իսկ վերջիններիս միավորումը մեկ պետության մեջ կենսական նշանակություն ուներ աթարեկության համար:

Մոսուլի աթարեկները փորձում էին օգտագործել Մոսուլի, Արտուրյանների, ինչպես նաև Հալեպի և Դամասկոսի ամիրների միացյալ ուժերը, սակայն՝ ապարդյուն: Վերջիններս աշակցություն ցույց շտվեցին Մոսուլի աթարեկ Մառուդուդին: Մինչդեռ քրիստոնյա իշխանավորները՝ Անտիոքի իշխան Տանկրեդը, այլ խաչակիրների հետ մեկտեղ, Թորոս Ռուբինյանը, Գող Վասիլը և Լամբրոնի Օշինը ճիշտ ժամանակին օգնության հասան Եղեսիայի կոմս Բալդուին Բ-ին: Իր դաշնակիցներից օգնություն շտանալով և տեսնելով հակառակորդի միասնականությունը, աթարեկ Մառուդուդը նախընտրեց վերադառնալ Մոսուլ՝ այդպես էլ կռվի մեջ շմանելով¹¹:

Հետաքրքիր է նաև հետևյալ փաստը. այն ժամանակ, երբ հայ իշխանները օգնություն էին ցույց տալիս խաչակիրներին, կոմս Բալդուինը բացահայտում էր Եղեսիայի հայ բնակչության մի դավադրություն, որի նպատակն էր քաղաքը հանձնել Մոսուլի աթարեկին:

Ինչպես արդեն վերը նշել ենք, խաչակիրները դաժանորեն էին վարվում տեղի բնակիչների հետ (այդ մասին է վկայում նաև Մատթեոս Ուոհայեցին)¹²: Ինչ վերաբերում է Ռուբինյաններին, ապա նրանք, իրենց իշխանության շահերից ելնելով, օգնում էին Եղեսիայի կոմսությանը: Ավելին, 1116 թ. Թորոս իշխանը իր մոտ կանչեց Գող Վասիլի որդուն և հաջորդին՝ Տղա Վասիլին (Գող Վասիլը վախ-

¹¹ S. Runciman, A History of the Crusades, v. II, p. 122—124.

¹² Մատթեոս Ուոհայեցի, ժամանակագրության, էջ 337:

հանվեց 1112-ին), ձերբակալեց նրանց ու հանձնեց Բալդուինին՝ դրանով իսկ նպաստելով Հայկական այս իշխանության ոչնչացմանը և նրա հողերի կցմանը Եղեսիայի կոմսությանը։ Այսպիսի քաղաքականությունը բացատրվում է ոչ այնքան նրանով, որ Թորոսը լավ հարաբերությունների մեջ էր իր փեսայի հետ, այլ, որ Գող Վասիլի իշխանությունը հավակնում էր առաջինը և միավորողը լինել հայկական իշխանությունների մեջ, մի հանգամանք, որին ձգտում էին նաև Ռուբինյանները։

Վերոհիշյալ իրադարձություններից մեկ տարի անց կոմս Բալդուինը իր բանակի գլխավորությամբ ներխուժեց Հայկական երեք մասն իշխանությունների տարածքը՝ Եփրատացիքում և նրանց տարածքի մեծ մասը միացրեց իր տիրույթներին։ Այսպիսով Կիլիկիայի և Հարեան մարզերի հայության համախմբման միակ հենարանը մնաց Ռուբինյան իշխանապետությունը։

Գտնվելով երկու հակառակորդների՝ Բյուզանդական կայսրության և Իկոնիայի սուլթանության հարեանությամբ, պետություններ, որոնք անհաջող զավթողական քաղաքականություն էին վարում, հայկական իշխող շրջանները ըստիպված էին ամեն գնով պահպանել գաշինքը խաչակրաց պետությունների հետ։ Այսպիս էր, համենայն գեպս, Թորոս Ա-ի օրոք (1100—1129): 1118 թվականին Թորոսի եղբայր Լևոնը, որը, ամենայն հավանականությամբ, համատեղ իշխում էր Կիլիկիայում, օգնության գնաց Անտիոքի իշխան Ռոշերին՝ մասնակցելով Ազագ քաղաքի (Հալեպից ոչ հեռու) պաշարմանը։ Մատթեոս Ռուհայեցու վրկայությամբ, հայոց զորքը Լևոնի գլխավորությամբ կովեց խիզախորեն և ապահովեց խաչակիրների հաղթանակը, որից հետո Ազագը մտավ Անտիոքի իշխանության մեջ¹³, Պատմիշը ավելացնում է. այդ ժամանակ Հալեպն ու Ազագը պատկանում էին Արտուրի որդի թուրք ամիրին¹⁴։ Նա

¹³ Նույն տեղում, էջ 342։

¹⁴ Նույն տեղում։

Հավանաբար նկատի ուներ Մարգինի Արտուխյան ամիր նաշմ ալ Դին Իլ-Ղազին (1104-1122):

ԺԲ դարի 10-ական թվականներին Կիլիկիայից դեպի արևելք ընկած երկրներում նոր փոփոխություններ տեղի ունեցան: 1118 թվականին, իրաքի սելջուկյան սուլթան Մուհամմադի մահից հետո, նրան հաջորդեց իր տասնը-չորսամյա որդին՝ Մահմուդը: Վերջինիս օրոք սելջուկյան սուլթանների ազգեցությունը Սիրիայի և Վերին Միջագետքի վրա թուլացավ, վերջ տրվեց նաև Մոսուլի աթարեկի միջոցով ընթացող զի՞հադին՝ ընդդեմ խաչակիրների: Եվ ահա այդ պահին, կարճ ժամանակով զի՞հադի, ինչպես նաև մահմեդական Հողերի միավորման նախաձեռնությունը իր վրա վերցրեց վերոհիշյալ Արտուխյան Իլ-Ղազին, որի ամիրությունը շատ էր ուժեղացել: 1118-1119 թվականներին Իլ-Ղազին գրավեց Մայաֆառուհիկինը, Հալեպը և նրա շրջակայքը (այդ թվում և Ազազը): Հենց այդ ժամանակին է վերաբերում Մատթեոս Ուույայեցու վերոհիշյալ տեղեկությունը: Հայոց զորքի օգնությամբ գրավելով Ազազը, Անտիոքի իշխանը սրեց իր հարաբերությունները Արտուխյանների հետ: Դրանից հետո, մի քանի տարի, Արտուխյանների և խաչակիրների միջև ռազմական բախումներ էին տեղի ունենում: Եվ միայն Անտիոքի իշխանության ու երրուսաղեմի թագավորության միացյալ ուժերով հնարավոր եղավ հեռացնել Անտիոքի նվաճման վտանգը: Միևնույն ժամանակ Արտուխյանները պատերազմներ էին մղում հարավում՝ Եղեսիայի կոմսության և Հյուսիսում՝ Վրացական պետության դեմ: Սակայն Իլ-Ղազիի մահից (1122) անմիջապես հետո սկսվեց Արտուխյանների անկումը: Նրանց պետությունը տրոհվեց մի քանի մանր ամիրությունների: Դրանից հետո Անտիոքի և Եղեսիայի խաչակիրների համար մահմեդական պետություններից լուրջ վտանգ էր ներկայացնում միայն Մոսուլի աթարեկությունը:

ԺԲ դարի 10-20-ական թվականներին Ուուբինյան իշխանապետությունը թեև գաշնակցում էր խաչակիրներին ընդ-

դեմ մահմեղականների, սակայն Դաշտային Կիլիկիայի Հարցում անհաջող պայքար էր մզում ինչպես խաչակիրների, այնպես էլ Բյուզանդիայի դեմ: Հենց այս հողի վրա էլ կուն Ա.-ի օրոք (1129-1137) սրբեցին Կիլիկյան Հայաստանի և Հարեւան ֆրանկ պետությունների հարաբերությունները:

Սնցնելով իշխանության գլուխ, կուն Ա.-ը¹⁵ վարում էր բոլոր հարեւան պետությունների հետ բացահայտ առնակատման քաղաքականություն: Ի տարբերություն իր եղբոր, նա բախվեց խաչակիրների հետ և վարում էր բոլորովին անկախ արտաքին քաղաքականություն: Հետաքրքիր է, որ, ըստ Միքայել Խոալիկոսի «Ներբողյանի», կուն Ա.-ը Ռուբինյան առաջին թագավոր կուն Բ.-ից ավելի քան 60 տարի առաջ կրում էր դիագիմ և իրեն հայտարարել էր թագավոր¹⁶: Պատահական չէ, որ արար պատմիչները Ռուբինյան տոհմի բոլոր ներկայացուցիչներին (նույնիսկ հենց իրեն՝ կուն Ա.-ին) կոչում են «Իրն կուն», այսինքն՝ կունի որդի, կունյան:

Կուն: Ա.-ի իշխանության առաջին իսկ տարին նշանավորվեց բուռն իրադարձություններով: Մելիք Ղազի Բ Դանիշմանյանը (1084-1134) և Անտիոքի իշխան Բոհեմունդ Բ.-ը (1126-1130) երկու կողմից ներխուժեցին Կիլիկիա: Նրանց միջև ճակատամարտ տեղի ունեցավ Անարարդաքաղաքի մոտ: Բոհեմունդի զորքը ընկավ շրջապատման մեջ ու ջախջախվեց, իսկ ինքը՝ իշխանը, զոհվեց կռվի դաշտում:

Նույն ալդ ժամանակ կուն Ա.-ը փակեց երկրի բոլոր լեռնանցքները և կոտորեց ֆրանկների զոկատներից մեկը¹⁷:

¹⁵ Յ. Քասունին հենվելով Մատթեոս Ուոհայեցու և Սմբատ Սպարապետի տեղեկությունների վրա, հանգում է այն եղբակացության, որ կունը զեր իր եղբոր կենդանության օրոք, վերջինիս հետ միասին որպես հավասար, մասնակցում էր երկրի կառավարմանը և նույնիսկ ինքնուրույն իշխում էր Ռուբինյանների տիրույթների մի մասի վրա (տե՛ս Եշվ. աշխ., էջ 151-152):

¹⁶ Հ. Բարբիկյան, Միքայել Խոալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, ՊՀԲ, 1984, հ. 4, էջ 216-219:

¹⁷ Michel le Syrien, v. III, p. 227.

իսկ Բար Հեբրեոսի վկայությամբ, Ծուրինյան իշխանը փակելով լեռնանցքները, կոտորեց շատ թուրքերի¹⁸: Երկու տեղեկություններն էլ համապատասխանում են իրականությանը, քանի որ թե՛ Դանիշմանյանները և թե՛ խաչակիրները Կիլիկիա էին ներխուժել զավթողական նպատակներով: Ամեն դեպքում նրանցից և ոչ մեկը հաջողության շհասավ:

Այսպիսով, Կիլիկիան ազատվեց երկու վտանգավոր հարևանների հարձակումից: Սակայն Դանիշմանյան Մելիք Ղազին դրանից անմիջապես հետո ևս մի արշավանք կատարեց, որն ավարտվեց Կիլիկիայի որոշ ամրոցների գրավումով:

Սկսած 1130 թվականից, Հովհաննես Կոմնենոս կայսրը արշավանքներ է ձեռնարկում կայսրությանը սպառնացող Դանիշմանյանների դեմ: Միենույն ժամանակ կայսեր եղբայրը՝ Հովհաննես սերաստոկրատորը, ընդդիմացավ Հովհաննես Կոմնենոսին և իր դիրքերի ամրապնդման համար դաշինքի մեջ մտավ տարբեր պետությունների, այդ թվում և Ծուրինյան իշխանության հետ:

Օդավելով Փոքր Ասիայում առաջացած նոր քաղաքական իրադրությունից, Լևոն Ա-ը 1132 թվականին գրավեց Մամեստիա, Աղանա և Տարսոն քաղաքները, կրկին Ծուրինյան տիրութներին միացնելով Դաշտային Կիլիկիան:

Մինչ Բյուզանդիան ներքին երկառակուման մեջ էր, Դաշտային Կիլիկիային տիրելու փորձ կատարեց Անտիոքի իշխան Ռայմունը: Նա 1136 թվականին դավադրություն կազմակերպեց ընդդեմ Լևոնի և ձերբակալելով նրան՝ որպես փրկագին պահանջեց 60000 ոսկեդրամ, ինչպես նաև Աղանա, Մամեստիա և Սարգանդիքար քաղաքները¹⁹: Սակայն գերությունից ազատվելուց անմիջապես հետո Լևոնը վերադարձեց Ծուրինյանների բոլոր այդ քաղաքները: Երկու իշխանությունների այս հակամարտության ընթացքում

¹⁸ Bar Hebraeus, p. 255.

¹⁹ William of Tyre, v. II, p. 43.

Անտիոքի իշխանին օգնում էր երուսաղեմի թագավոր Ֆուլք Անժուացին:

Իր կառավարման ողջ ընթացքում Լևոն Ա.-ը ցույց տվեց իր զորավարական տաղանդը, սակայն մարտնչելով միաժամանակ թե՛ Բյուզանդիայի, թե՛ Անտիոքի իշխանության և թե՛ Դանիշմանյանների դեմ, նա չկարողացավ որևէ դաշնակից ձեռք բերել: Թերևս հենց այդ մեկուսացվածությունը Ռուբինյան իշխանության ժամանակավոր անկման գլխավոր պատճառներից մեկը եղավ:

Լևոն Ա.-ի վարած անկախ քաղաքականությունը ձեռնտու չէր հատկապես Բյուզանդական կայսրությանը, որը՝ որպես այս երկրամասի նախկին տեր, միշտ էլ հավակնություններ ուներ Կիլիկիայի հանդեպ, մանավանդ Կոմնենոսների օրոք կրկին վերագտել էր իր նախկին հզորությունը, ուշքի գալով ԺԱ. դարի Բ կեսին սելցուկներից ստացած ժանր հարվածներից:

Սակայն Հովհաննես Կոմնենոսի 1137 թվականին սկըսած արշավանքի նպատակը միայն Կիլիկիայի և Անտիոքի իշխանության հպատակեցումը չէր: Արար պատմիշ Իրնալ-Ասիրի վկայությամբ, խաչակիրները հասկացրել էին կայսերը, որ իրենք օգնության կարիք են զգում: Վերջինիս հապաղման դեպքում երկիրը կարող էր նվաճել Զանգին²⁰:

Խոսքը վերաբերում է Մոսուլի աթարեկ իմադ ալ-Դին Զանգին և այն վտանգին, որը ներկայացնում էր այս աթարեկությունը Անտիոքի և Եղեսիայի խաչակիրների համար: Հալեպի նախկին կառավարչի որդին՝ իմադ ալ-Դին Զանգին (1127—1146) երկար ժամանակ ծառայում էր Մոսուլի աթարեկության բանակում և 1127 թվականին մեծ սուլթանի կողմից նշանակվեց Մոսուլի աթարեկ: Նա ընդունակ ուղղմական ու քաղաքական գործիշ էր և արագ հասվ մեծ հաջողությունների:

Դեռևս 1128 թվականին նրան ենթարկվեց Հալեպ քաղաքը: Միավորելով Մոսուլն ու Հալեպը, Զանգին վր-

²⁰ Իրնալ-Ասիր, էջ 249:

տանգավոր Հակառակորդ դարձավ ոչ միայն խաչակիրների, այլև մահմեղական մանր ամիրությունների և աթարեկությունների համար: Իր կառավարման գրեթե ողջ ընթացքում նա պայքար մղեց Արտուխյանների երկու ճյուղերի (Մարգինի և Հիսն Քայֆայի) դեմ: 30-ական թվականներին Զանգին փորձեց իր տիրապետության տակ միավորել ողջ Սիրիան՝ արշավանքներ ձեռնարկելով Դամասկոսի, Հոմսի և Համայի վրա, սակայն շոշափելի արդյունքի հասավ: Զանգին առավել հաջողակ գտնվեց խաչակիրների դեմ պայքարում՝ զիմավորելով շիհադը: Նա փորձում էր միավորել մահմեղականների ուժերն ընդդեմ ֆրանկների: 1137 թվականին Զանգին պաշարեց Բարին (Մոնֆերրան) ամրոցը, որը պատկանում էր խաչակիրներին և քիչ էր մնում դերի վերցներ այստեղ գտնվող Երուսաղեմի թագավոր Ֆուլք Անժուացուն: Սակայն ֆրանկների Երուսաղեմից և Տրիպոլիսից ժամանած զորքերը ամրապնդեցին ամրոցի պաշտպանների զիրքերը: Միևնույն ժամանակ լուր ստացվեց այն մասին, որ բյուզանդական կայսրն իր զորքի վկուխ անցած՝ կտրելով անցնելով Կիլիկիան, ներխուժել է Սիրիա և Հասել մինչև Անտիոքի պարիսպները: Զանգին, խուսափելով երկու ճակատով պատերազմելուց, նախընտրեց վերացնել Բարին ամրոցի պաշարումը և նահանջել²¹:

Կայսերն ուղղված խաչակիրների վերոհիշյալ դիմումով նրանք փորձում էին իրար դեմ հանել Բյուզանդիան և Մոսուլի աթարեկությունը՝ օգտվելով նրանց երկուատեք թուլությունից, կամ, վատագույն դեպքում, ճանաշել Բյուզանդիայի զերիշխանությունը, որը նրանց համար, հավանաբար, նախընտրելի էր Զանգիի տիրապետությունից:

Նախքան Անտիոքի վրա արշավելը, Հովհաննես Կոմնենոսը պաշարեց ու գրավեց Աղանա և Մամեստիա քաղաքները: Լեռն իշխանը որոշեց դիմադրությունը կազմա-

²¹ N. Elisseeff, Nur ad-Din, v. II, p. 337—364.

կերպել կեռնային Կիլիկիայում, որը առավել մեծ հնարավորություններ ուներ պաշտպանվելու:

Կայսրը Դաշտային Կիլիկիայից շարժվեց ուղիղ Անտիոքի վրա՝ առայժմ հանգիստ թողնելով Լևոն Ա-ին: Սակայն Անտիոքի խաչակիրների հետ որևէ ուղղմական բախում տեղի չունեցավ: Ռայմունդ իշխանը ներկայանալով Հովհաննես Կոմնենոսին հայտնեց իր հնազանդությունը: Միենույն ժամանակ նա առաջարկեց բյուզանդացիներին Զանգիից խլել Հալեպ, Շեյզար և Համա քաղաքները: Կայսրը համաձայնեց, և նրանց միջև հաշտություն կնքվեց: Սակայն բյուզանդացիները չէին շտապում Զանգիի դեմ գուրս բերելու իրենց զորքերը (արշավանքը նախատեսված էր 1138 թ. համար): Ավելին, Հովհաննես Կոմնենոսը իր դեսպանների միջոցով հաղորդեց Մոսուլի աթարեկին, որ այդ պահին զլսավոր նպատակը արշավանքն է Ռուբինյան իշխանության դեմ: Նույն՝ 1132 թվականին, նա կրկին շարժվեց դեպի Հյուսիս և ներխուժեց Լեռնային Կիլիկիա: Զնայած հայկական զորքերը համառ և հերոսական պայքար մղեցին հատկապես Անարարզայի և Վահկայի պաշտպանության ժամանակ, սակայն Հովհաննես Կոմնենոսին հաջողվեց զերեվարել Լևոն իշխանին և նրա որդիներին:

Այսպիսով, ժամանակավորապես (1137—1145) վերացվեց Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում: Բյուզանդացիները վերակսեցին իրենց տիրապետությունը այս երկրում, սակայն այդ նվաճումը խորը հիմքեր չուներ: Հնարավոր է նույնիսկ, որ ոչ բոլոր լեռնային շրջաններն էին հնազանդեցված, քանի որ 4—5 տարի անց (1141 կամ 1142-ին) Բյուզանդիան ստիպված էր ևս մի արշավանք ձեռնարկել դեպի Կիլիկիան Հայաստան:

ՈՌԻՔԻՆՅԱՆ ԽՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՈՒ
ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՌԻ
40—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺԲ դարի 40-ական թթ. Սիրիայում և Հյուսիսային Իրաքում տեղի ունեցան քաղաքական կարևոր իրադարձություններ, որոնց հետևանքով սկսեց խարխլվել խաշակիր պետությունների գերիշխանությունը Արևելյան Միջերկրածովյան երկրներում: Մինչ այդ ֆրանկ ասպետների հաջողությունների հիմնական պատճառը հակառակորդ պետությունների մասնատվածությունն ու թուլությունն էր: Հենց դա էր, որ թույլ էր լուրջ խաշակիրներին պահպանելու իրենց տիրապետությունը Պաղեստինում, Արևմտյան Սիրիայում, Վերին Միջագետքի մեծ մասում և Եփրատացիքում:

Դեռևս ԺԲ դարի 20—30-ական թթ. խաշակիրների միակ լուրջ հակառակորդը Մոսուլի աթարեկությունն էր: Հենց այս աթարեկությունն էլ ԺԲ դարի 40-ական թթ. կործանարար հարված հասցրեց Եղեսիայի կոմսությանը, որը խաշակիր պետություններից միակն էր, որ ծովափնյա տիրություններ չուներ: Նրա տիրությունը խորացած էին մահմեդական պետությունների մեջ՝ խոշնդոտելով վերջիններիս հնարավոր միավորմանը:

Հաշվի առնելով վերջին հանգամանքը, աթարեկ հմադաւ-Դին Զանգին գլխավոր հարվածը ուղղեց Եղեսիայի կոմսության դեմ: Զանգին կարող էր հարձակվել կոմսու-

թյան վրա դեռևս ժԲ դարի 30-ական թվականներին, սահայն Բյուզանդիայի հարձակման վտանգը, հատկապես 1137—1143 թվականներին, կաշկանդում էր նրա գործողությունները:

Այն բանից հետո, երբ բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսը դեպի Արևելք կատարած իր երկրորդ արշավանքի (1142—1143) ժամանակ վիրավորվեց և մահացավ Կիլիկիայում, իսկ նրա որդին՝ Մանուել Կոմնենոսը բյուզանդական բանակի հետ վերադարձավ Կոստանդնուպոլիս, իմադ ալ-Դին Զանգին գործողությունների ազատություն ստացավ: 1144 թ. զեկտեմբերի 24-ին նա պաշարեց ու գրավեց Եղեսիա քաղաքը: Դա խաչակիրների առաջին խոշոր պարտությունն էր Արևելքում, որը առիթ հանդիսացավ խաչակրաց երկրորդ արշավանքի կազմակերպման համար:

Բյուզանդական բանակի Կիլիկիայից հեռանալը նըսպաստեց Ծուրինյան իշխանության վերականգնմանը: Դեռևս 1137 թվականին իր նոր իշխան Լեոնի հետ ձերբակալված ու Կոստանդնուպոլիս ուղարկված Թորոս իշխանը 1144 կամ 1145 թվականին փախավ գերությունից և 1145 թվականին կարճ ժամանակում վերականգնեց Ծուրինյան իշխանությունը Լեռնային Կիլիկիայի սահմաններում:

Թորոս Բ-ը (1145—1169) Կիլիկյան Հայաստանի նրանավոր գործիշներից է: Նրա իշխանության առաջին տասնամյակում (1145—1155) բյուզանդացիների և իկոնիայի սելջուկների նկատմամբ տարած հաղթանակները ամուր հիմք ստեղծեցին իշխանության հետագա ամրապնդման համար:

1146 թ. մահացավ Մոսուլի աթարեկը՝ Զանգին: Աթարեկությունը տրոհվեց երկու մասի: Արևմտյան տիրութները (Հալեպը և Հյուսիսային Սիրիայի որոշ շրջաններ) ժառանգեց որդին՝ Նուր ալ-Դին Մահմուդ իրն Զանգին, իսկ Մոսուլը և շրջակա գավառները՝ վերջինիս եղբայրը՝ Մայֆալ-Դին Ղազին:

Նուր ալ-Դինը, մոտ երեսուն տարի գտնվելով գրեթե անընդհատ պատերազմների մեջ, Հալեպն ու Հյուսիսային Սիրիան ընդգրկող ամիրությունը վերածեց մի ընդարձակ և ուժեղ պետության:

Նուր ալ-Դինի գահակալման ժամանակաշրջանը (1146—1174) գրեթե համընկավ Կիլիկիայի երկու իշխանապետերի՝ Թորոս Բ-ի և նրա եղբոր՝ Մլեհի (1170—1175) իշխանության տարիներին: Դա Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնման, նրա հողերի ազատագրման և Ռուբինյան իշխանության ամրապնդման ժամանակաշրջանն էր: Այն համընկավ Արևելքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին և անկասկած, այս կամ այն շափով կապված էր դրանց հետ:

Թորոս Բ-ը, վերականգնելով հայկական իշխանապետությունը, Կիլիկիայում շնանդիպեց լուրջ դիմադրության և բազական հեշտորեն հաստատեց իր տիրապետությունը Լեռնային Կիլիկիայում: Դա կատարվեց շնորհիվ այն բանի, որ ամրոցներում ու քաղաքներում բյուզանդական կայազորները փոքրաթիվ էին և չէին կարող լուրջ դիմադրություն ցույց տալ: Բացի այդ, հայերը և հակորիկ ասորիները, որոնք երկրի բնակչության մեծամասնությունն էին կազմում, ցնծությամբ էին զիմափորում կուն իշխանապետի որդուն, ի գեմս նրա տեսնելով Ռուբինյան իշխանապետության օրինական ժառանգին:

Համազրելով Սամուել Անեցու¹ և Բար Հերբեռոսի² տեղեկությունները, կարելի է եղբակացնել, որ 1144 կամ 1145 թվականին, Թորոս Բ-ը փախչելով Կոստանդնուպոլսից, նավով հասավ Անտիոք և իր փոքրաթիվ զորքով կարողացավ գրավել Վահկա, Առյուծաբերդ և Ամուտա լեռնային ամրոցները, ապա մեկը մյուսի հետեւից ոչնչացնելով բյուզանդացիների ջոկատները, տիրեց Կիլիկիայի բոլոր լեռնային շրջաններին:

Վերականգնելով իր տիրապետությունը Լեռնային Կի-

¹ Սամուել Անեցի, Հաւաքմունը ի գրոց պատմագրաց, էջ 129—131:

² Bar Hebraeus, p. 275.

լիկիայում և օգտվելով բարենպաստ իրավիճակից, Թորոս
Բ-ը մինչև 1152 թվականը գրավեց Տարսոն, Աղանա,
Անաբարզա, Սիս և Մամեստիա քաղաքները, այսպիսով
նվաճելով Դաշտային Կիլիկիայի մեծ մասը: Նշված քաղաք-
ների կորուստը շոշափելի հարված էր Թյուզանդիայի շա-
հերին: Եվ Ռուբինյան իշխանապետության վերականգնման
յոթերորդ տարում միայն կայսրությունը լրջորեն միջամտեց
Կիլիկիայում տեղի ունեցող իրադարձություններին, սա-
կայն ոչ մի հաջողություն չունեցավ:

ԺԲ գարի 40-ական թվականների երկրորդ կեսին, երբ
Թորոս Բ-ը նվաճում էր Կիլիկիայի քաղաքներն ու ամ-
րոցները, Եղեսիայի կոմսությունը իր գոյության վերջին
տարիններն էր ապրում: 1146 թվականին Եղեսիայի կոմս
Զոսլին Բ-ը ֆրանկ ավատատերերի աջակցությամբ որո-
շեց հետ վերադարձնել կոմսության մայրաքաղաքը: Նա
գրավեց Եղեսիան, բայց այն պահել շկարողացավ: Ըն-
դամենը 6 օր անց քաղաքը պաշարվեց Նուր ալ-Դինի
զորքերի կողմից և արագ հանձնվեց:

Զնայած տարած հաղթանակին, Նուր ալ-Դինը ՀՀա-
րունակեց կոմսության նվաճումը: Զոսլին Բ-ը դրանից
հետո ևս երեք տարի (1146—1149) շարունակեց տիրել
կոմսության մնացած տարածքին (Հիմնականում Եփրա-
տացվոց աշխարհում):³ Նոր կենտրոնատեղ դարձնելով Թել
Բաշիրը:

40-ական թվականների ամենամեծ իրադարձությունը
խաչակրաց Բարջավանքն էր (1147—1149), որը ձեռ-
նարկվեց այն բանից հետո, երբ Երուսաղեմի թագավորը
և լատին իշխանները, տաղնապած Եղեսիայի անկումով,
դիմեցին Հռոմի պապին՝ խնդրելով կազմակերպել խա-
չակրաց նոր արշավանք:³

³ Հետաքրքիր է, որ Ն. Ելիսեևը, Հիմնվելով մեզ անհայտ աղյուր-
ների վրա, գրում է. 1145 թվականին Կիլիկիայի Հայերը զիմեցին
Հռոմի պապին՝ խնդրելով ազատել իրենց բյուզանդական ատելի լժից
(N. Elisseeff, Nur ad-Din, t. II, Damas, 1967, p. 411): Սա հավա-
նաբար տեղի է ունեցել նախքան Ռուբինյան իշխանապետության վե-
րականգնումը:

Ի վերջո, արձագանքելով Արևելքից երկու դիմումներին, խաչակիրները, որոնց այս անգամ գլխավորում էին երկու տիրակալներ՝ գերմանական կայսր Կոնդրադ Դ-ը (1136—1152) և ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս Է-ը (1137—1180), 1148 թ. ափ դուրս եկան Սոււյդիայում, Տյուրոսում և Ակրայում։ Սակայն տեղի ֆրանկների հետ նրանց կապած հույսերը շարդարացան։ Եվրոպացի ասպետների կատարած միակ քիչ թե շատ լուրջ քայլը Դամասկոսի անհաջող պաշարումն էր (այստեղ իշխում էր աթարեկ Մուին ալ-Դինը)։ Խաչակիրներին դիմագրավում էին մահմեդական ամիրների միացյալ ուժերը, որոնց մեջ էր նաև Հյուսիսային Սիրիայի տիրակալ Նուր ալ Դին Զանգին։

1149 թ. խաչակիրների բանակները ստիպված վերադառն ծովափնյա քաղաքները, իսկ այստեղից նավեցին դեպի Եվրոպա։ Նույն թվականին Նուր ալ Դինը մեծ արշավանք ձեռնարկեց Անտիոքի իշխանության վրա։ Ինարի (Նեպա) ճակատամարտում նա պարտության մատնեց խաչակիրներին, գրավեց մի շարք բնակավայրեր ու պաշարեց Անտիոքը։ Անտիոքը գրավել Նուր ալ-Դինին Հաջողվեց, որից հետո նա հարվածն ուղղեց ընդդեմ Զոսլին Բ-ի։

Զոսլին Բ-ը ևս երեք տարի (1146—1149), համեմատաբար խաղաղ պայմաններում, շարունակեց իշխել իր կոմսության մնացած տարածքի վրա, իսկ 1149 թ. նույնիսկ ընդարձակեց այն՝ իր տիրույթներին միացնելով Մարաշի տեր Ռեյնալդի կալվածները։ Այդ ժամանակ նա իշխում էր մի բավական ընդարձակ տարածքի վրա, որն ընդգրկում էր Թլապաշարը (Թել Բաշիրը), Այնթապը, Աղազը, ալ-Բիրան, Մարաշը և Հիսն Մանսուրը։ Սակայն նույն 1149 թվակակին, երբ թվում էր, թե կոմսությունը ուշքի է գալիս 1144 և 1146 թվականներին ստացած ծանր հարվածներից, այն պաշարվեց հարեւան մահմեդական պետությունների կողմից։ Զոսլին Բ-ի տիրույթների վրա հար-

ձակումներ սկսեցին գործել թե՛ Հարեան Արտովյան ա-
միրները (Հիսն Քայֆայի և Խարբերդի ճյուղեր), թե՛
իկոնիայի սելչովյան սովորակած մարդիկ գե-
րի վերցրեցին Զուլին Բ-ին: Վերջինիս փոխարինեց որ-
դին՝ Զուլին Գ-ը, որը թել Բաշիրում իր շուրջն էր Հա-
մախմբել Հավատարիմ մնացած ասպետներին:

Նուր ալ-Դին Զանգիի և Իկոնիայի սովորակի
միջև հաստատվել էին դաշնակցային Հարաբերություններ,
որոնք 1150 թ. ամրապնդվեցին նուր ալ-Դինի և Մասու-
դի դատեր ամուսնությամբ: Այս երկու պետությունները
համաձայնեցված գործողություններով, երկու տարվա ըն-
թացքում, վերջնականապես վերացրին այն ամենը, ինչ
մնացել էր Եղեսիայի կոմսությունից՝ բաժանելով այդ Հո-
ղերը իրար մեջ: Ընդ որում, նրանք փորձում էին միա-
ժամանակ ասպարեզից դուրս մղել Արտովյաններին, ո-
րոնք ևս Հավակնություններ ունեին այդ Հողերի մի մա-
սի նկատմամբ:

Նուր ալ-Դինի և Մասուդի Հիմնական Հարվածն ուղ-
ղվեց Թել Բաշիրի դեմ, որը, փաստորեն, կոմսության
նոր մայրաքաղաքն էր վերջին 7 տարում (1144—1151):
Թվում էր, կոմսության ճակատագիրը վճռված է, սակայն
այդ ժամանակ գործին միջամտեց Բյուզանդական կայսրու-
թյունը՝ էլ ավելի բարդացնելով իրավիճակը:

1150 թ. Կիլիկիայի բյուզանդական մասից (որն այդ
ժամանակ դեռևս նվաճված չէր Թորոս Բ-ի կողմից) Բյու-
զանդական կայսրությունը՝ արձագանքելով Երուսաղեմի թա-
գավոր Բալգուին Գ-ի և Անտիոքի ու Թել Բաշիրի խաչա-
կիրների դիմումներին, մտավ Եփրատացիք: Բյուզանդա-
ցիները իրենց տիրապետությունը Հաստատեցին Թել Բա-
շիրում, Սյութապում, Ռավանդանում, Տլուքում և մի շարք
այլ վայրերում: Սակայն Բյուզանդիան միաժամանակ ըդ-
րադված էր Սիկիլիայի նորմանների դեմ պատերազմով:
Օգտվելով դրանից, Նուր ալ-Դինը 1150 թ. աշնանը լուրջ
պարտության մատնեց բյուզանդացիների ու խաչակիրների

միացյալ ուժերին և նվաճեց մի շարք գավառներ: Իր հերթին Հարձակման անցավ նաև Մասուղը՝ նվաճելով Այնթապը: Եփրատացվոց աշխարհի խաչակիրներին վերջնական Հարված Հասցվեց 1151 թ. Հովհաննեսին, երբ Զանգիի զորավարներից մեկը գրավեց Թել Բաշիրը: Այսպիսով, երկու տարուց էլ պակաս ժամանակվա ընթացքում լիովին վերացվեց Եղեսիայի կոմսությունը (1149 աշուն—1151 ամառ):

Հարեան մահմեդական պետություններից յուրաքանչյուրը իր տիրույթներին միացրեց նախկին կոմսության մի մասը: Ֆրանկների տիրույթներից բաժին Հասավ նաև Խարբերդի տեր, Արտուրյան ամիր Կարա Արսլանին և նրա զարմիկ՝ Մարգինի տեր Արտուրյան թիմուրտաշին: Մակայն նվաճված Հողերի մեծ մասը իրար միջև բաժանեցին հկոնիայի սովորական Մասուղը և Նուր ալ-Դին Զանգին: Վերջինս նվաճեց Կուրիսը, Ազաղը, Ռավանդանը, Թել Բաշիրը, Թել Խալիդը, Հիսն Քարպինը, ալ Զառու գետի Հովիտը, Քաֆարլաթան և Բասարփութը:

Մինչ այս չորս պետությունները խլում էին Զոսլին Գ-ի տիրույթների վերջին կղզյակները, Թորոս Բ-ը Կիլիկիան մաքրում էր բյուզանդական կայազորներից: Մինչև 1152 թ. նա արդեն տիրում էր Կիլիկիայի մեծ մասին: Ռուբինյան իշխանության և Հիշյալ պետությունների տարածքների ընդարձակումը իրարից անկախ չէր ընթանում:

Վերեւում Հիշյալ 1150 թ. աշնանը Թել Բաշիրից Հարվալ, Բյուզանդական և խաչակիր միացյալ զորքի կրած պարտության մասին: Դրան հետևեց բյուզանդական զորքի Հարկադիր նահանջը Եփրատացվոց աշխարհի իրենց գրաված բոլոր վայրերից (Հավանաբար մինչև 1151 թ. ամառը): Պատահական չէ, որ Թորոս Բ-ի կողմից Դաշտային Կիլիկիայի նվաճումը Հաջորդեց վերոհիշյալ դեպքերին: Հիմնականում 1151—1152 թթ. ընթացքում է, որ Ռուբինյան իշխանապետը իրեն է ենթարկում Դաշտային Կիլիկիայի մեծ քաղաքները և առաջին անդամ ընդհանուր

սահման է ունենում Զանգիների պետության հետ։ Սակայն Ռուբինյան իշխանությունը ավելի երկար ընդհանուր սահման ուներ Իկոնիայի սովորականության հետ։ Եթե մինչև վերոհիշյալ իրադարձությունները սելջուկյան սովորականությունը հայերին սահմանակից էր միայն Հյուսիսից, ապա այժմ նաև արևելքից։

Իրերի նման ընթացքը ստիպեց Բյուզանդիային ղեկավական գործողությունների։ 1152 թ. Մանուել Կոմնենոս կայսրը մեծ բանակ ուղարկեց Կիլիկիա՝ Անդրոնիկոս Կոմնենոսի գլխավորությամբ։ Մամեստիայի մոտերքում տեղի ունեցած ճակատամարտում բյուզանդացիք ծանր պարտություն կրեցին հայկական բանակից։ Ինքը՝ Անդրոնիկոսը, հազիվ խույս տվեց ռազմի դաշտից ու փախավ Անտիոք։ Այս գեպքերին հաջորդած 6 տարվա ընթացքում (1152—1158) կայսրությունը հնարավորություն շունեցավ նոր զորաբանակ դուրս բերելու հայկական իշխանության դեմ, բայց դրա փոխարեն գործի դրեց իր վտանգավոր զենքը՝ ամենազոր դիվանագիտությունը, որի զիվավոր ու դարերով մշակված հնարքը հակառակորդ պետություններին իրար դեմ գրգռելն ու երկուատեք թուլացնելն էր։

Բյուզանդիան երկու անգամ (1152, 1155) Կիլիկիայի դեմ հրահրեց Իկոնիայի սովորական Մասսուգին։ Սակայն թորոս Բ-ը նախ դիվանագիտությամբ, ապա նաև զենքի ուժով (նա զախշախեց սելջուկների 3000-անոց զոկատը) հեռացրեց այդ վտանգն իր տիրութներից։ Ապա 1156 թ. ռազմական բախում տեղի ունեցավ Կիլիկիայի և Անտիոքի իշխանության միջև։ Բայտ Գիյոմ Տյուրացու վկայության, այստեղ ևս իր գերը կատարեց բյուզանդական դիվանագիտությունը⁴։ Անտիոքի իշխան Ռեյնալդ Շատիլյոնցին թորոս Բ-ից պահանջեց վերադարձնել այն բերդերը, որոնք

⁴ A History of Deeds done beyond the Sea, by William Archbishop of Tyre, tr. by Babcock and Krey, vol. 11, New-York, 1943, p. 253—254.

Հայերը նվաճել էին Հույներից, բայց դրանք նախկինում պատկանել էին Տաճարականներին։ Ալեքսանդրեատայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Թորոս Բ-ը պարտը-վեց, և Տաճարականները տիրեցին Հիշյալ բերդերին։ Դը-րանց մեջ էր նաև Գաստոն կամ Բաղրաս ամրոցը⁵, որը իր կարեռը ուղղմաստրատեգիական դիրքի շնորհիվ հետագայում էլ կովախնձոր դարձավ։ Սակայն նույն՝ 1156 թվականին, Անտիոքի իշխանն ու Թորոս Բ-ը զիտակցելով ի-րենց շահերի ընդհանրությունը, Հաշտվեցին։ Դեռ ավելին, երկու իշխանները միացյալ արշավանք կազմակերպեցին Բյուզանդիային պատկանող Կիպրոս կղզու վրա ու մեծ ավարով վերադարձան։

Այսպիսով, անհաջողության մատնվեց Բյուզանդիայի «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը՝ Կիլիկիայի և Հարեան պետությունների նկատմամբ։

Այս ընթացքում, մինչ Թորոս Բ-ը մերթ զենքով, մերթ դիվանագիտությամբ Հաջող դիմագրություն էր ցույց տալիս Բյուզանդիային ու նրա դաշնակիցներին, Հարավային Սիրիայում նոր նվաճումների էր հասել Զանգի տիրակալը։ Նուր ալ-Դինը, օգտվելով Դամասկոսի աթարեկության մեջ տիրող անիշխան վիճակից, 1154 թվականին, առանց մեծ դժվարության, գրավեց այն։ Դրանով իսկ նա իրականացրեց իր վաղեմի երազանքը՝ տիրելով ողջ մահմեդական Սիրիային։ Դամասկոսի նվաճումը կարեռ էր թե՛ տնտեսական, թե՛ ուղղմաստրատեգիական առումով։ Այս-տեղից նա անմիջականորեն սպառնում էր խաչակիրների զըլ-խավոր պետությանը՝ Երուսաղեմի թագավորությանը։ Երուսաղեմի թագավորները (Բալգուին Գ-ը և Ամալրիկ Ա-ը) Դամասկոսի գրավմանը հաջորդած տասնամյակում (1154—1164) փորձում էին միավորել բոլոր խաչակիր պետությունների և Կիլիկյան Հայաստանի զինված ուժերը, հստակ զիտակցելով, որ նոր քաղաքական իրավիճակում միայն միացյալ ուժերով կարելի էր հակահարված հասցնել նուր ալ-Դինին։

⁵ The Chronography of Bar Hebraeus, p. 283.

Գիյում Տյուրացին Հաղորդում է Զանգիների պետության և Երուսաղեմի թագավորության միջև պայքարի մի դրվագի մասին։ Նա անդրադառնում է 1157—1158 թվականներին։ Ըստ նրա տվյալների, Նուր ալ-Դինը, Դամասկոսը ծառայեցնելով որպես Հենակետ, փորձում էր իր Հսկողության տակ պահել Հարավյախին Սիրիան և Պաղեստինի Հյուսիսային շրջանները։ 1157 թվականին նա երկու անգամ պաշարեց քաղաք-ամրոց Բանիյասը, որը պատկանում էր Երուսաղեմի թագավորությանը և ուներ կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն։ Մահմեդականներին հաջողվեց ներխուժել քաղաք, սակայն Բանիյասի կայազորը, նահանջելով ու ամրանալով միջնաբերդում, ուժեղ դիմադրություն ցուց տվեց թշնամուն՝ հույս ունենալով օգնություն ստանալ Բալդուին Գ թագավորից։

Պաշարվածների հույսերն արդարացան։ Երբ թվում էր, թե ամրոցի հանձնումն անխուսափելի է, Երուսաղեմի թագավորի, Տրիպոլիսի կոմսի և Անտիոքի իշխանի միացյալ ուժերը արշավեցին Բանիյասի ուղղությամբ և ճամբար խփեցին Շաստել Նեով վայրում՝ Բանիյասից ոչ հեռու։ Նուր ալ-Դինը նախընտրեց վերացնել ամրոցի պաշարումը և հեռանալ⁶։

Խաչակրաց երեք պետությունների ղեկավարները որոշեցին զարգացնել հաջողությունը և հարված հասցնել Նուր ալ-Դինի սահմանամերձ Հենակետերին, հատկապես այն քաղաք-ամրոցներին, որոնք տեղաբաշխված լինելով Սիրիայի Հյուսիսից հարավ, պատնեշի դեր էին կատարում Զանգիների պետության համար։

Շարժվելով դեպի Հյուսիսային Սիրիա, խաչակիրների միացյալ բանակը հարձակվեց Զանգիներին պատկանող Շաստել Ռուժ ամրոցի վրա, սակայն անհաջողության մատնվեց։ Ապա խաչակիրները փորձեցին ներխուժել Նուր ալ-Դինի պետության տարածքը՝ Անտիոքի իշխանության

⁶ William of Tyre, v. II, p. 262—264:

կողմից: Այստեղ խաչակրաց առաջնորդները տեղեկացան, որ Նուր ալ-Դինը գտնվում է Հալեպում և ծանր հիվանդ է, որի հետեւանքով մահմեդական բանակում խուճապ է տիրում: Այս հանգամանքը ավելի ոգևորեց ֆրանկների բանակի առաջնորդներին, որոնք որոշեցին արշավանքի մեջ ներզրավել նաև Թորոս Բ-ին:

1157 թ. հոկտեմբերին Բալգուին Գ-ը սուրբանդակ ուղարկեց Կիլիկիա՝ «Թորոսի, մի շատ հզոր հայ իշխանի մոտ», նրան բարեկամաբար հրավիրելով մասնակցել արշավանքին⁷:

Ըստ Գիյոմ Տյուրացու, «Թորոսը պատրաստակամությամբ ընդունեց հրավերը: Վճռական ու եռանդուն այդ մարդը մեկեն մի մեծ բանակ գումարեց և արագ շարժը-վեց գեպի Անտիոք»⁸:

Երբ հայկական բանակը Թորոսի գլխավորությամբ մոտեցավ Անտիոքին, խաչակրաց պետությունների միացյալ զորքերը անմիջապես ուղղվեցին Որոնտես գետի ափին գտնվող Շայզար նշանավոր ամրոցը: Շայզարը մոտ մեկ հարյուրամյակ պատկանում էր Մունկիզների արարական տոհմին, սակայն վերոհիշյալ իրադարձությունների ժամանակ արդեն գտնվում էր Նուր ալ-Դինի ձեռքում⁹:

Քաղաքը լավ գիրք ուներ. շրջապատված էր հզոր ամրություններով, բայց քաղաքի բնակիչները միացյալ բանակի ճնշման տակ ստիպված էին թողնել այն և ամրա-

⁷ Նույն տեղում, էջ 265:

⁸ Նույն տեղում, էջ 265—266:

⁹ Վիճելի է Ս. Պապիկյանի այն կարծիքը, որ վերոհիշյալ արշավանքի ժամանակ Շայզար քաղաքը գեռես ենթակա չէր Նուր ալ-Դինին (տե՛ս Ս. Պապիկյանի Հայերը և խաչակիրքները, Հանդէս ամսօրեայ, 1964, հ. 10—12, էջ 531): Գիյոմ Տյուրացին վկայում է, որ Շայզարի բընակիչները «վստահ էին իրենց քաղաքի պաշտպանումակությանը և իրենց տիրակալի հզորությանը, որը, նրանց կարծիքով, ողջ առողջ էր» (Տե՛ս William of Tyre, v. II, p. 267): Գծվար չէ ենթադրել, որ խոսքը Նուր ալ-Դինի մասին է, որը այդ ժամանակ ծանր հիվանդ էր, բայց Շայզարի բնակիչները տեղյակ չեին:

նալ միջնաբերդում։ Երբ թվում էր, թե Շայզարի բախտը արդեն վճռված է, խաչակիրների առաջնորդների մեջ վեճ առաջացավ, ում էր պատկանելու Շայզարն ու նրա շրջակայքը։ Վեճը ընթանում էր իշխան Ռեյնալդ Շատիլյոնցու և Տրիպոլիսի կոմս Թիերի Ֆլանդրիացու միջև։ Ո՞ւ թագավորին, ո՞ւ էլ մյուս խաչակիրներին շհաջողվեց հարթել այս հակասությունը։ Խաչակիրները շրավվեցին միջնաբերդը ու քաղաքում թողնելով մի փոքր կայազոր, վերադարձան իրենց տիրույթները։

Բնականաբար, Թորոս Բ-ը ևս իր զորքով վերադարձավ Կիլիկիա¹⁰։

Այսպիսով, Բալգուին Գ-ի խոշորամասշտար ձեռնարկումը, որի նպատակը, անկասկած, ավելին էր, քան մեկ քաղաքի նվաճումը, իշխանների անհամաձայնության պատճառով անհաջողության մատնվեց¹¹։

Քրիստոնյա բանակի նահանջը հեշտացրեց Նուր ալ Դինի գործը, որն արդեն ապաքինվել էր։ Նա Շայզար ուղարկեց իր զորավարներից մեկին, որն արագ գրավեց քաղաքը և այն վերամիավորեց Զանգիների տիրույթներին։ Շայզարը Նուր ալ-Դինի համար կարևոր նշանակություն ուներ. նա այստեղից հսկում էր Սիրիայի կենտրոնական շրջանները։

ԺԲ դարի 50-ական թվականների վերջին Կիլիկիան և Սիրիան կրկին կարևոր նշանակություն ստացան Բյուզանդիայի արտաքին քաղաքականության մեջ։ Ճիշտ է, Մանուել Ա-ը, ի տարբերություն իր հոր՝ Հովհաններ Կոմնենոսի, հիմնականում զբաղված էր իտալիացի համար պայքարով, սակայն նա ևս չէր կարող անտեսել արևելյան խնդիրները։

¹⁰ William of Tyre, v. II, p. 266—268.

¹¹ Համաձայն արար պատմիլ Իրն ալ-Կալանխուի, խաչակրաց անհաջողությունը Շայզարի միջնաբերդի մոտ պայմանավորված էր այսեղ գործությունը իսմայիլականների կատաղի դիմադրությամբ (տե՛ս Ibn al-Qalanisi, p. 349).

1158 թվականին Մանուել Ա-ը, բյուզանդական զորքի ղլուխ անցած, ձեռնարկեց խոշոր արշավանք դեպի Կիլիկիա և Սիրիա: Դրա կազմակերպման պատճառներն էին. ա) Ռուբինյան իշխանության վերականգնումը Կիլիկիայում: Բյուզանդիայի ռազմական (1145—1152) և դիվանագիտական (1155—1158) անհաջողությունները Կիլիկիայում և Սիրիայում; բ) Մոսուլի աթարեկության ընդարձակումն ու ուժեղացումը, ապա նուր ալ-Դինի պետության հզորացումը՝ ի վեհաս կայսրության շահերի (1143—1158); դ) 1156 թ. Ռուբինյանների և Անտիոքի խաչակիրների միջև հաստատված հակաբյուզանդական դաշինքը: Նրանց համատեղ արշավանքը բյուզանդական Կիպրոս կղզու վրա:

1158 թ. ամուսն վերջին կայսրը ճանապարհ ընկավ դեպի Ատալիա, այստեղից Կիլիկիա անցնելու նպատակով: Նա գաղտնի էր պահում իր բուն նպատակները և ձևացնում էր, թե կովելու է հկոնիայի սելջուկների դեմ: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Մանուել Կոմնենոսը անսպասելիորեն թափանցեց Կիլիկիա: Թորոս Բ-ը նախընտրեց, իր ընտանիքն ու գանձերը վերցնելով, ապաստանել կեռնային Կիլիկիայում: Այտեղից նա հետևում էր դեպքերի հետագա ընթացքին: Առանց դիմադրության հանդիպելու, Մանուել Ա-ը Դաշտային Կիլիկիայում վերականգնեց բյուզանդական տիրապետությունը և 1158 թ. նոյեմբերին ճամբար խփեց Մամեստիայի մոտ, Տարսոնի դաշտում: Շուտով այստեղ եկավ Անտիոքի իշխան Ռեյնալդ Շատիլյոնցին: Նա զլխարաց, ոտարորիկ ու շղթայակապ ներկայացավ կայսրին՝ հույս ունենալով ներում ըստանալ 1156 թ. Թորոս Բ-ի հետ ձեռնարկած արշավանքի համար: Կայսրը ներում շնորհեց Անտիոքի իշխանին, իսկ վերջինս ճանաչեց Բյուզանդիայի գերիշխանությունը Անտիոքի վրա: Ապա Մամեստիայի ճամբար ժամանեց Երուսաղեմի թագավոր Բալդուին Գ-ը, որն ստանձնեց Մանուել Կոմնենոսին և Թորոս Բ-ին հաշտեցնողի գերը: Ռուբինյան իշխանը և կեռնային Կիլիկիայից իշավ Մամեստիայի

ճամբարը, իր հետ բերելով մեծ քանակությամբ պարեն՝ այն հանձնեց բյուզանդական բանակին:

Բալգուին Գ-ի միջնորդությամբ Մամեստիայի մոտ գտնվող ճամբարում հավաքված տիրակալները ռազմական դաշինք կնքեցին ընդդեմ Նուր ալ-Դինի¹²:

Դեպքերին ժամանակակից Գրիգոր Երեց պատմիչը գրում է. «Յետ այսորիկ խորհուրդ բարի ի մէջ առեալ թագաւորքն¹³ և անյաղթելի զօրք Փրերացն¹⁴, տէրն Անտիոքու և Թորոս, միահամուռն ամենայն ազգ քրիստոնէիցն հաւատովք և զերմեռանդն սրտի միաբանեալ կամ մեռանիլ և կամ փրկել զանզերծանելի գերեալսն ի բազում ժամանակաց յարինաշէն քաղաքէն Հալպայ և Դմշկայ»¹⁵:

Զմեռը Կիլիկիայում անցկացնելուց հետո, 1159 թ. ապրիլին Մանուել Կոմնենոսը շարժվեց դեպի հարավ ու մեծ հանդիսավորությամբ մտավ Անտիոք։ Զնայած բյուզանդական կայսրը նուր ալ-Դինի մոտ էր ուղարկել մի պատվիրակություն՝ հավաստելով իր բարեկամական տրամադրությունները, սակայն նա հավատ շընծայեց այդ խոստումներին։ Նա իր ամիրներին ջիհադի (սրբազն պատերազմի) կոչ արեց՝ լրացուցիչ պարիսպ կառուցելով Հալեպի ամրոցի շուրջը, քանզել տվեց այն քաղաքների պարիսպները (օրինակ Կուրիսի), որոնք պաշտպանելու համար բավարար ուժեր չուներ։ Զանգի տիրակալի զգուշավորությունը անհիմն չէր։ Շուտով դաշնակիցների միացյալ բանակը շարժվեց Հալեպի ուղղությամբ։ Մեկ օրում նըրանք հասան Աֆրին գետին, իսկ մի մասն էլ՝ մինչև իմմբնակավայրը, որը գտնվում էր Հալեպից 30 կմ դեպի արևմուտք։ Սակայն այստեղ երկու կողմերի միջև սկսվեցին երկարատև բանակցություններ և այդպես էլ ռազմական բախում տեղի չունեցավ։ Հայտնի չէ, թե կողմերից

¹² N. Elisseeff, Nur ad-Din, t. II, p. 538—540.

¹³ Սկատի ունի Բյուզանդական կայսր Մանուել Կոմնենոսին և Երուսաղեմի թագավոր Բալգուին Գ-ին։

¹⁴ Նկատի ունի Հյուրբնկալ և Տաճարական ասպետներին։

¹⁵ Մատրէս Ռումիայցի, ժամանակագրութիւն, էջ 419։

որը առաջինը սկսեց բանակցությունները, սակայն ակներեք է, որ Բյուզանդիայի համար Նուր ալ-Դինի դեմ պատերազմը առաջնահերթ խնդիր չէր:

Կայսրության համար ավելի կարևոր էր անմիջական հարեանի՝ Իկոնիայի սելցուկների ուազմական հզորությունը ճնշելը: Նրանք 50-ական թթ. հզորացել ու ընդարձակել էին իրենց տիրութները և սերտ կապեր ունեին Զանգիների պիտության հետ:

Կոստանդնուպոլսում ծագած խոռվության մասին լուրերը վերջնականապես համոզեցին կայսրին հաշտություն կնքել Նուր ալ-Դինի հետ: 1159 թ. մայիսին կնքված հաշտության համաձայն, Նուր ալ-Դինը ազատ արձակեց մի քանի հազար խաչակիրների, որոնք հիմնականում խաչակրաց երկրորդ արշավանքի ժամանակ գերի ընկած գերմանացիներ էին: Երկու տիրակալները թանկարժեք նվերներ փոխանակեցին¹⁶:

Խաչակիր գերիների հիշյալ ազատագրումը, ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ Բալգուին Գ-ի միջամտությամբ:

Բյուզանդիայի համար կարեւոր նշանակություն ունեցավ Մանուել Ա կայսեր հմուտ դիվանագիտական քայլը: Կոստանդնուպոլիս վերադառնալուց առաջ, նա կարողացավ Նուր ալ-Դինին հրահրել ընդդեմ Իկոնիայի սուլթան Կըլըշ Արսլան Բ-ի (1156—1188), այդպիսով իրար դեմ դուրս բերելով իր երկու վտանգավոր հակառակորդներին:

Եթե զնահատենք Մանուել Կոմնենոսի 1158—1159 թրվականների արշավանքը Կիլիկյան Հայաստանի և խաչակրաց պետության շահերի տեսակետից, դժվար չէ նըկատել, որ այն ձեռնտու էր խաչակիրներին: Նրանք ժամանակավորապես (1159—1164) ազատվեցին Նուր ալ-Դինի ուազմական ճնշումից: Երուսաղեմի թագավորին հաջողվեց առանց արյուն թափելու ազատել Հալեպում և Դամասկոսում երկար ժամանակ գերության մեջ գտնվող

¹⁶ N. Elisseeff, Nur ad-Din, t. II, p. 541—543.

Խաչակիրներին: Խաչակիրների կողմից կայսերն արված միակ զիջումը Անտիոքի հանգեց նրա գերիշխանության ընդունումն էր, թեև դա, ըստ էռթյան, ուներ ձեական նշանակություն: Իսկ Ռուբրինյան իշխանապետությունը կրկին պարփակվեց Լեռնային Կիլիկիայի սահմաններում: Թորոս Բ-ը հաշտություն կնքելով Բյուզանդիայի հետ, պահպանեց իր իշխանությունը հավանաբար 1150 թվականի սահմաններում: 1151—1152 թվականներին Դաշտային Կիլիկիայում նվաճված հողերը պահպանելու համար նա պետք է ճակատամարտեր բյուզանդական բանակի դեմ, իսկ դա կարող էր ճակատագրական լինել իշխանության գոյության համար: Ենելով այս հանգամանքից և հաշվի առնելով իր հոր՝ Ալեքսանդրի դառը փորձը, Թորոս Բ-ն նախընտրեց զիջել Դաշտային Կիլիկիան, որտեղ բյուզանդացիները ևս մեկուկես տասնամյակ (1158—1173) հաստատեցին իրենց տիրապետությունը:

Մանուել Կոմնենոսի և Նուր ալ-Դինի միջև կնքված հաշտության հաջորդ տարում (1160) մահմեղական Սիրիայի տիրակալը պատերազմ հայտարարեց Իկոնիայի սովորականությանը: Նա գրավեց Ռաբրանը, Քեսունը, Բեհեսնին և Մարշը: Կըլը Արսլան Բ-ը միայն զիջումների զնալով կարողացավ հաշտություն կնքել թե՛ Նուր ալ-Դինի և թե՛ Բյուզանդիայի հետ¹⁷:

Այսպիսով, վերօնիշյալ՝ մեծ մասամբ հայաբնակ հողերը, միացվեցին Նուր ալ-Դինի պետությանը: Զանգիների պետությունը Ռուբրինյաններին սահմանակից դարձավ արևելքից՝ անմիջական սպառնալիք ստեղծելով հայկական իշխանապետության ինքնուրույնությանը:

Կիլիկիան Հայաստանի համար ձեռնտու էր ունենալ ուժեղ դաշնակից ընդդեմ Նուր ալ-Դինի (թեև այդ ժամանակ վերջինիս կողմից ուղղակի սպառնալիքներ չեին եղել):

¹⁷ C. Cahen, La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, p. 403—404.

Այդ ժամանակ Կիլիկիայի դաշնակիցները խաչակրաց պետություններն էին: Առաջին Հերթին Անտիոքի իշխանությունը և Թորոս Բ-ը շահագրգոված էին սրանց ներքին կայունությամբ: Ահա թե ինչու 1163 թ. Թորոս Բ-ը Անտիոքի պատրիարքի և լատին իշխանների խնդրանքով միջամտեց Անտիոքի իշխանության գահակալական խնդիրներին պատրիարքի և լատին իշխանների խնդրանքով միջամտեց և մտնելով Անտիոք, օգնեց գահին բազմեցնելու օրինական ժառանգին¹⁸:

Թորոս Բ-ը սերտ հարաբերությունների մեջ էր նաև Երուսաղեմի թագավորության հետ, որտեղ Բալգուին Գ-ին հաջորդել էր եղբայրը՝ Ամալրիկ Ա-ը (1162—1173):

Որպես ուստավոր մեկնելով Երուսաղեմ և անձամբ ծանոթանալով Պաղեստինի բնակչության ազգային ու կըրունական կազմին, Թորոս Բ-ը նկատեց քրիստոնյաների փոքրաթիվ լինելը: ԺԴ դարի լատին պատմիչ Էռնովը, որը հիշատակում է Թորոսի ճամփորդության մասին, մեշքերում է Թորոսի և Ամալրիկի միջև կայացած խոսակցությունը: Ռուբինյան իշխանը առաջարկում էր Կիլիկիայից Երուսաղեմի թագավորությունում վերաբնակեցնել 30000 մարտունակ ռազմիկների՝ իրենց ընտանիքների հետ: Ընդ որում առաջին տարին պիտի վերաբնակվեին 15000 և նույնքան էլ՝ հաջորդ տարին¹⁹: Թորոսի առաջարկությունը վկայում է, որ ԺԲ դարի 50-ական թվականներին և 60-ականների սկզբին Կիլիկիան Հայաստանը և Երուսաղեմի թագավորությունը սերտ դաշինքի մեջ էին: Այսինքն՝ Բյուզանդիայի, Իկոնիայի սուլթանության և Նոր ալ Գինի պետության միջև գտնվող Ռուբինյանների Համար խաչակիրների հետ դաշինքը ուներ առաջնակարգ նըշշանակություն:

Ապա էռնովը իր երկում ցույց է տալիս, որ Ամալրիկ Ա-ը և ֆրանկ ազնվականությունը խելամիտ գտան Թո-

¹⁸ The Chronography of Bar Hebraeus, p. 287—288.

¹⁹ Ernoul, p. 27—30, R. Grousset, Histoire des Croisades, v. II, p. 602—603.

րոս իշխանի առաջարկը և որոշեցին բարենպաստ պայմաններ ստեղծել Կիլիկիայից եկող ապագա վերաբնակիչների համար: Սակայն լատին հոգևորականությունը, ցուցաբերելով քաղաքական սահմանափակություն, Թորոս Բ-ի առջև պահանջներ դրեց (ամենայն հավանականությամբ դավանաբանական բնույթի), որոնց հետ նա չէր կարող համաձայնել: Իշխանապետը հրաժարվեց հայերին Պաղեստին վերաբնակեցնելու ծրագրից, ասելով. «Հայերը չեն գնամի օտար երկիր, որպեսզի այնտեղ ծառաներ դառնան»²⁰:

Թեև պատմիչը չի թվագրում վերոհիշյալ իրադարձությունները, սակայն պետք է ենթադրել, որ այն կարող էր լինել նախքան Հարիմի ճակատամարտը (1164), բայց 1162-ից հետո (այս թվականին է, որ Ամալրիկ Ա-ը հրոշակվեց թագավոր): Հետեւար Թորոս Բ-ի ուխտագնացությունը գեպի երրուսաղեմ, ինչպես և հիշյալ իրադարձությունը, տեղի են ունեցել 1162—1164 թվականներին:

Ինչպես վերևում նշվեց, Բյուզանդական կայսրությունը՝ իրար գեմ գուրս բերելով երկու մահմեդական տիրակալների, թուլացրել էր իր անմիջական հարևանի՝ իկոնիայի սուլթանության դիրքերը: Բայց այս պատերազմում նուր ալ Դինի ձեռք բերած նվաճումների հետևանքով վերջինս նույնպիսի հարևան էր դարձել բյուզանդական տիրապետության տակ գտնվող Դաշտային Կիլիկիային: Այս է պատճառը, որ Բյուզանդիան ևս փոխեց իր արտաքին քաղաքականության ուղղվածությունը՝ խաչակիրների ու հայերի հետ մեկտեղ կրկին ընդդիմացավ Սիրիայի տիրակալին:

1164 թ. օգոստոսի 11-ին, Անտիոքից արևելք գտնվող Զարիմ ամրոցի մոտ, Դաշտային Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ Կոստանդին Կալոմանը, Անտիոքի իշխան Բոհեմունդը, Տրիպոլիսի կոմս Ռայմունդը, Թորոս Բ-ն ու իր եղբայր Մլեհը իրենց զորքերով ճակատամարտեցին նուր ալ-Դինի դեմ, որն ավարտվեց վերջինիս կատարյալ հաղթանակով: Դաշնակիցների գրեթե բոլոր զեկավարները, բացառությամբ Թորոսի ու նրա եղբայր Մլեհի, ընկան

²⁰ Ernoul, p. 30.

շրջապատման մեջ ու գերվեցին²¹: Բացառված չէ, որ Թուրոսն ու Մլեհը պարզապես մասնակցած Ախնեին ճակատամարտին կամ սպասողական դիրք բռնած լինեին:

Նման ենթադրության հիմք է տալիս Անանուն Եղեսացու վկայությունը: Խոսելով ճակատամարտի նախօրեի մասին, ասորի պատմիշը գրում է. «Թորոս Հայը՝ Կիլիկիայի իշխանը, նրանց ասաց.—բավարարվենք այն սիրանքով, որ նրանց վննդեցինք բերդից²²: Այժմ գուրս հանենք բերդում գտնվող թուզերին և այնտեղ տեղափորենք մարտունակ ու քաջ մարդկանց՝ բավարար մննդամթերքով: Իսկ մենք վերադառնանք Անտիոք, մինչև երուսաղեմի թագավորը հետ գա Եգիպտացիների երկրից... Տրիպոլիսի կոմսը շանսաց այս խորհրդին...»²³:

Բանն այն է, որ եթե մինչև 1164 թ.՝ Հարիմի ճակատամարտը, գրեթե բոլոր հայ իշխանապետերը, այդ թվում և Թորոս Բ-ն, մեծ պատրաստակամությամբ օգնում էին այս կամ այն խաչակիր իշխանին կամ թագավորին՝ գիտակցելով շահերի ընդհանրությունը, ապա այժմ նման քաղաքականությունը կարող էր վնասել Կիլիկյան Հայաստանի շահերին: Այդ էր պատճառը, որ Ռուբինյանները աստիճանաբար փոխեցին իրենց դիրքորոշումը այս հարցում:

1164 թ. թերեւս որոշ իմաստով կարելի է շրջադարձային համարել Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, քանի որ խաչակիրները դադարեցին լինել Ռուբինյանների քիչ թե շատ վստահելի դաշնակիցները: Դա ավելի պարզորդ դարձավ Թորոս Բ-ի հաջորդի՝ Մլեհի օրոք (1170—1175):

Դեռ Ալիշանը իր «Ծնորհալի և պարագայ իւր» արժեքավոր աշխատության մեջ հետաքրքիր ենթադրություն-

²¹ Abu Shama, Des Deux Jardins, Recueil des Historiens des Croisades, Historiens Orientaux, t. IV, Paris, p. 108—109, Kamal ad-Din Ibn al-Adim, Histoire d'Alep, Damas, 1954, p. 319.

²² Խոսքը Հարիմի ամրոցի մասին է:

²³ Անանուն Եղեսացի...., էջ 122—123:

ներ է անում Հարիմի ճակատամարտի և նրան հաջորդած իրադարձությունների մասին։ Հիմք ընդունելով, հավանաբար, արաբ կամ ասորի պատմիչների տեղեկությունները, նա գտնում է, որ Թորոս Բ-ը հեռացավ ուզմի դաշտից, երբ ֆրանկ և հույն առաջնորդները շանսացին նրա խորհրդին, իսկ եղբայրը՝ Մլեհը, մասնակցեց ճակատամարտին։ Իսկ գերությունից նա փրկվեց շնորհիվ թուրքմենական Ուրյուք ցեղի օգնության²⁴։ Այս ենթագրությունը շատ տրամաբանական է, եթե ընդունենք, որ Մլեհի հետ միասին ոչ բոլոր հայ զինվորներն են փրկվել։ Բանն այն է, որ, բայց Միքայել Ասորու, Հարիմի ճակատամարտից քիչ անց Թորոս Բ-ն ստիպված էր բանակցությունների մեջ մտնել նուր ալ-Դինի հետ գերի ընկած հայերին ազատելու համար²⁵։

Ալիշանը շի հիշատակում իր օգտագործած սկզբնաղբյուրը, բայց շատ հավանական է, որ դա արաբ պատմիչ Քամալ ալ-Դին իրն ալ-Ադիմի կամ նրանից օգտված մի այլ հեղինակի երկն է։

Արաբ պատմիչը հիշրայի 559 թվականի (1163—1164) այլ իրադարձությունների շարքում հաղորդում է Հարիմի ճակատամարտի, այստեղ նուր ալ-Դինի տարած հաղթանակի մասին, ապա գրում է. «...և մահմեդականները արդար էին վարդում գերիների հետ և գերի տարան Անտիոքի տիրոջը, Տրիպոլիսի տիրոջը, Հոռոմների զլիավոր գուկին, ինչպես նաև իրն Զուլինին։ Դերությունից խուսափեց միայն Մլեհ իրն Անոնը, որի մասին ասվում է, որ Յար ուկիները (տեքստում՝ Յարուկիյա) փրկեցին նրան, քանի որ նա իրենց ընկերն էր»²⁶.

Աղբյուրը շի հաղորդում, թե երբ և ինչ հանգստանքնե-

²⁴ Պ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 313.

²⁵ Chronique de Michel le Syrien, t. III, p. 326.

²⁶ Ibn al-Adim, t. II, p. 319.

բում է Մլեհը ընկերացել վերոհիշյալ Յարուկի կամ Ռոբյուք ցեղի հետ:

Այդ նույն՝ 1164 թվականին, Թորոս Բ-ը բանակցությունների մեջ մտավ, բայց Սիրիայի տիրակալը հրաժարվեց ազատ արձակել գերիներին: Որոշ ժամանակ անց, օգովելով այն հանգամանքից, որ նուր ալ-Դինը Հարավային Սիրիայում գրոհում էր ֆրանկների Բանիյաս ամրոցի վրա, Թորոս իշխանը հարձակվեց Զանդիների գերիշխանության տակ գտնվող Մարաշ գավառի վրա: Այստեղ նա մոտավորապես շորս հարյուր գերի վերցրեց, այդ թրվում Մարաշի շրջանում կանգ առած Զանդիների բանակի թուրք ռազմիկներին, այնուհետև սպառնաց նրանց կոտորել, եթե իր պահանջը շրավարարվի: Նուր ալ-Դինը շրջանկացավ Թորոսի հետ բախվելու համաձայնեց գերիների փոխանակելուն: Սա Ռուբինյան իշխանապետության և Զանդիների պետության միջև վերջին ընդհարումն էր: Դրանից հետո, Թորոս Բ-ի իշխանության վերջին տարիներին, Հարաբերությունները այս երկու պետությունների միջև հիմնականում շեղոք բնույթ էին կրում: Բանն այն է, որ նուր ալ-Դինը 60-ական թթ. երկրորդ կեսին մեծ մասամբ ըղբաղված էր Եգիպտոսում մղվող պայքարով: Այս պայմաններում շանկանալով բախվել նաև սեղուկների հետ, նա կըլը Արևան Բ-ին վերադարձրեց (1166 կամ 1167-ին) 1160 թ. նվաճած տարածքները՝ Բեճեսնին, Քեսունը և Մարաշը: Բացի այդ, իր խաղաղասիրական տրամադրությունները հավաստեց Բյուզանդիային՝ գերությունից աղատելով բյուզանդական դուկ Կալոմանին և Անտիոքի իշխան Բոհեմուդ Գ-ին²⁷:

27 Բանն այն է, որ 1160 թ. երեսմնի հղոր պետության՝ Յաթիմյան խալիֆայության գահին նստեց ալ-Աղիդ խալիֆան (1160—1171), որն այդ ժամանակ ընդամենը 9 տարեկան էր և, որին վիճակված էր Յաթիմյան տիրակալների մեջ վերջինը լինել: Նույն այդ ժամանակ ըստանվեց Յաթիմյանների վեգիրը: Օգովելով Կալիրում տիրող խառնակ վիճակից, զլուխ բարձրացրին կենսաբնախույս ուժերը: Միևնույն ժա-

ԺԲ գարի 60-ական թթ. Բ. կեսին թեև նուր ալ-Դինը մեծ մասամբ զբաղված էր Եգիպտոսի համար մղվող պայքարով, բայց նրա ուշադրությունից շէին կարող վրիպել հարկան պետություններում կատարվող քաղաքական ներքին անցուգարձերը: Այդ տարիներին Ռուբինյան իշխանակետության մեջ Թորոս Բ-ի և իր եղբոր՝ Մլեհի հարաբերությունները բավական սրվեցին: Մլեհը ձգտում էր տիրանալ եղբոր իշխանությանը, շխորշելով անգամ նրան սպանելու դավադրությունից: Դավադրությունը բացահայտվեց և Թորոս Բ-ն ստիպված էր եղբորը արտաքսել երկրից²⁸:

Մլեհը գնաց Հալեպ, ծառայության մտավ նուր ալ-Դինի մոտ՝ ստանալով Կուրիս քաղաքն ու գավառը որպես ավատական տիրույթ²⁹: Կուրիսը գտնվում էր Այնթափից հարավ-արևմուտք և Կիլիկիայից բաժանված էր միայն Ամանոսյան լեռներով: Այն, միաժամանակ, Հալեպ-Այաս առևտրական ճանապարհի վրա գտնվող կարևոր կենտրոններից մեկն էր³⁰: Դժվար չէ ենթադրել, թե ինչու նուր ալ-Դինը Մլեհին հանձնեց Կուրիսը: Ինչպիս արդեն վերը նշվեց, դեռևս 1158—1159 թթ., Մանուել Կոմնենոսի արշավանքի ժամանակ, նուր ալ-Դինը բանդել տվեց սահ-

մանակ Եգիպտոսին սպառնում էին Զանգիները և Երուսաղեմի խաչակիրները: 1166 թվականից հետո նուայիա պայքար ծավալվեց Կահիրենու իշխանությունը դրաված Դիրդամի և Եգիպտոսի կառավարի միջև: Իրաշկանում պայքարն ընթանում էր Երուսաղեմի թագավորության և Զանգիների պետության միջև, որն ավարտվեց 1160 թ., վերջինիս հաղթանակով: Նուր ալ-Դինի զորավար Շիրբուհի զարմիկը՝ Սաւան ալ-Դին Ալյուրին, իր ձեռքը վերցրեց Եգիպտոսի կառավարումը (Նրա ենթակայությունը նուր ալ-Դինին ձևական էր և Եգիպտոսը այդպիս էլ շմտավ Զանգիների պետության կազմի մեջ): Երկու տարի անց (1171) հիմնվեց նոր, անկախ պետություն՝ Ալյուրյան սուլթանությունը:

²⁸ Սամուել Աննեցի, Հաւաքմունը ի գործ պատմագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 135:

²⁹ Սմբատ Սպարապետ, Տարեգիբը, Վենետիկ, 1956, էջ 187:

³⁰ Գ. Ալիշան, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 56:

մանամերձ մի քանի ամբոցների ու քաղաքների, այդ թը-
վում և Կուրիսի պարիսպները³¹, դրանք պաշտպանելու դըժ-
վարության պատճառով: Շատ հավանական է, որ մինչև
1165—1166 թթ. Կուրիսի պարիսպները գեռեւս չեին վե-
րականգնվել, իսկ Սիրիայի տիրակալը վստահ էր, որ Մը-
լեհի պես եռանգույն ու նախաձեռնող իշխանը կարող է
ոչ միայն կարծ ժամանակում վերակառուցել դրանք, այլև
հաջողությամբ պաշտպանել այն հնարավոր հարձակում-
ներից: Բացառված չէ, որ իր գերը խաղաց նաև Կուրիս գա-
վառի մեծ մասամբ հայաբնակ լինելը:

Մըլեհի Հալեպ գնալը և նուր ալ-Դինի մոտ ծառայու-
թյան մեջ մտնելը, ըստ Ղեոնդ Ալիշանի, տեղի է ունեցել
մոտավորապես 1165—1166 թվականների միջեւ³²: Հետեա-
բար, Մըլեհը մոտ հինգ տարի (1165—1170) տիրել է Կու-
րիս գավառին: Այդ նույն տարիներին Թորոս Բ-ի վարած
արտաքին քաղաքականության մասին խոսելիս Ալիշանը
գրում է. «Թորոս անկէ ետև զգուշութեամբ և բարեկա-
մութեամբ կը վարուէր Նուրէտտինի հետ, որ աւելի աղեկ
խոստմունք կը պահէր և կը պատկառէր ի Թորոսէ»³³: Թեև
ուսումնասիրողը չի պարզաբանում, թե ինչու էր Թորոսը
զգուշորեն ու բարեկամաբար վերաբերվում նուր ալ-Դինի
հանդեպ, բայց դժվար չէ ենթադրել, որ դա պայմանավորված
էր Նուր ալ-Դինի հզորացմամբ ու խաչակիրների ռազմական
անհաջողություններով (մանավանդ Հարիմի 1164 թ. ճակա-
տամարտում): Հնարավոր է՝ Թորոսը հաշվի էր առնում նաև
այն հանգամանքը, որ Մըլեհը ծառայում է նուր ալ-Դինին և
վերջինիս օգնությամբ կարող է խլել իշխանությունն իր

³¹ Կուրիսը, որ լավ ամրացված քաղաք էր, մի ժամանակ պատկա-
նում էր Գող Վասիլի Եղրայր Բաղրամին: Բաղրուին զը Բուրգը խել
էր այն հայ իշխանից՝ միացնելով Եղեսիայի կոմսությանը: Այս մեծ
մասամբ հայաբնակ քաղաքն ու գավառը 1151—1152 թթ., ի շարս այլ
վայրերի, անցավ Նուր ալ-Դինին, որն եւ այն մոտավորապես 1165—
1166 թթ. հանձնեց Մըլեհին որպես կալված:

³² Ղ. Ալիշան, Ծնորհալի և պարագայ իւր, էջ 319:

³³ Նուր տեղում:

ձեռքից: Այդ վտանգը նրան ստիպում էր հաշտության եղբեր փնտրել նաև Մլեհի հետ: Ինչ վերաբերվում է Նուր ալ-Դինի «խոստմունք» պահելուն³⁴, ապա պատմիլը հավանաբար նկատի ունի գերի ընկած հայ զինվորների ազատարձակումը 1164 թ.: Թերու հեղինակը ակնարկում: Է նաև Թորոս իշխանի և Նուր ալ-Դինի միջև եղած ինչ-որ մի հաշտության մասին, բայց մեզ հայտնի աղբյուրներում նման տեղեկություն չկա:

1169 թ., Թորոս Բ-ի մահից հետո, նրան հաջորդեց մանկահասակ որդին՝ Ռուբեն Բ-ն, որի խնամակալն էր Թոռմաս Պայլը³⁵: Սակայն Ռուբեն Բ-ը հաղիկ մեկ տարի իշխեց: 1170 թ. Մլեհը, Նուր ալ-Դինից ստացած օգնական զորաջոկատով մտավ Կիլիկիա և տիրացավ իշխանությանը³⁶: Ռուբեն Բ-ն ուղարկվեց Հռոմելա, որտեղ էլ շատ շանցած վախճանվեց: Կիլիկիա մտնելու պահից սկսած Մլեհը դադարեց Նուր ալ-Դինի վասալը լինելուց և վերածվեց նրա դաշնակցի: Խսկ հետագայում հույներից ու ֆրանկներից գրաված բոլոր հողերը Մլեհը միացրեց իր իշխանապետությանը: Իր իշխանության հինգ տարիների ընթացքում (1170—1175) նա վարում էր բացահայտ հակաբյուղանդական և հակալատինական քաղաքականություն: Իր արտաքին քաղաքականության մեջ նա հենվում էր ոչ միայն Զանգիների, այլև ուրիշ մահմեդական պետությունների վրա՝ նրանց հետ ուղմական դաշինքի մեջ մտնելով: Մեզ հայտնի առաջին նման դաշինքը կնքվեց 1171 թվականին: Բյուղանդացի պատմիլ Հռվիճաննես Կինամոսը այդ մասին գրում է. «Բերիայի (իմա՝ Բիրիայի՝ Հալեպ) սատրապ Նուրադինը, Լիկաոնիայի հեգեմոն սուլթանը, Հայոց իշխան Մլեհը և Անկյուրացոց և մյուս Գաղատիայի արխոնտը Հա-

³⁴ Ալիշանը հավանաբար փորձում է հակադրել Նուր ալ-Դինին և իսակակիրեներին:

³⁵ Սմբատ Սպարապետ, Տարեգիրը, էջ 189:

³⁶ Chronique de Michel le Syrien, t. III, p. 331, William of Tyre, v. II, p. 386—387.

մածայնության եկան (իմա՝ դաշնակցեցին) հռոմայեցվոց վրա (գեմ) արշավելու մասին»³⁷:

Այս ռազմական դաշինքը հույն պատմիչը թվագրում է 1171—1172 թթ.: Ինչպես երևում է Հաղորդումից, բացի նուր ալ-Դինից, Լիկառնիայի կամ, որ նույնն է, Իկոնիայի սովորականից (Կըլըլ Արսլան Բ-ը) և Մլեհ իշխանապետից, Հակաբյուզանդական դաշինքի մասնակիցների մեջ էր նաև «Անկյուրացոց և մյուս Գաղատիայի արխոնտը», որը, ամենայն հավանականությամբ, Դանիշմանյան ամիրն էր:

Մլեհի դաշնակցությունը Զանգիների պետության, Իկոնիայի սովորականության և Դանիշմանյան ամիրության հետ ապահով էր դարձնում Ռուբինյան իշխանապետության սահմանների մեծ մասը և, միաժամանակ, Հզոր հենարան էր Բյուզանդական կայսրության դեմ պայքարում:

Հենվելով նուր ալ-Դինի արամադրած օգնության վրա, Մլեհը 1173 թ. հունվարին վճռական Հաղթանակի է տանում բյուզանդական զորավարներ Միքայել Վուասի, Կոստանդին Եվփորպետի և Կոստանդին Կալոմանի գլխավորած կայսերական բանակի նկատմամբ և ազատագրում Դաշտային Կիլիկիայի մեծ մասը, որը բյուզանդական գերիշխանության տակ էր 1158 թվականից սկսած: Իբն ալ-Ասիրը նշում է. Նուր ալ-Դինը օգտագործեց Մլեհին իր հավատակիցների դեմ պայքարում՝ այդ պարտականությունից ազատելով իր զորքերի մի մասին: Ապա շարունակում է. «Սակայն Մլեհն էլ իր հերթին հենվում էր նուր ալ-Դինի վրա դրացի հայերի³⁸ և հոռոմների դեմ (պայքարելու համար): Աղանա, Մամեստիա և Տարսոն քաղաքները Կոստանդնուպոլսի տիրոջ՝ Ռումի թագավորի ձեռքում էին, իսկ Մլեհը վերցրեց նրանից, որովհետեւ դրանք իր երկրին հարեան էին: Ռումի թագավորը մեծ զորք ուղարկեց նրա դեմ (հրամանատար) նշանակելով իրեն ազգա-

³⁷ Recueil des Historiens des Croisades, Historiens grecs, t. I, Paris, 1875, p. 312.

³⁸ Նկատի ունի Լամբրոնի հայ իշխաններին, որոնք Բյուզանդիայի վասալներն էին:

կան մի քանի հայտնի պատրիկների: Մլեհը նուր ալ-Դինի զորքերի հետ նրանց գեմ դուրս եկավ պատերազմի և համառ կովից հետո հոռոմները պարտվեցին, շատերը բապանվեցին ու գերի ընկան: Մլեհի ուժն ավելացավ, իսկ հոռոմներն իրենց հույսը կտրեցին այդ երկրից: Մլեհը նուր ալ-Դինին ուղարկեց իր ավարի զգալի մասը և երեսուն հոգի (հոռոմների) նշանավոր ու երևելի մարդկանցից: Նուր ալ-Դինը սրա մի զգալի մասը ուղարկեց ալ-Մուստափի Բիամբիլլահ խալիֆային³⁹ և գրեց նրան, հպարտանալով ձեռք բերված հաղթանակով (որպես իրենը ներկայացնելով), քանի որ իր զինվորներն էլ էին այն իրագործել»⁴⁰:

Իրն ալ Ասիրի հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Մլեհը նվաճել էր Դաշտային Կիլիկիան դեռևս մինչև վերոհիշյալ ճակատամարտում բյուզանդացիների նկատմամբ իր տարած հաղթանակը: Նա փաստորեն պաշտպանում էր արդեն գրավված տարածքները: Հետեւար Աղանա, Մամեստիա և Տարսոն քաղաքները կարող էին Մլեհի կողմից նվաճված լինել 1172 թվականի ընթացքում կամ 1173-ի սկզբին: Ուշադրության է արժանի նաև պատմիչի հաղորդման հետեւյալ տողը. «Մլեհն ուժեղացավ, իսկ հոռոմներն իրենց հույսը կտրեցին այդ երկրից»⁴¹:

Բյուզանդիայի հանդեպ հայերի տարած այս հաղթանակը վճռական նշանակություն ուներ Կիլիկիայում բյուզանդական տիրապետության համար: Կայսրությունը Ռուբինյաններին զիշեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը, իսկ մեկ տասնամյակ անց նաև՝ իր բոլոր մնացած տիրութները Կիլիկիայում:

Նուր ալ-Դինը իր իշխանության վերջին տարիներին ակտիվորեն միջամտում էր ոչ միայն Եղիպտոսի, այլև

³⁹ Խոսքը վերաբերվում է Բաղդադի խալիֆային:

⁴⁰ Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Իրն ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 262—263:

⁴¹ Նույն տեղում, էջ 263:

Փոքր Ասիայի ներքին դործերին: Այստեղ, սկսած ԺԲ դարի առաջին կեսից, պայքար էր ընթանում Իկոնիայի սովորականության և Դանիշմանյան ամիրության միջև: Սկզբում հաջողությունն ուղեկցում էր Դանիշմանյաններին, իսկ ԺԲ դարի 60—70-ական թթ. վերջիններս զիջել էին իրենց տիրապետող գիրքերը Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան շրջաններում: Իրենց գոյությունը պահպանվում էր Դամար Դանիշմանյանները ստիպված էին անընդհատ զիմել Բյուզանդիայի, իսկ վերջին շրջանում էլ՝ Զանգինների ուղմական օգնությանը:

1172 թ. Դանիշմանյան ամիրության մեջ պետական հեղաշրջում տեղի ունեցավ: Սպանվեց ամիր Իսմայիլը և նրա փոխարեն մայրաքաղաք՝ Սերաստիա հրավիրվեց Զուլ-Նուն Դանիշմանյանը, և հոչակվեց ամիր: Իկոնիայի սովորական կըլը Արալան Բ-ը, օգտվելով Դանիշմանյան ամիրության մեջ տիրող այս անկայուն վիճակից, հարձակվեց Սերաստիայի վրա, գրավեց այն և փախուստի մատնեց Զուլ-Նունին: Վերջինս ստիպված էր օգնություն խնդրել իր աներոջից՝ Սիրիայի տեղակալ Նուր ալ-Դինից⁴²:

Իկոնիայի սովորականության հզորացումը և Սերաստիայի ու շրջակա գավառների նվաճումը վտանգում էր Նուր ալ-Դինի հեռահար ծրագրերը Փոքր Ասիայում, ինչպես նաև սպառնում էր դաշնակից Մլեչին: Այս հանգամանքը դրդեց Նուր ալ-Դինին միջամտել ամիրության ներքին դործերին:

Արձագանքելով Զուլ-Նունի զիմումին, Նուր ալ-Դինը 1173 թ. հուկահ երկրորդ կեսին նախ նվաճեց մի ժամանակ (մինչև 1166—1167 թթ.) իրեն պատկանած Քեսունը, Բեհեսնին, Մարաշը և Մարզուրանը, ապա նաև Սերաստիան: Այս իրադարձությունների մասին հաղորդող հիմնական աղբյուրը իրն ալ-Ասիրի երկն է, որտեղ ասվում

⁴² Danishmends, Encyclopaedia of Islam, v. III, p. III.

է. վերոհիշյալ վայրերի նվաճմանը նուր ալ-Դինը անձամբ մասնակցել է, իսկ Սեբաստիայի գրավմանը՝ ոչ⁴³:

Աղբյուրների տեղեկությունների համադրումը բերում է այն եզրակացության, որ Սեբաստիայի նվաճումը ղեկավարել կամ առնվազն դրանում կարեռ մասնակցություն է ունեցել Ծուրբինյան իշխանապետ Մլեհը:

Արար պատմիշ Արու Շաման իր «Քիթաբ ուլ-Ծառուդաթայն» գրքում, 1173 թ. հունվարին և հուլիս-օգոստոս ամիսներին տեղի ունեցած գեղքերը հիշելով, միաժամանակ գրում է. «...Նախապես հիշված Մալիհ իրն կառնը՝ Հայոց երկրի առաջնորդը, գնաց նուր ալ-Դինի մոտ և նրա ուժերով նետվեց Հուների և Հայերի վրա⁴⁴ և (այդ ժամանակ) Աղանայի, Մասիսայի (Մամեստիա) և Սիվասի (Սեբաստիա) տակ գտնվող կիրճերը պատկանում էին շուն Հուներին և գրավեց (Մլեհը) գրանք իր գնդով և տիրեց գրանց Մալիհ իրն կառնը...»⁴⁵: Այստեղ անհասկանալի է, թե ինչու է պատմիշը Սեբաստիայի տակ գտնվող կիրճերը ևս թվարկում Բյուզանդիային ենթակա վայրերի թվում:

Վերոհիշյալ պատերազմից առաջ կամ նրա ընթացքում ստեղծվել էր մի քանի պետությունների նոր ռազմական դաշինք՝ ուղղված ոչ թե Բյուզանդիայի, այլ Իկոնիայի սուլթանության դեմ: Դաշինքի մեջ, բացի նուր ալ-Դինից և Դանիշմանյաններից, մտնում էին նաև Արտուխյան ամիրը և իշխան Մլեհը: Արու Շամայի վերոհիշյալ տեղեկությունը ևս վկայում է այն մասին, որ Կիլիկիայի Ծուրբինյան իշխանապետությունը ևս իր գաշնակիցների հետ հանդիս է եկել ընդդեմ Իկոնիայի սովթանության:

Մինչև նուր ալ-Դինի մահը (1174), Սեբաստիան մնաց Զանգիների ազդեցության ոլորտում, թեև այստեղ իշխում էր Զուլ-Նումը: 1174 թվականից հետո, երբ նուր ալ-Դի-

⁴³ Իրն ալ-Ասիր, էջ 263—264:

⁴⁴ Խոսքը վերաբերվում է Բյուզանդիայի վասալ Լամբրոնի իշխաններին:

⁴⁵ Abu Shama, Kitab al-Raudatayn, p. 215.

նի զորքը նահանջեց այդ շրջաններից, Սեբաստիային կրկին տիրեց հկոնիայի սուլթան Կըլըշ Արսլան Բ-ը:

Մէհմի իշխանության առաջին երեք տարիներին Հայոց կաթողիկոսն էր միջնադարի մեծ բանաստեղծը՝ Ներսես Կլայցին կամ Շնորհալին (1166—1173):

Նկատի ունենալով, որ Մէհմի յուրօրինակ արտաքին քաղաքականություն էր վարում և լարված հարաբերությունների մեջ էր տարածքաշրջանի գրեթե բոլոր քրիստոնյա պետությունների հետ, հետաքրքիր է քննել նրա և կաթողիկոսի հարաբերությունները, մանավանդ որ վերջինս ոչ միայն հոգեոր, այլև քաղաքական զործի էր:

Ժամանակակից պատմիչները գրեթե ոչինչ չեն գրում Մէհմի և Շնորհալու հարաբերությունների մասին: Հայտնի է, որ Թորոսի որդի Ռուբեն Բ-ը (1169—1170), 1170-ին փախչելով Մէհմի հալածանքներից, անցավ Հռոմեա⁴⁶ Ներսես Շնորհալու նստավայրը, որտեղ էլ շատ շանցած վախճանվեց: Սակայն այս հանգամանքը հիմք չի տալիս պնդելու, թե իշխանապետն ու կաթողիկոսը թշնամական հարաբերությունների մեջ էին: Ավելին, Հայ-բյուզանդական եկեղեցական միության վերաբերյալ տարվող (ժթ դարի 60—70-ական թթ.) բանակցությունների ժամանակ Ներսես Շնորհալին բարդ դիվանագիտական պայքարում կարողացավ պաշտպանել հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու անկախությունը բյուզանդական եկեղեցուց: Կարելի է եղրակացնել, որ Շնորհալին որոշ առումով հանդես եկավ իրու Մէհմի աջակից՝ Բյուզանդական կայսրության հանդեպ նրա արտաքին քաղաքականության մեջ:

⁴⁶ Գեռես Շնորհալու նախորդի՝ Գրիգոր Գ-ի (1113—1166) օրոք Հայոց կաթողիկոսի նստավայրը Մովքն էր, Տլուքից ոչ հեռու Սակայն 1149 թվականից հետո Մովքը անապահով վայր էր, և կաթողիկոսը նախընտրեց տեղափոխվել առավել ապահով և պաշտպանված մի վայր: 1149 կամ 1150 թվականին, երբ Եղեսիայի կոմսությունը իր հոգեվարքի օրերն էր ապրում, իսկ Զուլին Բ-ը գերված էր, Գրիգոր Գ-ը Հռոմեա բերդաքաղաքը գնեց կոմսուհի Բեատրիսից և այն դարձեց իր աթոռանիստը (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգակատում, հ. 1, էջ 1375):

1173 թ. վախճանվեց Ներսես Շնորհալին: Մահվանից առաջ նա իրեն հաջորդ էր նշանակել իր Վասիլ եղբոր որդուն՝ Գրիգոր Տղային: Սակայն մահանալու պահին, ինչպես հաղորդում է Միքայել Ասորի պատմիչը, նրա մահճի մոտ էր մյուս եղբոր՝ Շահանի որդին՝ Գրիգոր Ապիրատը, որին էլ Ներսեսը հանձնեց իր մատանին: Հենց նա էլ Շնորհալու մահից հետո զարձավ կաթողիկոս:

Գրիգոր Տղան, իր իրավունքը ունահարված համարելով, գիմեց Մլեհ իշխանապետի օգնությանը: Վերջինս Գրիգոր Տղայի օգտին վկայեց նուր ալ-Դինի մոտ: Միքայիլ տիրակալի միջամտությամբ ձերբակալեցին Գրիգոր Ապիրատին և կաթողիկոս ընտրեցին Գրիգոր Տղային կամ Գրիգոր Դին (1173—1193)⁴⁷: Ըստ աղբյուրների տեղեկությունների, կաթողիկոս ընտրվելով Գրիգոր Տղան նուր ալ-Դինին է ուղարկում 50000 դինարի մի խոշոր գումար որպես շիզյա (գլխահարկ, որ վճարում էին քրիստոնյաները խալիֆային կամ մահմեդական տիրակալին): Սակայն գժվար է ասել այդ վճարումը պարբերաբար վճարվող շիզյա էր, թե միանվագ վճար՝ որպես նվեր նուր ալ-Դինին՝ նրա ցուց տված աջակցության համար⁴⁸:

Մլեհի իշխանության բուռն իրադարձություններով հարուստ տարիները կարելի է համարել 1172—1173 թթ., նա պատերազմներ մղեց թե՛ Բյուզանդիայի և թե՛ Իկոնիայի սուլթանության դեմ, միջամտեց կաթողիկոսի ընտրությանը: Հենց 1173 թվականին Սիսը դարձավ իշխանապետության մայրաքաղաք: Նա բախվեց նաև խաչակիրների հետ:

Օգտվելով խաչակիրների թուլությունից, նուր ալ-Դինի հարվածներից և Դաշտային Կիլիկիայի մեծ մասին տիրելուց հետո, Մլեհը գրավեց Տաճարականների տիրությունները Ամանուսյան լեռներում, որոնք 1156-ին խլվել էին Ռուբինյան իշխանապետությունից: Դրանց մեջ էր նաև Բաղրամ

⁴⁷ Chronique de Michel le Syrien, t. III, p. 353—355.

⁴⁸ Djizya, Encyclopaedia of Islam, v. II, p. 573—576.

կամ Գաստոն ամրոցը: Դեպքերի այսպիսի ընթացքը շափազանց վտանգավոր էր խաչակիրների համար:

Իսկ երբ Զանգիների գլխավորությամբ սկսեց ձեւվորվել մահմեղական ընդհանուր ճակատ ընդդեմ խաչակիրների, վերջիններս փորձում էին նույնպիսի միացյալ ճակատ ստեղծել քրիստոնյա պետություններից: Ու թեև մինչ այդ խաչակիրները (Հատկապես Եղեսիայի կոմսությունը) ավելի շատ նպաստել էին հայկական իշխանությունների վերացմանը, քան որևէ կերպ օգնել, Մլեհի բռնած դիրքը նրանց կողմից գնահատվեց որպես դավաճանություն:

1173 թ. Անտիոքի իշխան Բոհեմոնդ Գ-ի խնդրանքով երուսաղեմի Ամալրիկ Ա. թագավորը արշավանք ձեռնարկեց դեպի Կիլիկիա՝ նպատակ ունենալով «պատժել» Մլեհին: Սակայն Նուր ալ-Դինը, որպես Մլեհի դաշնակից, այդ նույն ժամանակ ուղղմարշավ կազմակերպեց Քարաքից Հյուսիս (Պաղեստին), որով ստիպեց երուսաղեմի թագավորին ընդհատելու արշավանքը դեպի Կիլիկիա⁴⁹:

Դիյոմ Տյուրացին, անդրադառնալով Կիլիկիայի և երուսաղեմի թագավորության միջև վերոհիշյալ անցուղարձերին, նշում է. Ամալրիկ թագավորը մի քանի անգամ դեսպան ուղարկեց Կիլիկիա՝ առաջարկելով Մլեհին Հանդիպել և Հաշտություն կնքել, բայց Մլեհը նրանց ընդառաջ չգնաց⁵⁰: Հավանաբար նա կասկածում էր, որ Ամալրիկ թագավորը իր դեմ կարող էր ծուղակ պատրաստած լինել:

Խոսելով Նուր ալ-Դինի և Մլեհի դաշինքի մասին, արար պատմիչները դրան տարբեր գնահատականներ են տալիս:

Իր երկում իրն ալ-Ասիր պատմիշը գովերգում է մահմեղական տիրակալին՝ նշելով. Հայ իշխանին սիրաշահելը և նրան ընդդեմ ֆրանկների օգտագործելը վկայում էր

⁴⁹ The Chronography of Bar Hebraeus, p. 288, C. Cahen, La Syrie du Nord, p. 414.

⁵⁰ William of Tyre, v. II, p. 387—388.

Նուր ալ-Դինի հնարամտության և հեռատեսության մասին⁵¹: Մինչդեռ մեկ այլ աղբյուր՝ ԺԴ գարի պատմիշ ալ-Զահաբին, այլ կարծիք է հայտնում: Նա գրում է. «Նուր ալ-Դինը, այս իշխանի խորամտությամբ և աննկուն բնավորությամբ հիացած, նրա մեջ տեսնում էր մի դաշնակցի՝ ֆրանկների գեմ պատերազմում: Նա նրան տվեց Սսի երկրի հողերը, որպես կալված՝ ասելով,—նա կովում է յուրացինների գեմ և մի պատնեշ է, որ կփակի Կոստանդնուպոլսի կայսրի ճանապարհ»⁵²: Ապա արար պատմիշը շարունակում է. «Բայց հոռոմների գեմ իր տարած հաղթանակից հետո Մլեհը հանդգնեց պաշտպանական ամրություններով ամրացնել Սսի երկիրը: (Մլեհի հանդեպ) Նուր ալ-Դինի տածած շափից ավելի վստահությունը նրա թույլ տված սակավ սիսալներից մեկն էր»⁵³:

Այս համագործակցությունը իրոք ավելի ձեռնտու էր կիլիկիայի համար: Ճիշտ է, Մլեհի իշխանությունը մի պատնեշ էր Նուր ալ-Դինի պետության և Բյուզանդիայի միջև: Սակայն հետագայում Մլեհը, հենվելով Նուր ալ-Դինի ռազմական օգնության վրա, հասավ Ռուբինյանների համար կենսական մի քանի հարցերի լուծմանը: Նախ՝ հույններից աղատագրեց Կիլիկիայի խոշոր քաղաքները՝ Ադանան, Մամեստիան և, հավանաբար, Տարսոնը:

Ս. Պապիկյանի «Հայերը և խաչակիրները» հոդվածը հիմնականում հենվում է Ռ. Գրուսեի «Խաչակրաց արշավանքների պատմությունը» գրքի վրա, սակայն հեղինակը ունի նաև ինքնուրույն դատողություններ ու եզրակացություններ: Ս. Պապիկյանը այս հոդվածում անդրադառնում է Մլեհի արտաքին քաղաքականությանը՝ այն անվանելով «կարճատես», որը ազգին դեպի կործանում էր տանում⁵⁴:

⁵¹ Իր ալ-Ասիր, էջ 362:

⁵² Al-Dahabi, Kitab duwal al-Islam, Damas, 1979, p. 148.

⁵³ Ibidem.

⁵⁴ Ս. Պապիկյան, Հայերը և խաչակիրները, Հանդես ամսօրյա, 1965, ապրիլ-հունիս, հ. 4—6, էջ 273:

Մեր կարծիքով, Մլեհի քաղաքականությանը տրված նման գնահատականը սխալ է ու անհիմն: Թեև Մլեհի հաջորդներից և ոչ մեկը չէր վարում նման ընդգծված հակալատին քաղաքականություն (Բյուզանդիայի հետ հարաբերությունները ժի դարի 80-ական թվականներից աստիճանաբար անցան երկրորդ պլան), սակայն գրեթե բոլոր իշխանապետերն ու արքաները ձգտում էին աղատվել խաշակիրների ոչինչ շտվող «բարեկամությունից» և բարեկամական կամ դաշնակցային կապեր հաստատել անընդհատ հզորացող մահմեդական պետությունների հետ: Եվ Ռուբեն Գ-ը և Լևոն Բ-ը և Կոստանդին պայլը (որը 1224—1226 թվականներին կառավարում էր Կիլիկիան) բոլորովին էլ չէին խորշում նման «կարճատես» քաղաքականությունից, եթե այդ էին պահանջում Ռուբենյանների և Կիլիկիայի շահերը:

Քաղաքական նման դիրքորոշումը մեծապես նպաստեց, որ Մլեհից հետո էլ Ռուբենյան իշխանապետությունը (իսկ 1198-ից՝ թագավորությունը) շարունակեց ամրապնդվել և ընդարձակվել:

Նույր ալ-Դինի մահից հետո Մլեհը իշխեց մեկ տարի: Մահմեդականների հետ դաշնակցելը, ներքին խիստ քաղաքականությունն ու անհաշտ բնավորությունը Մլեհի դեմ տրամադրեցին ավատատերերի մի մասին և հոգևորականությանը: 1175 թ. նրա դեմ կազմակերպվեց դավադրություն: Մլեհը սպանվեց դավագիր իշխանների կողմից՝ Սիսում: Մլեհին ասպարեզից հանելու մեջ թերևս ավելի շահագրգրված էր Բյուզանդական կայսրությունը: Եվ պատահական չէ ժամանակակիցներից մեկի վկայությունը. Հուլյանները մասնակցել են Մլեհի դեմ նյութված դավադրությանը և հայոց իշխանապետը սպանվել է հուլյ զինվորի ձեռքով⁵⁵:

Նրան հաջորդած Ռուբեն Գ-ը (1175—1187) Մլեհի եղբոր՝ Ստեփանեի որդին տեղեկացավ իր հորեղբոր սպա-

55 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 112.

նողների մասին և մահապատժի ենթարկեց նրանց՝ պարանոցներին ծանր քարեր կապելով ու գետը նետելով: «Նա ևս առաւել այնոցիկ բարիս խոստանար, որոց ձեռամբ սպանաւ հօրեղբայրն իւր՝ ծանիցէ զնոսա: Եւ յարեան արք երկուք խաբեալք հիմարութեամբ, և ասեն՝ մեք բսպանաք ձեռօք մերովք զնա յաղագս սիրոյ քո. և նա յոյժ շնորհակալ եղաւ նոցա. և ապա հրամայէ կապել վէմս ի պարանոց նոցա և ձգել ծածկաբար ի գետն, որոց էին անուանքն միոյն Զահան և միւսոյն Ապլղարիպ, որ էր ներքինի»⁵⁶:

Այս հաղորդման մեջ շեն կարեորվում Մլեհին սպանողները, այլ այն, որ Մլեհի քաղաքականությունը Կիլիկիայում ուներ նաև իր կողմնակիցները, որոնց տրամադրությունները արտահայտվեցին Ռուբեն Գ-ի վերոհիշյալ որոշման մեջ, քանի որ Մլեհին սպանողների մահապատիժը դժվար է բացատրել միայն որպես ազգականի վրեժխնդրություն⁵⁷:

Մլեհի հանդեպ հավատակիցների թշնամանքը և միջնադարյան հայ պատմիչների կողմից նրան տրված բացասական բնութագրումները բացատրվում են միջնադարին բնորոշ կրոնական անհանդուրժողությամբ: Մինչդեռ նուր ալ-Դինի հետ նրա դաշինքը խելամիտ, թեև շատ կտրուկ դիվանագիտական քայլ էր, որի իրավացիությունն ապացուցվեց հետագա իրադարձություններով:

Նուր ալ-Դինի հետ հայ իշխանի դաշինքով Կիլիկիան շդարձավ վասալ իշխանություն: Ավելին, ինչպես գրում է իրն ալ-Ասիրը. «Մլեհին հաջորդող Հայոց տիրակալը⁵⁸ մահեղական երկրներից շատ քաղաքներ ու բերդեր գրավեց և

⁵⁶ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 192.

⁵⁷ Նույնպիսի հիշատակություն կա նաև Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ (տե՛ս Միքայել Ասորի, Ժամանակագրություն, էջ 474):

⁵⁸ Քառ երկութին նկատի ունի Առն Բ-ին (1187—1213), թեև Մլեհի հաջորդը Ռուբեն Գ-ն էր (1175—1187):

դրանից մեծ շարիք ու հսկայական վնաս հասավ և այդ
(կորցրածը) հնարավոր չէ հետ ստանալ»⁵⁹:

Այսպիսով.

ա) իշխանապետության վերականգնումը 1145-ին,
ինչպես նաև Թորոս Բ-ի ջանքերով նրա - ընդարձակումը
1150—1152 թվականներին, մեծապես պայմանավորված էին
Մոսուլի աթարեկության կողմից խաչակիրներին հասցված
հարվածներով՝ եղեսիայի գրավմամբ (1144), իսկ հետա-
գայում (1149—1151 թթ.) կոմսության ոչնչացմամբ՝ հա-
րեան մահմեղական պետությունների կողմից: Երկու դեպ-
քում էլ վճռական նշանակություն ունեցան Բյուզանդիայի
հիմնական զինված ուժերի նահանջները 1143—1144 և 1150
թվականներին:

բ) 1156—1164 թվականների ընթացքում խաչակիրնե-
րի՝ հիմնականում անհաջող, ուազմական ձեռնարկումները
հայերին ցույց տվեցին նրանց հետ գաշինքի անհեռանկա-
րությունը: Հայ իշխաններն արդեն չէին կարող իրենց
ապահով զգալ որպես խաչակիրների դաշնակիցներ: Այս
ամենը ստիպեց Թորոս Բ-ին իր իշխանության վերջին տա-
րիներին շեղոք քաղաքականություն վարել ինչպես նուր ալ-
Դինի, այնպես էլ խաչակիրների նկատմամբ:

գ) Մեհի օրոք (1170—1175) հայ-խաչակիր գաշինքը
վերջնականապես խղվեց: Կիլիկյան Հայաստանը դարձավ
Զանգիների պետության դաշնակիցը: Ընդ որում Մեհի օրոք
Ռուբինյան իշխանապետությունը կարողացավ շոշափելի
հարված հասցնել Բյուզանդիային, խաչակիրներին և իկո-
նիայի սելջուկներին:

⁵⁹ Իբն ալ-Ասիր, էջ 362:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԺԲ ԴԱՐԻ 70—90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺԲ դարի 70-ական թթ. կեսերից Սիրիայի, Կիլիկիայի և դրացի երկրների հարևանությամբ հայտնվեց մի ուժեղ և ազրեսիվ պետություն՝ Այյուբյան սուլթանությունը։ Հենց այդ ժամանակվանից Զանգիների պետության, Մոսովի աթարեկության, Անտիոքի իշխանության, Կիլիկիայի Ռուբինյան իշխանապետության և մի շարք այլ պետությունների արտաքին քաղաքականության մեջ կարևորվեցին ռազմական և դիվանագիտական շփումները նոր սուլթանության հետ։

Այյուբյան սուլթանության հիմնադիրն էր Սալահ ալ-Դին Այյուբին։ Նա քաղաքական ասպարեզում հայտնվեց զեռևս ԺԲ դարի 60-ական թվականներին։ Նրա հայրը՝ Այյուբը և հորեղբայր Շիրքուհը նուր ալ-Դինի զորավարներից էին։ Շիրքուհի Զրամանատարությամբ նրա բանակը երեք արշավանք (1166, 1167, 1169) կատարեց զեպի Եղիպտոս, որտեղ Ֆաթիմյան խալիֆաների իշխանությունն արդեն թուլացել էր։ Նուր ալ-Դինը ձգտում էր գրավել կամ իր աղղեցության տակ դցել այդ հարուստ ու բարեբեր երկիրը։

Զանգիների վերջին արշավանքից հետո Սալահ ալ-Դինը շահեց Ֆաթիմյան խալիֆա Ագիդի (1160—1171) վստահությունը և դարձավ նրա վեպիրը՝ երկրի կառավարումը վերցնելով իր ձեռքը։ 1171 թ., խալիֆայի մահից հետո, Սալահ ալ-Դինը զավթեց իշխանությունը Եղիպտոսում և հիմք դրեց

Այլուրյան Հարստության, իսկ 1174 թ.¹ Նուր ալ-Դինի մա-
ժից հետո, իրեն սովորական հռչակեց:

Այսպիսով, 1174 թ. հետո Սալահ ալ-Դինը մահմե-
դական աշխարհի հզոր տիրակալն էր: Նրա նվաճողական
ծրագրի մեջ էր մտնում նախ՝ մյուս մահմեդական իշ-
խանությունների ենթարկումը, ապա նաև խաչակիրների
չախչախումն ու գուրսմղումը Արևելքից:

Նույն՝ 1174-ին, նա գրավեց Դամասկոսը: Անցնելով
Հոմսի և Համայի միջով, Սալահ ալ-Դինի բանակը հասավ
Հալեպ: Այստեղ նուր ալ-Դինի մահից հետո իշխում էր
նրա որդին՝ ալ-Մալիք ալ-Մալիք (1174—1182): Սակայն Սալահ ալ-Դինին չհաջողվեց գրավել Հալեպը:
Հաջորդ տարին նա պարտության մատնեց Հալեպի սով-
թանության և Մոսովի աթաքեկության միացյալ ուժերին և,
հետապնդելով թշնամուն, հասավ մինչև Հալեպի դարպաս-
ներին: 1176 թվականին կնքված հաշտությամբ Հալեպի
երիտասարդ սովորականը պարտավորվեց ուղղմական օգնու-
թյուն ցույց տալ Սալահ ալ-Դինին:

Այսպիսով, ընդամենը երկու տարվա (1174—1176) ըն-
թացքում Եգիպտոսի սովորականը իրեն ենթարկեց գրեթե ողջ
Սիրիան:

1175 թվականից Կիլիկյան Հայաստանում իշխում էր
Ռուբեն Գ-ը: Մինչև 1180 թվականը Ռուբենյան իշխանա-
պետությունը անմիջական կապեր չուներ Եգիպտոսի սով-
թանության հետ: Սակայն Բար Հերրեսոս պատմիչ վկա-
յությամբ, 1176-ին Սալահ ալ-Դինը հաշտություն է կնքում
ու միայն Հալեպի սովորականության, այլև Մոսովի աթաքե-
կության և Կիլիկիայի իշխանապետության հետ¹: Պատմի-
չի այս տեղեկությունը հնարավորություն է տալիս երկու
ենթադրություն անելու: Կամ Ռուբեն Գ-ը՝ շարունակելով
իր հորեղբար՝ Մլեհի քաղաքականությունը և գաշնակցելով
Զանգիներին, մասնակցել է 1175—1176 թվականների ուղ-
մական գործողություններին ընդգեմ Սալահ ալ-Դինի. նաև

¹ The Chronography of Bar Hebraeus, p. 307.

Հաշտության կնքմանը, կամ, որ ավելի հավանական է, Բար Հերբեռսի տեղեկությունը վերաբերում է 1180 թվականի հաշտությանը:

Առաջին ենթադրությունը քիչ հավանական է թվում նաև այն պատճառով, որ նման դաշինքը, 1174—1176 թթ. իրադարձություններից հետո ստեղծված նոր քաղաքական պայմաններում, ձեռնտու չեր կարող լինել Կիլիկիայի համար: Զանգիների պետությունն արդեն ապրում էր իր մայրամուտը:

Նույ ալ-Դինի հաջորդի՝ ալ-Մալիք ալ-Սալիհ հսմացիլի օրոք (նրա իշխոնության մեկ-երկու տարում) Սիրիայի Զանգիները կորցրել էին իրենց Հողերի մեծ մասը և փաստորեն ունեին միայն Հյուսիսային Սիրիան՝ Հալեպ կենտրոնով: Ընդ որում, Սալահ ալ-Դինի ձնշումը տարեցտարի ավելի էր ուժեղանում, և Զանգիների պետությունը վերածվել էր Սալահ ալ-Դինին ենթակա մի ամիրության:

Զանգիների թուլացումից օգտվելով, Հյուսիսային Սիրիայում սկսեցին զլուխ բարձրացնել կենտրոնախոսյա ֆիոդալները, ինչպես նաև խաչակիրները, որոնք շատ բան էին կորցրել անցած երեսնամյակում (1144—1174):

1174—1176 թվականներին խաչակիրները հնարավորություն շունեին մեծ արշավանք կազմակերպելու գեպի Սիրիայի մահմեդական մասը, քանի որ նրանց կաշկանդում էր Սալահ ալ-Դինի ներկայությունը: Իսկ երբ Այլուրյան սուլթանը ստորագրեց հաշտության պայմանագիր ալ-Մալիք ալ-Սալիհ հսմայիլի հետ և վերադարձավ Եգիպտոս, խաչակիրները զործողությունների ազատություն ըստացան:

Զանգիներին ենթակա Հողերի նվաճմամբ ավելի շահագրգուված էին Անտիոքի իշխան Բոհեմոնդ Գ-ը (1163—1201) և Տրիպոլիսի կոմս Ռայմոնդ Գ-ը (1164—1187): Նրանք կարողացան ստանալ Եվրոպայից նոր ժամանած Ֆլանդրիայի կոմս Ֆիլիպի օգնությունը, որը, Երուսաղեմի թագավորից վերցնելով հեծելազոր ու հետեւակ, զորքով

Հարժվեց դեպի Տրիպոլիս և միացրեց իր ուժերը խաչակրաց զորքերին²:

Իշխանները պայմանավորվեցին առաջին հերթին գրավել Հարիմ ամրոցը՝ Անտիոքից արևելք³:

Այս ամրոցի ընտրությունը պատահական չէր: Թե՛ արաբ (իրն ալ-Աղիմ, իրն Խալիֆան) և թե՛ ասորի (Միքայել Ասորի) պատմիչները՝ վկայում են, որ ալ-Մալիք ալ-Խալիչ Խսմայիլի գեմ ապստամբած Սաադ ալ-Դին Դումուշտեգինը՝ Հարիմի ամրոցի տերը, բռնվեց (1177 թ. սեպտեմբերի 5) և մահապատժի ենթարկվեց: Զնայած զորքան, Հարիմի բնակիչները և զինվորները ամրոցը շնանձնեցին Հալեպի սուլթանին:

Խաչակիրները որոշեցին օգտվել Գումուշտեգինի ապստամբությունից և նվաճել Զանգիների պետության այդ մասը: Նախքան արշավանքը սկսվելը, Անտիոքի իշխանը զիմեց Կիլիկիայի իշխանապետին՝ խնդրելով նրան մասնակցել այդ արշավանքին: Ահա թե ինչ է զրված այդ մասին Միքայել Ասորու «Ժամանակագրության»⁴ Հայերեն թարգմանության մեջ.

Իբն ալ-Աղիմ պատմիշը նույնպես հիշատակում է, որ ամրոցը գրոհողների մեջ էր նաև «Իբն Լեռնը»⁵: Հասկանալի է, խոսքը վերաբերվում է Ռուբեն Գ-ին: Թեև պատմիչներից ոչ մեկը չի հաղորդում արշավանքին Հայկական զորքի մասնակցության մասին, սակայն տրամաբանական է, որ Ռուբեն Գ-ը կովում էր ոչ միայնակ, այլ զորքի հետ:

Այսպիսով, խաչակիրների ու Հայերի միացյալ բանակը 1177 թվականին հարձակվեց Հարիմ ամրոցի վրա: Չորսամյա պաշարման ընթացքում (1177 գեկտեմբեր—1178 մարտ) նրանք ապարդյուն փորձում էին կոտրել Հարիմի պաշտպանների զիմադրությունը՝ օգտագործելով քարանետ և պաշարողական մեքենաներ:

² Kamal ad-Din ibn al-Adim, Tarikh ul-Halab, Damas, t. III, 1968, p. 36—38.

³ William of Tyre, v. II, p. 425.

⁴ Միքայել Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871, էջ 485:

Խաչակիրները ստիպված էին վերացնել ամրոցի պաշարումը և հեռանալ: Այդ նույն ժամանակ նրանց սպառնում էր նաև Սալահ ալ-Դինի զորքը: 1178 թվականի ամռանը Հարիմը նորից հնթարկվեց ալ-Մալիք ալ-Սալիհ իսմայիլին⁶:

Այսպիսով, խաչակիրների այս արշավանքը ևս անհաջողությամբ ավարտվեց: Արշավանքի ժամանակն ու տեղը ճիշտ էր ընտրված: Սալահ ալ-Դինը հեռու էր գտնվում, իսկ Հարիմ ամրոցը՝ որպես Սնտիռքի իշխանությանը անմիջականորեն հարևան մի վայր, կարող էր հարմար հենակետ դառնալ Սալահ ալ-Դինի առաջխաղացման գեմ պայքարում: Խաչակրաց զեկավարների մեծ վճռականության շնորհիվ նրանց կհաջողվեր (թեկուղ և կարճ ժամանակով) տիրապետող դիրքեր գրավել թերեւ ողջ Հյուսիսային Միրայում:

Եթե խաչակիրների համար Հարիմի գրավումը ուներ որոշակի քաղաքական և ռազմական նշանակություն, ապա Կիլիկյան Հայաստանի ճակատագրում այդ ամրոցը մեծ նշանակություն չուներ: Ահա թե ինչու անհասկանալի են մնում այն դրդապատճառները, որ Ռուբեն Գ-ին մղեցին մասնակցելու Հարիմի երկարատև ու անպտուղ պաշարմանը:

Վերջապես, կարեոր է նաև հետևյալ հանգամանքը: գեռ 1164 թվականին Ռուբենյան իշխանները համոզվեցին խաչակիրների ռազմական ձեռնարկումների անհեռանկարության մեջ: Ըստ Երվանդ Քասունու, Ռուբեն Գ-ը մասնակցեց Հարիմի պաշարմանը՝ հավաստելու խաչակիրներին իր բարեկամական տրամադրությունները և այն, որ ինքը չի հետևում իր հորեղբոր՝ Մլեհի հակալատին քաղաքականությանը⁷:

Այս ենթադրությունը զուրկ չէ հիմքից: Որոշակի մի ժամանակահատվածում՝ 1174—1187 թվականներին, որը գրրեթե համընկնում է Ռուբեն Գ-ի գահակալմանը, Կիլիկյան

⁶ Նույն տեղում:

⁷ Երվանդ Քասունի, Ռուբեն Գ և իր կտակը, էջ 32—33:

Հայաստանի արտաքին հարաբերությունները գտնվում էին բավական անորոշ վիճակում: Դրա պատճառները հետևյալն էին.

1) Նախկին դաշնակից Զանգիների պետությունը շատ թուլացած էր և շուտով ընդհանրապես վերացավ՝ կու գնալով նախ Մոսուլի աթաբեկությանը (1181), ապա նաև Սալահ ալ-Դինի պետությանը (1183):

2) Բյուզանդական կայսրությունը, 1176 թ. Միրիոկեֆալոնի ճակատամարտում ծանր պարտություն կրելով հկոնիայի սելջուկներից, հրաժարվել էր Արևելքի երկրների հանդեպ ունեցած նվաճողական նկրտումներից: Ու թեև Դաշտային Կիլիկիայի որոշ մասը ևս մի քանի տարի մընաց Բյուզանդիայի տիրապետության տակ, սակայն կայսրությունը այլևս վճռական դեր չէր կատարելու Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ:

3) Այդ տարիներին գեռևս պարզ չէր, թե ինչպես կավարտվի Սալահ ալ-Դին—խաչակիրներ գոտեմարտը (մինչև 1187 թ. Հիթթինի ճակատամարտը), հետևաբար պարզ չէր Կիլիկյան Հայաստանի բռնած դիրքը Այզուբյան սուլթանության, Երուսաղեմի թագավորության, Տրիպոլիսի կոմսության և Անտիոքի իշխանության հանդեպ:

4) Ինչ վերաբերում է Իկոնիայի սուլթանությանը, ապա այս պետությունը Կիլիկիայի հանդեպ միշտ էլ վարում էր նվաճողական անհաջող քաղաքականություն և հկոնիայի սելջուկների հետ դաշնակցային հարաբերությունների մասին խոսք անդամ լինել չէր կարող:

Այս անորոշ քաղաքական վիճակի արտահայտություն պետք է համարել Ծուփեն Գ-ի մասնակցությունը խաչակիրների 1177—1178 թվականների արշավանքին:

Վերոհիշյալ դեպքերից երկու տարի անց՝ 1180-ին, Սալահ ալ-Դինը իր բանակով արշավում է Կիլիկիայի վրա: Արշավանքի համար պատրվակ հանդիսացավ Կրլըշ Արսլանի դիմումը Եգիպտոսի սուլթանին, որով նա խնդրում

էր Համաձայնություն կնքել և գանգատվում էր Հայերից⁸: Կըլը Արսլանի՝ Հայերից դժողոհելու պատճառը, ըստ արար պատմիչների, այն էր, որ Ռուբեն Գ-ը թուրքմեն ցեղերին թուլատրել էր արածեցնել իրենց հոտերը Կիլիկիայում, ապա զղալով, հարձակվել էր նրանց վրա, մի մասին կոտորել, իսկ մնացածներին գերել ու տիրացել նրանց ունեցվածքին⁹:

Երբ Սալահ ալ-Դինի բանակը հասավ Կարահիսար վայրը (Հալեպից Հյուսիս), նրան միացավ Հալեպի սովորականության զորքը՝ ըստ 1176 թ. գաշնազրի Համաձայն: Ապա միացլալ բանակը միացավ Կըլը Արսլանի զինված ուժերին Կապույտ գետի (Նահր ալ-Աղրակ) մոտ՝ Բեհեսնիի և Հիսն Մանսուրի միջև: Այստեղ Սալահ ալ-Դինի միջնորդությամբ Հաշտություն կնքվեց Իկոնիայի սովորական Կըլը Արսլանի և Հիսն Քայֆայի Արտուխյան ամիր Նուր ալ-Դին իրն Կարա Արսլանի միջեւ¹⁰: Այս քայլով Սալահ ալ-Դինը հավատարիմ էր մնում իր արտաքին քաղաքականությանը. եթե կան մահմեդական պետություններ, որոնք դեռևս չեն նվաճվել Այցուբյանների կողմից, ապա զրանց միջև պետք է հաշտություն հաստատել, որը հնարավորություն կտա Համախմբել այդ պետությունները և միացյալ ռազմական ուժերն օգտագործել զիսավոր թշնամիների՝ խաչակիրների դեմ պայքարում:

Սալահ ալ-Դինի արտաքին քաղաքականության մեջ առանձնատուկ տեղ էր զրավում Կիլիկիայի Հայկական պետությունը: Ընդհանրապես Հայերի և ասորիների նորկատմամբ չկար այն բացահայտ թշնամությունը, որ կար

⁸ Ibn Challikan, Biographical Dictionary, v. III, New-York, 1868, p. 342.

Արարական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, կազմ. Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 293:

⁹ Արարական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, էջ 301, Երե ալ-Ասիր, էջ 266:

¹⁰ Recueil des Historiens des Croisades, Historiens orientaux, t. IV, Paris, Des deux jardins, p. 211—213.

իսաշակիրների հանդեպ, և Սալահ ալ-Դինի տերության համար (Համենայն դեպս ժԲ գարի 70—80-ական թվականներին) առաջնահերթ խնդիր չէր հայկական իշխանապետությունը վերացնելը կամ նրան ջախչախիչ հարված հասցընելը: Դա երեաց նաև Սալահ ալ-Դինի հետագա գործելակերպում:

Հաշտեցնելով Իկոնիայի սելջուկներին ու Արտուխյաններին և օգնական զորք վերցնելով, Կապույտ գետի ափերից Սալահ ալ-Դինը արշավեց դեպի Սև գետը (Նահր ալ-Ասուադ), որը «իբն Լևոնի երկրի սահմանն էր կազմում»¹¹:

Այսուբյան սուլթանը զրավեց Սև գետի շրջանում գտնվող Մանաքիր (Հիսն ալ-Արման) ամրոցը, սակայն ավելի շխորացավ, քանի որ Ռուբեն Գ-ը հաշտություն խնդրեց՝ շատ ոսկի տալով: Նա վերադարձրեց նաև 500 գերի թուրքմեններին և հաշտություն կնքեց:

Իր զրքում, անդրադառնալով Սալահ ալ-Դինի Կիլիկիա կատարած վերոհիշյալ արշավանքին, Երվանդ Քասունին իրավացիորեն գրում է. Թուրքմեն մի քանի ցեղերի հանդեպ հայ իշխանապետի վերաբերմունքը չէր կարող բուն պատճառը լինել Սալահ ալ-Դինի Եգիպտոսից Կիլիկիա արշավելու համար: Հեղինակը ավելի հավանական է համարում այն, որ Սալահ ալ-Դինի գլխավոր նպատակը եղել է Իկոնիայի սուլթանության վրա արշավելը: Եվ միայն Կըլըշ Արուանի հետ հաշտություն կնքելուց հետո և, հավանաբար, վերջինիս թելադրանքով է Սալահ ալ-Դինը արշավել Կիլիկիայի վրա¹²:

Այս ենթադրությունը տրամաբանական է: Միայն մի փոքր ճշտում պետք է մտցնել: Հարկ է շեշտել, որ Սալահ ալ-Դինի նպատակը այս շրջանում գտնվող պետությունների ահարեկումն էր և ոչ թե նվաճումը կամ ջախչախումը: Այլապես ինչպես բացատրել այն փաստը, երբ

¹¹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարեան երկրների մասին, էջ 301, իրն ալ-Ասիր, էջ 266:

¹² Ե. Քասունի, Ռուբեն Գ և իր կոտակը, էջ 40:

Սալահ ալ-Դինը հմուտ և համարձակ դորավար լինելով, իր մեծ բանակին միացնելով նախ Հալեպի, ապա և Իկոնիայի սուլթանությունների բանակները, այդպես էլ լուրջ քայլի շգփմեց՝ բավարարվելով ընդամենը մեկ ամրոցի (այն էլ հավանաբար ժամանակավորապես) գրավմամբ:

Եվ ամենայն հավանականությամբ, անկախ այն բանից, թե Կըլը Արալանը նրան որևէ բան թելադրել էր թե ոչ, Սալահ ալ-Դինը պիտի հավատարիմ մնար իր՝ նախապես մշակված ծրագրին:

Այսպիսով, 1180 թվականին, այդպես էլ շնորանալով Կիլիկիայի տարածքը և արձագանքելով Ռուբեն Գ-ի դիմումին, Եգիպտոսի սուլթանը արագ հաշտություն կընքեց: Միևնույն ժամանակ նա հաշտություն կնքեց նաև Մոսուլի, Զազիրայի, Իրբիլի, Քայֆայի և Մարդինի Զանգի և Արտովյան ամիրների հետ, որոնք իրենց կնիքներով հաստատեցին (1180 թ. հոկտեմբերի 2) հանդիսավոր հաշտությունը, որով նրանք երգվում էին խաղաղություն պահպանել միմյանց հանդեպ երկու տարրվա ընթացքում¹³: Հստ իրն Շաղդադի, հաշտությունը կնքվեց Սարսա-Սանջա գետի մոտ¹⁴, որը, հավանաբար, նույն՝ Կապույտ գետի այլ անվանումն է:

Իսկ Սալահ ալ-Դինը շշարունակեց առաջխաղացումը գետի Ռուբինյան պետության ներքին գավառները, որով հստև Այցուբյան սուլթանը դեռևս վճռական հաջողությունների շէր հասել խաչակիրների գեմ պայքարում, իսկ Հյուսիսային Սիրիան ու Վերին Միջագետքը դեռևս նվաճված չէին:

Հալեպի սուլթանի մահը և Մոսուլի ամիրների հետ բանակցությունները ճանապարհ բացեցին Սալահ ալ-Դինի նոր նվաճումների համար: 1182—1183 թթ. Սալահ ալ-Դի-

¹³ S. Lane-Poole, History of Egypt in the Middle Ages, London, 1900, p. 206.

¹⁴ Արարական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, էջ 293:

նը ներխուժեց Վերին Միջագետք և իրեն ենթարկեց ամբողջ երկիրը, բացի Մոսովլ քաղաքից: Շուտով թէ՛ Մոսովլը և թէ՛ Հալեպը Ալյուրյանների տերության մասը կազմեցին:

Այս մասին է վկայում Բար Հերբեռոսը, որը մանրամասն հաղորդում է Սիրիայի Զանգիների պետության գոյության վերջին երկու տարվա պատմությունը: Ըստ Ասորի պատմիչի, Հիջրայի 577 թվականին (1181—1182) Հալեպի երիտասարդ սովորակ ալ-Մալիք ալ-Սալիհը, զգալով իր մոտալուս մահը, լուր ուղարկեց իր հորեղբորորդուն՝ Մոսովլի տեր իզզ ալ-Դին Մասուդին (1180—1193)¹⁵ խնդրելով նրանից շտապ ժամանել Հալեպ: Ալ-Մալիք ալ-Սալիհը նախընտրում էր Հալեպը Զանձնել իր տոհմակցին, քան Այլուրյան սովորակին: Շուտով նա վախճանվեց (1181-ի վերջին կամ 1182-ի սկզբին), որից հետո իզզ ալ-Դին Մասուդը միացրեց Հալեպը իր տիրույթներին¹⁵:

Հալեպին տիրելով իզզ ալ-Դին Մասուդը քաղաքի կառավարումը Զանձնեց եղբորը՝ Իմադ ալ-Դինին, որը, խաչկիրների հետ դաշնակցած, Հարձակումներ էր գործում Սալահ ալ-Դինին ենթակա Հողերի վրա: Սակայն Զանձնիների Մոսովլի ճյուղը Հալեպում իշխեց Հազիվ մեկուկես տարի:

1183 թվականի մայիսին Հալեպը պաշարվեց Ալյուրյանների կողմից: Զգալով, որ ուժերն անհավասար են, իսկ Սալահ ալ-Դինը վաղ թէ ուշ պիտի գրավի այս քաղաքը, Հալեպի կառավարիչը բանակցությունների մեջ մտավ սովորանի հետ և նրան Զանձնեց քաղաքը (1183 թ. հունիս)¹⁵ փոխարենը մի քանի ամրոցներ ստանալով Սալահ ալ-Դինի տիրույթներում:

Թէ ինչպիսի նշանակություն ուներ Հալեպի գրավումը Սալահ ալ-Դինի կողմից, երևում է Գիյոմ Տյուրացու հետեւալ Հաղորդումից: Հալեպի Հանձնման մասին տեղեկանալուց հետո լատին պատմիչը գրում է. «...կրկնապատիկ սարսափը պատեց մեր մարդկանց (իմա՝ խաչակիրներին),

¹⁵ The Chronography of Bar Hebraeus, p. 311.

երբ նրանց հասավ այս լուրը, քանի որ տեղի էր ունեցել այն, ինչից նրանք ամենից շատ էին վախենում»¹⁶:

Հալեպին տիրելով Սալահ ալ-Դինը սպառնում էր ոչ միայն Հյուսիսի խաչակիր պետություններին՝ Անտիոքի իշխանությանն ու Տիգրանի կոմսությանը, այլև Ռուբինյան Հայկական իշխանապետությանը, թեև ի թիվս այլ պետությունների, նաև վերջինիս հետ սուլթանի 1180 թ. կնքած Հաշտությունը Կիլիկիայի Հայերին գոնե ժամանակավորապես ազատում էր Այսուրյան բանակի ներխուժումից:

Զգալով մոտալուտ վտանգը, Անտիոքի իշխանը դիմեց երուսաղեմի թագավորին՝ ուազմական օգնություն խնդրելով նրանից: Ըստ Գիյոմ Տյուրացու, 300 ասպետներ շտափեցին Անտիոքի իշխանին օգնության, սակայն շուտով վերադարձան, պարզվեց Բոհեմոնդը ժամանակավոր դինադարը է կնքել Սալահ ալ-Դինի հետ¹⁷:

Լատին պատմիչը Անտիոքի իշխան Բոհեմոնդի Սալահ ալ-Դինի հետ կնքած զինադադարը անմիջականորեն կապում է իշխանի կողմից Կիլիկիայի Տարսոն քաղաքը Ռուբեն Գ-ին վաճառելու հետ¹⁸:

Բանն այն է, որ Տարսոնի և ընդհանրապես Կիլիկիայում բյուզանդացիների ունեցած վերջին տիրույթների՝ Ռուբենյաններին անցնելու հանգամանքները (1183) Կիլիկիայի պատմության ամենախճճված հարցերից են և լրջորեն չեն ուսումնասիրվել:

Գրիգոր Միքայելյանը իր աշխատության մեջ հիշատակում է Մլեհ իշխանի՝ հույների հանդեպ տարած հաղթանակը և վերջինիս կողմից Աղանան, Մամեստիան և Տարսոնը բյուզանդացիների ձեռքից խլելու մասին¹⁹, սակայն հետո՝ երկու էջ անց, արդեն Ռուբեն Գ-ի մասին խոսելիս գրում է. «Մանուել կայսեր մահվանից (1180) հե-

¹⁶ William of Tyre, v. II, p. 490.

¹⁷ Նույն տեղում, v. II, p. 491.

¹⁸ Նույն տեղում, v. II, p. 491.

¹⁹ Г. Микаелян, История Киликийского армянского государства, стр. 128.

տո, Բյուզանդիայի նոր թուլացումից օգտվելով, Ռուբեն Գ-ը տիրեց Բյուզանդիային պատկանող Դաշտային Կիլիկիայի վերջին մասին՝ Աղանա և Տարսոն քաղաքներով»²⁰:

Ընդ որում, մինչ այդ ուսումնասիրողը ոչ մի տեղ չի հիշատակում, որ Մլեհից հետո հիշյալ քաղաքները հայերը զիշած լինեին որևէ պետության: Այսպիսով, ստացվում է հակասություն:

Այս հակասությունը ծագում է հետեւյալից. թե՛ հայ և թե՛ օտար աղբյուրները ոչ մի տեղեկություն չունեն հիշյալ քաղաքները կորցնելու կամ զիշելու մասին, մինչդեռ երկու անգամ հազորդում են դրանց՝ հայերի կողմից (նախ Մլեհի, ապա Ռուբեն Գ-ի օրոք) գրավելու լուրը:

Վերոհիշյալ խնդիրը հանգամանորեն ուսումնասիրվել է վերջին տարիներին՝ Երվանդ Քասունու կողմից: Վերջինս, նկատելով այս հակասությունը և աղբյուրներում այդպես էլ հարցի պատասխանը շտոնելով, ենթադրում է, որ Դաշտային Կիլիկիայի մի մասը կրկին անցել է Բյուզանդիային՝ 1175—1176 թվականներին Մլեհի սպանությունից անմիշապես հետո: Այս ենթադրության համար հիմք է ծառացել այն հանգամանքը, որ Մլեհի դեմ նյութված դավադրությանն ու սպանությանը մասնակցել են նաև բյուզանդացիները՝ Մլեհի երդվյալ թշնամիները²¹:

Երվանդ Քասունին հավանական է համարում, որ Մլեհի սպանությունից հետո Բյուզանդիան վերագրավել է Աղանան, Մամեստիան և Տարսոնը կամ էլ դավադրության մասնակից հայ իշխանները Բյուզանդիային, որպիս հատուցում այդ գործում ունեցած մասնակցության, կամավոր հանձնել են հիշյալ քաղաքները²²:

Այս վերջին ենթադրությունը, թեև հենվում է ընդամենը մեկ և այն էլ անուղղակի տեղեկության վրա, տրա-

²⁰ Նույն տեղում, էջ 130:

²¹ Ա. Քասունի, Ռուբեն Գ և իր կտակը, էջ 70:

²² Նույն տեղում, էջ 68:

մաքանական պետք է համարել, քանի որ այլ, սրան հակասող տեղեկություններ աղբյուրներում չկան:

Այսպիսով պարզվում է, որ Դաշտային Կիլիկիայի գրավումը Սլեհ իշխանապետի կողմից ևս վերջնական չէր: Ռուբեն Գ-ը պետք է վերջնականապես միացներ այս հողերը Հայկական իշխանապետությանը, որով վերջապես պիտի ավարտվեր Հայ-բյուզանդական ավելի քան մեկ հարյուրամյակ տևած պայքարը (1080—1183) հանուն Կիլիկիայի:

Իսկ թե ինչպես է Տարսոնը անցել Անտիոքի իշխանությանը, ևս շրացահայտված հարց է: Ամենայն հավանականությամբ, 1180 կամ 1181 թվականին, երբ Բյուզանդիայում իշխանության գլուխ անցավ Ալեքսիոս Բ-ը (1180—1183), և կայսերական իշխանությունը թուլացավ, Կիլիկիայի բյուզանդական մասի կառավարիչ Խաչակի Կոմնենոսը, հավանաբար զգալով, որ անկարող է քաղաքը երկար պահել իր ձեռքում, զիջեց (կամ վաճառեց) այն Անտիոքի իշխան Բոհեմունդին:

Գիյոմ Տյուրացու մի տեղեկությունը հաստատում է, որ Տարսոնը խաչակիրներին էր անցել Բյուզանդիայից: «Նա (Բոհեմունդը) ժամանակավոր զինադադար կնքեց Սալահ ալ-Դինի հետ և դրանից հետո իրեն ապահովված համարեց: Եվ որպեսզի ավելի պակաս հոգս ունենա և ի վիճակի լինի առավել մեծ ուշադրությամբ հսկել Անտիոքի Հողը (երկրին), նա մեծ գումարով վաճառեց Տարսոնը՝ Կիլիկիայի մայրաքաղաքը (որը ստացել էր Հույներից), մի զոր Հայ ստրապի, որը իշխում էր այդ երկրի մյուս քաղաքներում: Դրանով նա մեծ իմաստնություն ցուցաբերեց: Տարսոնը շատ հեռու էր գտնվում և մեկուսացած էր Անտիոքից՝ Ռուբենի Հողերով, այդ պատճառով իշխանի (Բոհեմունդի) Համար շատ զժվար էր և թանկ էր նստում այն պահելը՝ մի բան, որ շատ հեշտ էր Ռուբենի համար»²³:

«Որ նա ստացել էր Հույներից» արտահայտությունը բացահայտում է Տարսոնի անցումը խաչակիրներին: Թեև

²³ William of Tyre, v. II, p. 491.

այդ անցման մանրամասները, ինչպես նաև ճշգրիտ թվականը մնում էն անհայտ:

Այսպիսով, Տարսոնը 1183 թվականին, վերջնականապես և այս անգամ արդեն խաղաղ ճանապարհով, վերադարձվեց Ռուբինյաններին:

Հիշյալ հողերի թե՛ կորուստը (1175—1176) և թե՛ վերատացումը (1183) տեղի ունեցան առանց զենքի ու պատերազմի: Թերեւս այս է պատճառը, որ պատմիչների մեծ մասը շգիտեն կամ էլ անուշադրության են մատնել վերահիշյալ տարածքային փոփոխությունները, որ 7—8 տարվա ընթացքում տեղի ունեցան Ռուբինյանների, Անտիոքի իշխանության և Բյուզանդիայի տիրույթներում:

Տիրելով Տարսոնին և իր դիրքերն ավելի ամրապնդելով Ռուբին Գ-ը ձեռնարկում է Լամբրոնի պաշարումը, որտեղ Հեթումյան իշխանները տարիներ շարունակ հակառակինյան քաղաքականություն էին վարում: Զնայած Հեթումյանները Լամբրոն ամրոցից ու նրա շրջակա հողերից ավելի երբեք չեին կարողացել ընդարձակել իրենց տիրույթները, սակայն միենույն ժամանակ Լամբրոնի նման անտոիկ ամրոց ունենալով և վայելելով Բյուզանդիայի հովանավորությունը, միշտ էլ հաջողությամբ պաշտպանվել և հետ էին մղել Ռուբինյանների հարձակումները: Այս անգամ ևս, չնայած Ռուբին Գ-ի բանակը գրեթե 3 տարի (1183—1186) պաշարման մեջ պահեց Լամբրոնը, սակայն գրավել այն այդպես էլ Հաջողվեց: Ավելին, Հեթումյանները կարողացան Ռուբենի գեմ դուրս բերել Անտիոքի իշխան Բոհեմունդին, որով խիստ ծանրացրին հայոց իշխանապետության վիճակը:

Հեթումյանների դրդմամբ 1185 թվականի սկզբին Բոհեմունդը Ռուբին իշխանին բարեկամաբար հրավիրեց Անտիոք, ձերբակալեց նրան և բանակով ներխուժեց Կիլիկիա՝ նպատակ ունենալով վերականգնել Անտիոքի իշխանության նախկին տիրույթները այստեղ, իսկ հնարավորության գեպքում կործանել Ռուբինյան իշխանապետությունը Կիլիկիայում: Կիլիկիայում իշխանապետության կառավարումը իր ձեռքն էր վերցրել Ռուբին Գ-ի եղբայր Լևոնը, որը,

ինչպես նշում են պատմիչները, իմաստնորեն կառավարում էր երկիրը:

Ըստ Միքայել Ասորու «Ժամանակագրության» Հայերեն թարգմանության, մի ամբողջ ամառ Բոհեմունդը գտնվում էր Կիլիկիայում²⁴ և այդ ընթացքում, ըստ երեսութին, բազմիցս հարձակումներ էր գործում դեպի Ռուբինյան իշխանության կենտրոնական շրջանները, բայց հանդիպում էր ուժեղ դիմագրության՝ կուն իշխանի գլխավորած հայկական զորքերի կողմից:

Խաչակիրների հարձակումը հետ մղելուց հետո հայ իշխանները զբաղվեցին Ռուբեն իշխանապետի ազատման գործով: Նրանք ստիպված եղան Գաշտային Կիլիկիայի մի մասը զիջել Անտիոքի իշխանությանը և, բացի այդ, մեծ փրկագին վճարել: Այդ գնով միայն նրանց հաջողվեց ազատել հայոց իշխանապետին:

Ե՛վ Հայ և ասորի պատմիչները անդրագառնում են այս դեպքերին, սակայն նրանց տեղեկությունները հակասական են թե՛ Հայերի զիջած Հողերի և թե՛ փրկագնի շափի վերաբերյալ: Ըստ Սմբատ Սպարապետի, Ռուբեն Գ-ն Անտիոքից դիմեց իր քեռուն՝ Բակուրան իշխանին: Վերջինս որպես պատանդ Անտիոք ուղարկեց Ռուբենի մորն ու օրոշը: Ապա Ռուբենը որպես փրկագին Բոհեմունդին զիջեց Սարվանդիքարը, թիլ Համտունը և Ճկերը, ինչպես նաև 1000 դահեկան գրամ, որից հետո Անտիոքի իշխանը նրան ազատ արձակեց²⁵:

Սամուել Անեցին, որպես Հայերի զիջած Հողեր, Հիշտակում է «զթիլն և զՄսիս և զքարն Սարուանդի»²⁶, իսկ փրկագինը «ՃՌ դեկան»²⁷, այսինքն՝ Հարյուր Հազար դահեկան:

²⁴ Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, էջ 491—492:

²⁵ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 194:

²⁶ Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 141:

²⁷ Նույն տեղում:

Վաճրամ թարունին անորոշ գրում է. «... Ապա երկիր՝
և գանձ տուեալ, եւ զպարոն՝ Ռուբէն թափեալ»^{28:}

Ինչ վերաբերում է ասորի պատմիչներին, ապա նրանց
և հայ պատմիչների տեղեկությունները որոշակիորեն տար-
բերվում են միմյանցից:

Միքայել Ասորին փրկագնի համար բերում է այլ թիվ՝
3000 դինար²⁹, իսկ Բար Հերբեոսը՝ 30000 դինար^{30:} Միայն
հայերի զիջած հողերի հարցում են երկու ասորի պատմիչ-
ները միասնական^{31:} Նրանց կարծիքով հայերը Անտիոքի
իշխանին են զիջել Աղանան և Մամեստիան:

Եթե նկատի ունենանք, որ Բար Հերբեոսը իր պատմու-
թյան առաջին մասի շարադրման ժամանակ մեծապես օգ-
տարվել է Միքայել Ասորու մատյանից, ապա վերջինիս 3000
դինարը ավելի արժանահավատ պետք է համարվի, քան
Բար Հերբեոսի 30000-ը:

Ինչ վերաբերում է Սմբատ Սպարապետի և Սամուել
Անեցու հաղորդած թվերին, ապա, հաշվի առնելով գրանց
մեծ տարբերությունը, համապատասխանաբար՝ 1000 և
100000 դահեկան^{32:} Վերջին թիվը կարծես շափազանցված
է, իսկ 1000 ու 3000-ը ավելի մոտ են իրականությանը:

Ինչ վերաբերում է տարածքային զիջումներին, ապա
պատմիչների տվյալների համագրումից կարելի է եզրա-
կացնել հետեւյալը. Բոհեմունդին էին տրվում Մամեստիան
(հաստատապես), Աղանան (ամենայն հավանականությամբ)
և մի շարք առավել փոքր քաղաքներ ու ամրոցներ, ինչպես
թիւ Համտունը, Սարվանդիքարը, Ճկերը:

²⁸ Վահրամայ Բարունոյ, Ռտանաւոր պատմութիւն Ռուբէնեանց, Փարիզ,
1859, էջ 212.

²⁹ Michel le Syrien, v. III, p. 397—398.

³⁰ Bar Hebraeus, p. 321.

³¹ Michel le Syrien, v. III, p. 397—398, Bar Hebraeus, p. 321.

³² Թիւ դահեկանը և թիւ զինարը այդ ժամանակաշրջանում օգտա-
գործվող ոսկեզրամի տարբեր անվանումներն են:

Պատմիշների հաղորդումներից երեսոմ է, որ Ռուբեն Գ-ը ստիպված է եղել Բոհեմունդին զիջել մի քավական ընդարձակ և կարևոր տարածք, որն անմիջականորեն սահմանակից էր Անտիոքի իշխանությանը: Սակայն, ինչպես գրում են ասորի պատմիշները (*Միքայել Ասորի*³³, Բար Հերբեռոս)³⁴, ազատվելուց հետո Ռուբեն իշխանը հետ գրավեց իր զիջած բոլոր հողերը:

Սամուել Անեցին, անդրագառնալով Ռուբենի ազատագրումից հետո Կիլիկիայի հողերի վերագրավմանը, նշում է. Աղանա քաղաքը և շրջակա ամրոցները գրավեց Լեոնը³⁵ և ոչ թե Ռուբենը, որը շատ ավելի տրամաբանական է, քան ասորի պատմիշների հաղորդումները: Ըստ Էության, 1185-ին Ռուբենի գերությունից սկսած, Լեոնը Կիլիկիայում և՛ կառավարիլ էր և՛ բանակի հրամանատար, թիկ և շտարի (1185—1187) Կիլիկիայի իշխանապետի տիտղոսը շարունակում էր կրել Ռուբեն Գ-ը:

Այն հանգամանքը, որ Լեոն իշխանը հետ գրավեց այս հողերը Ռուբենի ազատվելուց անմիջապես հետո և այդ բնթացքում շհանդիպեց ոչ մի գիմազրության, թույլ է տալիս ենթադրել, որ այդ քաղաքներում կամ գոնե գրանց մի մասում լատինները գեռ չէին հասցրել հաստատվել:

Այսպիսով, 1185 թվականին Ռուբենյան իշխանապետությունը կրկին վերագտավ ինչպես իր հողերը, այնպես էլ ներքին քաղաքական կայունությունը:

Ռուբեն Գ-ի իշխանության վերջին երկու տարիների վերաբերյալ աղբյուրների տեղեկությունները ազբատիկ են: Մեզ հետաքրքրող նյութի շուրջ միակ քիչ թե շատ ուշադրության արժանի հաղորդումը վերաբերվում է Ռուբեն իշխանապետի և Գրիգոր Տղա կաթողիկոսի կողմից Եփապտու ուղարկած պատվիրակությանը: Այս մասին է տեղե-

³³ Michel le Syrien, v. III, p. 398.

³⁴ Bar Hebraeus, p. 321.

³⁵ Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 141:

կացնում ժԲ-ԺԳ դարերի աղբությամբ հայ արարագիր պատմիլ Արուսահլ Հայը կամ Արու Սալիհ ալ-Արմանին³⁶:

«Եյս ատեններս եկաւ ի Հայոց եպիսկոպոս մի, հետ այլ երեք քահանայ, Հայոց թագաւորէն և պատրիարքէն զրկուած. երկուքէն այլ մէկ մէկ պատգամ և երկու այլ թուղթ բերելով...»³⁷: Այս նամակները ուղղված էին Սալահ ալ-Դինին, նրա եղբորը՝ Սայֆ ալ-Դինին և վերջինիս որդուն՝ Թակի ալ-Դինին, որը Եգիպտոսի փոխարքան էր:

Սակայն պատմիչի տեղեկություններից երկում է, որ «պատվիրակության ղեկավարը»՝ եպիսկոպոսը, այստեղ առանձնապես լավ ընդունելություն շի գտնում և ամիսներ շարունակ Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցում մնալուց հետո վախճանվում է³⁸: Ամենայն հավանականությամբ հայկական պատվիրակությունը իր նպատակին այդպես էլ շի հասնում:

Մինչև 1186—1187 թվականները, Եգիպտոսի Այյուբյան սուլթան Սալահ ալ-Դինը վերջնականապես վերացրել էր անկախության հետքերը «մահմեդական» Սիրիայում, լիովին իրեն էր ենթարկել Վերին Միջագետքը և իր զինված ուժերին էր միացրել Հալեպի և Մոսուլի բանակները: Այդ թվականներին արդեն Սալահ ալ-Դինը լիովին պատրաստ էր իր զինավոր խնդրի կատարմանը՝ երուսաղեմի լատին թագավորության ջախջախմանը:

Պաղեստինը այդ տարիներին անհանգիստ քաղաքական վիճակում էր: Հաշվի շառնելով ուժերի իրական հարաբերակցությունը, Փրանկները հեռավոր արշավանքներ էին ձեռնարկում դեպի Սալահ ալ-Դինի տիրույթները: Հատկապես ազրեսիվ էր Ռեզինալդ (Ռեյնալդ) Շատիլյոնցին, որը երուսաղեմի թագավորության խոշոր ավատատերերից էր: 1187 թվականին նա հարձակվեց մի խաղաղ քարավանի վրա, որի մեջ էր և Սալահ ալ-Դինի քույրը: Սա պատե-

³⁶ Արուսահլ Հայ, Պատմովիրն եկեղեցեաց և վանորեից Եգիպտոսի, Վենետիկ, 1933:

³⁷ Նույն տեղում, էջ 30:

³⁸ Նույն տեղում, էջ 31:

բազմի բռնկման առիթ հանդիսացավ: Նույն՝ 1187-ին, Տիրերիական լճի մոտ գտնվող Հիթթին վայրում խաչակրաց բանակը, որը զիսավորում էր Երուսաղեմի թագավոր Գիլուահնյանը, մեծ պարտություն կրեց Սալահ ալ-Դինի բանակներից: 1187 թվականի Հոկտեմբերի 2-ին Երուսաղեմը գրավված էր մահմեդականների կողմից: Սալահ ալ-Դինի բանակը տարածվեց Երկրով մեկ և կարճ ժամանակում նվաճեց գրեթե ողջ Պաղեստինը: Խաչակիրների ձեռքում ըստացին միայն մի քանի ծովափնյա բերդեր (Տյուրոս, Բելֆոր և այլն):

Համախմբվելով հիմնականում Տյուրոսում, խաչակիրները երկու-երեք տարի կատաղի դիմադրություն էին ցույց տալիս մահմեդականներին: Հավանաբար այս ամրոցները ևս կը նկնեին Այուրյանների Հարվածներից, եթե 1190 թվականին, տարբեր ճանապարհներով, Եվրոպայից Պաղեստին ժժամանեին խաչակրաց Գ արշավանքի մասնակիցները, որոնք փրկեցին Երուսաղեմի թագավորությունը անխռուսափելի կործանումից:

Այդ տարիներին Կիլիկիայում իշխում էր Լեռն Բ-ը, որը պիտի դառնար ոչ միայն Կիլիկյան Հայաստանի, այլև Հայոց պատմության խոշոր քաղաքական գործիչներից մեկը:

Լեռն Բ-ը (1187—1198, որպես թագավոր՝ 1198—1219) Կիլիկիայի իշխանապետ դարձավ այնպիսի ժամանակահատվածում, երբ Սալահ ալ-Դինը գրեթե իրականություն էր դարձնել իր վաղեմի ծրագիրը՝ խաչակիրների ջախջախումը և դուրսմղումը Արևելքից: Դա նշանակում էր՝ Այուրյանների նոր նվաճումների նշանակեալը կարող էր լինել նաև Կիլիկյան Հայաստանը, որը հենց այդ տարիներին աստիճանաբար վերածվում էր Արևելյան Միջերկրածովյան երկրների մեջ ամենաուժեղ քրիստոնյա պետության:

Լեռն Բ-ի իշխանության գոտի անցնելու հենց առաջին երկու տարում Կիլիկիայի վրա կատարվեց երկու արշավանք՝ մեկը թուրքմինական ցեղերի (1187), մյուսը՝ Սալահ ալ-Դինի սիրիական մի զորազոկատի կողմից (1188):

Ահա թե ինչ է Հաղորդում Սմբատ Սպարապետը Հիշյալ արշավանքներից առաջինի մասին. «Ի սոյն ամի (Ուշ—1187) թուրքման ոմն Ըոլստոմ անուն ժողովեաց անթիւ Թուրքման և եմուտ յաշխարհն Կիւիկեցւոց և իշրոյստայր բառնալ զանուն քրիստոնէից. և գնաց մինչև ի Սիս, և բանակեցաւ առաջի քաղաքին յիշաւինն, և ծածկեաց դերևսս երկրի անհամար բազմութեամբ: Եւ յայնժամ աստուածազօրն կեւոն և (30) մարդով պատերազմեցաւ ընդ նմա և ընկեց յառաջագոյն զգլիխաւորն նոցա զԸոլստոմն. և դարձան ամեներեան ի փախուստ, որոց զհետ մտեալ կոտորեաց զնոսա մինչև ի քարն Սարվանդաւի...»³⁹:

Հիշյալ արշավանքի և ընդհանրապես Կիւիկյան Հայաստանի ու Հարեւան պետությունների միջև 1187—1188 թվականների քաղաքական անցուգարձերի վերաբերյալ պատմագիտության մեջ շկա ընդհանուր կարծիք: Այս Հարցին անդրագարձած գրեթե բոլոր ուսումնասիրողների կարծիքները իրարից որոշակիորեն տարբերվում են, չնայած նրանք օգտարվել են միևնույն աղբյուրների Հաղորդած տեղեկություններից:

Այդ աղբյուրները երեքն են. Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», Միքայել Ասորու «Ժամանակագրությունը (ասորականը)» և դրա Հայերեն թարգմանված տարբերակը, ինչպես նաև Բար Հերբեռոսի ասորերեն «Ժամանակագրությունը»:

 Անդրադառնալով Ռոստոմի վերոհիշյալ արշավանքին, Ղետի Ալիշանը ենթադրում է, որ դրա զեկավարը կամ ինքնազլուխ և բախտախնդիր մեկն էր, կամ էլ՝ հկոնիայի սուլթանի զորապետներից կամ որդիներից մեկը⁴⁰:

Գրիգոր Միքայելյանը Ռոստոմի արշավանքը կապում է քրդերի և թուրքմենների միջև տեղի ունեցած ընդհարումների հետ, որոնց մասին Հաղորդում է Միքայել Ասորին⁴¹:

— 39 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 200:

— 40 Ղևիտ Ալիշան, Միսուան, էջ 442:

41 Գ. Գ. Միկաելյան, սկ. соч., стр. 141—142.

Ստեփան Պապիկյանի կարծիքը «Հայերը և խաչակիրները» հոդվածում հետևյալն է. «Բարեբախտաբար Սալահագին՝ անձամբ չեր կարող արշավել հոն (իմա՝ Կիլիկիա) իր ասորական զօրքին անկարգութեանց պատճառվ եւ միայն Ծոստամ անուն էմիր մը կը զրկեր»⁴²:

Քննարկելով բոլոր երեք կարծիքները կամ ենթադրությունները, պետք է նշել, որ վերջին հեղինակի այն ենթադրությունը, թե Ծոստոմը Սալահ ալ-Դինի ամիրներից էր և Այլուբյան սուլթանն էր նրան ուզարկել արշավելու Կիլիկիայի վրա, հիմնավորված չէ: Աղբյուրներից ոչ մեկի տեղեկություններով չեն հաստատում Ստեփան Պապիկյանի եղբակացությունները: Որպես աղբյուր նա նշում է միայն Սմբատի «Տարեգիրքը», որտեղ, ինչպես արդեն տեսանք, ոչ մի ակնարկ չկա Սալահ ալ-Դինի և Ծոստոմի միջև եղած կապի մասին:

Պատմիշների բնութագրումները՝ «Թուրքման ոմն Բոըստոմ» (Սմբատ Սպարապետ⁴³), «մի թուրքմեն հովիվ Ծոստոմ անունով» (Բար Հեբրեոս)⁴⁴, հիմք չեն տալիս նրան համարելու Սալահ ալ-Դինի ամիրներից մեկը, թեև ակներն է, որ հիշյալ թուրքմենները կամ թուրքմենական ցեղերը վաշկատուն ցեղերին հատուկ զանգվածային գաղթերի ու տեղափոխումների ժամանակ (որի ընթացքում նրանք տարածվում էին Հայաստանի հարավում, Վերին Միջագետքում, Սիրիայում, Փոքր Ասիայի հարավ արևելյան շրջաններում) կանգ էին առնում և այն տարածքներում, որոնք Սալահ ալ-Դինի պետության մաս էին կազմում:

Թերևս ճիշտ է Գ. Միքայելյանի այն ենթադրությունը, որ Ծոստոմի արշավանքը կապվում է թուրքմենների և քրդերի միջև տեղի ունեցած բնդհարումների հետ⁴⁵: Ըստ Միքայել Ասորու, թուրքմենները՝ Մոսուլի և Մծբինի կող-

⁴² Ս. Պապիկյան, Հայերը և խաչակիրները, Հանդես Ամսօրյա, 1965, հունիս-սեպտեմբեր, թիւ 7-9, էջ 375:

⁴³ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 200:

⁴⁴ Bar Hebraeus, p. 328.

⁴⁵ Г. Г. Микаелян, ук. соч., стр. 141—142.

մերում երկու անգամ ջախջախելով քրդական ցեղերին, այսուհետև սկսեցին Հետեւ պարտված թշնամուն և ներխուժեցին Կիլիկիայի լեռնային շրջանները⁴⁶:

Որ Ռոստոմի արշավանքը որևէ պետության ձեռնարկած արշավանքը չէր և ուղղված չէր Հատկապես Կիլիկիան Հայաստանի դեմ, երկում է Բար Հերբեռոսի հետևալ Հաղորդումից, որը մեջքերում ենք ամբողջությամբ. «Այդ տարին մի թուրքմեն հովիվ Ռոստոմ անունով հավաքեց 5000 հեծյալ թուրքմեն և շատ մեծ թվով հետևակ և դիմեց դեպի Կիլիկիա՝ կողոպտելու և ավարառելու համար երկիրը. Ապա, երբ լեռնը, Կիլիկիայի կառավարիլը իմացավ այդ մասին, նա փակեց նրանց առջև բոլոր լեռնանցքները Մարաշի շրջանում և նրանց բոլորին սրի քաշեց: Եվ կրկին 5000 թուրքմեն հետևակ հավաքվեց Հալեպի շրջանում և նրանք դիմեցին դեպի Անտիոքի երկիրը՝ կողոպտելու այն: Եվ Բոհեմունդ իշխանը դուրս եկավ ընդառաջ և նույն ձեռվ սրի քաշեց սրանց»⁴⁷:

Ամենայն հավանականությամբ հենց նույն այս Ռոստոմի զիխավորած թուրքմեններին նկատի ունի և Կլոդ Կայենը, որն իսլամի հանրագիտարանի «Արտուֆյաններ» հոդվածում, գրելով Դիյար Բաքրի (Վերին Միջազգետք) հարավային շրջաններում ապրող թուրքմենական ցեղերի մասին, հիշատակում է այդ ցեղերի մի մեծ գաղթ՝ Ռուստեմի գըլխավորությամբ, որը տեղի է ունեցել 1185—1190 թվականներին՝ ընդգրկելով Փոքր Ասիայի արևելյան և կենտրոնական բոլոր շրջանները⁴⁸:

Դժվար չէ նկատել, որ այս գաղթը թե՛ ժամանակային և թե՛ տարածքային ընդգրկումով լիովին համընկնում է Սմբատ Սպարապետի և Բար Հերբեռոսի հիշատակած՝ 1187 թվականի արշավանքին:

⁴⁶ Michel le Syrien, t. III, p. 401.

⁴⁷ Bar Hebraeus, p. 328.

⁴⁸ Encyclopaedia of Islam, v. I, p. 665. (Դժբախտարար Կ. Կայենի օգտագործած աղբյուրը գտնել չհաջողվեց):

Գրիգոր Միքայելյանը Հիշատակում է ևս մի արշավանքի մասին: Նա գրում է. «1188 թվականին Սալահ ալ-Դինի զորքերից մի մեծ զորաջոկատ ներխուժեց Անտիոքի իշխանության սահմանները, իսկ այնտեղից էլ Ամանոսյան լեռների մի լեռնանցքից մուտք գործեց Կիլիկիա: Այստեղ, ինչպես հաղորդում են Հայ և արաբական աղբյուրները, Սալահ ալ-Դինի զորքը չախչախվեց Հայերի կողմից՝ կողմին գլխավորությամբ»⁴⁹:

Ուսումնասիրողը միանգամայն իրավացի է, երբ, ի տարբերություն այլ Հետազոտողների, առանձնացնում է Ռուսոմի արշավանքն ու Սալահ ալ-Դինի զորքի ներխուժումը: Սակայն այստեղ ևս որոշակիություն չկա. Միքայելյանը Հիշատակելով, որ այդ մասին հաղորդում են «Հայ և արաբական աղբյուրները», դժբախտաբար չի հղում այդ աղբյուրներից և ոչ մեկը: Զնայած գրան, վերոհիշյալ արշավանքի գոյությունը շատ հավանական է, քանի որ հենց նույն՝ 1188-ին էր, որ Տրիպոլիսի կոմսությունն ու Անտիոքի իշխանությունը ենթարկվեցին Սալահ ալ-Դինին⁵⁰: Այս վերջին հանգամանքը անշուշտ կարող էր նպաստել, որ Սալահ ալ-Դինը Անտիոքի իշխանության տարածքով ազատութեն զորք անցկացներ:

Թերևս այս նույն արշավանքի մասին է ակնարկում և Քամալ ալ-Դին իրն ալ-Աղմամը՝ գրելով. «Այնուհետև սովորականը (Սալահ ալ-Դինը) որոշեց ևս մեկ անգամ ուղղվել դեպի Քարաք⁵¹ և դուրս եկավ Դամասկոսից 583 թվականի Մուհամմադ ամսի կեսերին⁵² և ընթացավ Հալեպի վրա, որ զորահավաք կատարի, սակայն այդ զորքը ուշացավ, որովհետև զրադշատ էր Քարանկների⁵³ դեմ կռվելով՝ Անտիոքի հողում և իրն Առողջի երկրում»⁵⁴:

⁴⁹ Г. Г. Микаелян, ук. соч., стр. 141—143.

⁵⁰ S. Lane-Poole, History of Egypt, p. 208.

⁵¹ Քաղաքը գտնում է Հարավային Միջիայում:

⁵² 1187 թվականի մարտի վերջ:

⁵³ Այստեղ, հավանաբար, քրիստոնյաներ իմաստով:

⁵⁴ Kamal ad-Din ibn al-Adim, Tarikh ul-Halab, Damas, 1968, v. III, p. 91.

Վերոհիշյալ երկու արշավանքները Կիլիկիայի վրա դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն: Կարելի է միայն ենթադրել, որ Ծոստոմի գլխավորած արշավանքը կատարվել է Կիլիկիայի արևելքից կամ Հյուսիսից, մոտավորապես Մարաշի շրջանից: Հավանաբար Հիշյալ Ծոստոմը կամ Ծուստեմը թուրքմեն ցեղապետ էր, նա գլխավորում էր թուրքմենական ցեղերի մի մեծ գաղթ, որի հիմնական մեկնակետերն էին Հյուսիսային Սիրիան և Վերին Միջազնետքը: Այդ գաղթի հետեանքով թուրքմենական ցեղերը 1185—1190 թվականներին ողողեցին Փոքր Ասիայի արևելյան ու կենտրոնական շրջանները⁵⁵ ու, ամենայն հավանականությամբ, հենց այդ ժամանակ էլ ներխուժեցին Կիլիկիա: Այս գաղթը իսկապես պայմանավորված էր թուրքմենների և քրդերի միջև ծագած ուազմական ընդհարումներով:

Ինչ վերաբերում է Սալահ ալ-Դինի՝ Հալեպի ղորքի գեպի Կիլիկիա կատարած արշավանքին, ապա սրա մասին տեղեկությունները բավական կցկտուր են ու անորոշ:

1187 թվականը շրջադարձային էր խաչակիր պետությունների պատմության մեջ: Հիթթինի մոտ խաչակիրների կրած ծանր պարտությունից հետո Սալահ ալ-Դինը գրավեց Երուսաղեմն ու Պաղեստինի մեծ մասը⁵⁶:

Երուսաղեմի անկման լուրը ծանր տպավորություն թողեց Եվրոպայում և առիթ հանդիսացավ խաչակրած Գ արշավանքի (1189—1192) համար: Արշավանքը ղեկավարում էին Եվրոպական երեք միապետներ՝ Հռոմեական սրբազն կայսրության տիրակալ Ֆրիդրիխ Ա Շիկամորուսը (1155—1190), Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Ա Օգոստոսը (1180—1223) և Անգլիայի թագավոր Ռիչարդ Ա Առյուծասիրուսը (1189—1199):

Ռիչարդ և Ֆիլիպ թագավորների հրամանատարության տակ գտնվող բանակը նավերով տեղափոխվեց Պաղեստին

⁵⁵ The Encyclopaedia of Islam, v. I, London, 1960, Artukids, p. 665.

⁵⁶ S. Lane-Poole, History of Egypt, p. 208.

և պաշարեց Ակրան, իսկ Ֆրիդրիխ Շիկամորուսը մեծաթիվ բանակով, ցամաքային ճանապարհով, զնաց նույն ուղղությամբ: Մեծ դժվարություններ հաղթահարելով կայսեր բանակը բավական նվազած հասավ Իկոնիա՝ Սելչուկյան սուլթանության մայրաքաղաքը:

ԺԴ գարի պատմիչ Վարդան Արենեցին իր «Տիեզերական պատմության» մեջ գրում է. Իկոնիայից Ֆրիդրիխ կայսրը երեք անգամ դեսպաններ ուղարկեց Լևոնի մոտ և պատասխան շտացավ («և հատաւ առ նա»)⁵⁷: Իսկ երբ դուրս եկավ Իկոնիայից, նրան հասավ Գրիգոր Դ Տղակաթողիկոսի նամակը՝ «Եթէ եկաք մեք ի Սիս և մնամք քեզ աստ»⁵⁸: Այս նամակը բնդունվում է մեծ խանդավառությամբ: Կայսրը պատասխան նամակում խոստանում է, որ իր հետ բերած թագով ու զգեստով կաթողիկոսը կարող է օծել «Թագավոր Հայոց», ում ինքը՝ կաթողիկոսը, կկամենա⁵⁹: Սակայն Ֆրիդրիխ Շիկամորուսի ծրագրերն ու խոստումները շիրականացան: Նա զոհվեց՝ խեղդվելով Սելեկիա գետում:

Ինչպես երեսում է Վարդան պատմիչի վերոհիշյալ տեղեկությունից, Լևոն Բ-ը բավական զգուշավոր գիրք է բռնել Ֆրիդրիխ Շիկամորուսի հանդեպ և աշխատել է ընդհանրապես Հանդիպել նրան՝ հասկանալով վերջինիս նրավաճողական պլանները և միաժամանակ շցանկանալով իր գեմ գրգռել Սալահ ալ-Դինին:

Կիլիկիայի իշխանապետի այս գիրքորոշումը լիովին հաստատվում է իրն Շահդադ պատմիչի հետևյալ տեղեկությամբ: «Երբ Լևոնի որդին (նկատի ունի հենց Լևոն Բ-ին) լսեց, թէ ինչ պատահեց նրանց, այսինքն նրանց (ալմանների) թագավորի մահը և այդ բանի հետևանքով նրանց կրած բոլոր տառապանքները՝ քաղցի, մահվան և

⁵⁷ Վարդան Արենեցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 178—179:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Նույն տեղում:

Հիվանդությունների պատճառով, շուղեց գնալ նրանց մոտ, որովհետև նախ՝ չգիտեր, թե գեղքերը ինչ ընթացք կստանային, և երկրորդ՝ որ նրանք ֆրանկ էին, իսկ ինքը՝ հայեր, և քաշվեց իր անառիկ բերդերից մեկը»⁶⁰:

Վերջապես հետաքրքիր է նաև հետևյալ փաստը. երբ Ֆրիդրիխ կայսրը մոտեցավ Կիլիկիային, հայոց Գրիգոր Տղա կաթողիկոսը նամակ գրեց Սալահ ալ-Դինին⁶¹: Այդ նամակը իրենց գրքերում ամբողջությամբ մեջբերում են արաբ պատմիչներ իրն Շագգաղը, իրն ալ-Ֆուրաթը և Արու Շաման:

Այս նամակում կաթողիկոսը նկարագրում է Ֆրիդրիխ Շիկամորուախ բանակի առաջխաղացումը մինչև Կիլիկիա, նրանց բախումները հույնների, թուրքենների և իկոնիայի սելջուկների հետ: Ապա աշխատում է ամեն կերպ իրեն ու Լևոն Բ-ին ներկայացնել որպես Սալահ ալ-Դինի բարեկամ ու դաշնակից: Կաթողիկոսը զրում է. երբ Կիլիկիայում ստանում են Ֆրիդրիխ կայսեր նամակը, նրա մոտ են ուղարկում ոմն Հաթիմի (երեք Հեթում)՝ իբրև պատվիրակ և սրա հետ բարձրաստիճան անձնավորություններ: Նրանք իրենց հետ տանում են Հայերի պատասխան նամակը, որով իբր խորհուրդ էր տրվում «Ալմանների թագավորին»⁶² հետ դառնար գեպի Կըլը Արսլանի երկիրը: Իսկ Ֆրիդրիխ կայսեր մահից հետո նրա որդին է անցնում զորքի զուտի և մտնում Կիլիկիա: Լևոնը սկզբում քաշվում է իր բերդերից մեկը, բայց «Ալմանների թագավորի որդին» սպառնում է գրավել նրա երկիրը, եթե Հակառակվի: Եվ կաթողիկոսը, կարծես փորձելով արդարացնել լեռնին, ավելացնում է. «Լևոնի որդին Հարկադրվեց տեղի տալ և գնալ դիմավորել թագավորին: Արդարե, նա (թագավորը) գտնվում էր մի մեծաթիվ բանակի զուտի, որը հավաքել էր արշավանքի

⁶⁰ Արաբական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, էջ 298:

⁶¹ Նույն տեղում էջ 294—297:

⁶² Նույն տեղում, էջ 296:

Համար: Այդ բանակը բաղկացած էր քառասուն հազար հեծյալից և անթիվ հետեւակից՝ բաղկացած այլազգի ժողովուրդներից...»⁶³:

Գրիգոր Տղան նամակի վերջում էլ պատրաստակամություն է հայտնում, եթե մի նոր բան պատահի, կտեղեկացնի Սալահ ալ-Դինին:

Իբն Շաղդադը նամակն ամբողջությամբ մեջրերելոց հետո ավելացնում է. «Սա է նամակը կաթողիկոսի և այս բառը նշանակում է խալիֆա. նրա անունն է Բար Քրիքուր իբն Վասիլ»⁶⁴:

Ուսումնասիրողներից ոմանք (Ալիշան⁶⁵, Տուրնըրիզ⁶⁶ և ուրիշներ) այս նամակը կեղծիք են համարում: Եվ դա լոկ այն պատճառով որ իբր կաթողիկոսը չէր կարող բարեկամական նամակներ գրել միաժամանակ թե՛ Ֆրիդրիխ Առաջինին և թե՛ Սալահ ալ-Դինին⁶⁷:

Որ այդ կարծիքը հիմք շունի, ապացուցել է Գրիգոր Միքայելյանը, հավաստելով, որ Գրիգոր Տղան բարեկամական հարաբերություններ է ունեցել գեուս Նուր ալ-Դինի հետ (հենց նրա ու Մլեհի միջամտությամբ էր դարձել կաթողիկոս) և բացառված չէր, որ նույնպիսի լավ հարաբերությունների մեջ կարող էր լինել նաև մի այլ մահմեդական տիրակալի հետ⁶⁸: Այստեղ նա հանգես էր գալիս ոչ թե որպես քրիստոնյա հովվապետ, այլ՝ քաղաքական գործիչ: Բացի այդ, իբն Շաղդադի մոտ հիշատակվում է ոչ միայն նամակի հե-

63 Նույն տեղում:

64 Նույն տեղում, էջ 297:

65 Ալիշան, Միսուան, էջ 185:

66 F. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 185.

67 Հիշենք, որ սա առաջին նամակը չէ, որ Գրիգոր Տղան ուղարկում էր Սալահ ալ-Դինին:

68 68 Г. Микаелян, Ук. соч., стр. 145—147.

զինակի հայոց կաթողիկոս և Հռոմկլայի տեր լինելը, այլև
նրա ճշգրիտ անունը՝ Բար Քրիքուր իրն Վասիլ, որ նույնն
է՝ Գրիգոր տղա որդի Վասիլի⁶⁹:

Վերջապես, այս նամակի վավերականությունը մեկ
անգամ ևս հաստատում է դեպքերին ժամանակակից Աբու
Շաման իր պատմական երկում։ Նա համառոտ վերապատ-
մում է կաթողիկոսի նամակը, սակայն չի թաքցնում իր
կրոնական ատելությունը քրիստոնյաների հանդեպ։ Ուշագր-
րավ է, որ Աբու Շաման անընդհատ ակնարկում է, թե
ինքը հավատ չի ընծայում կաթողիկոսին, իսկ մի տեղ էլ
գրում է. «Նա (Հռոմկլայի տերը) սպառնում էր, վախեց-
նում, հնարանքներով խոսում և անկասկած թաքցնում էր,
որ իր պիղծ ցեղին է համակրում և խոսում էր իր ազգին
հատուկ խորամանկությամբ»⁷⁰։ Վերջին բառերը հաստա-
տում են այն միտքը, որ Գրիգոր կաթողիկոսի նամակը
արտահայտում էր Ծուրինյան իշխանապետության շահերը
Նրա համար ձեռնտու էր, որ կողմերից ոչ մեկը շափից
ավելի շնորհանա և շապառնա Կիլիկիայի ինքնուրույնու-
թյանն ու անկախությանը:

Անկասկած, Լեռն Բ-ի և կաթողիկոսի միջև կար որո-
շակի ընդհանուր քաղաքական գիրքորոշում։ Պատահական
չէ, որ Ֆրիդրիխ Շիկամորուսին գրած նամակում կաթողի-
կոսը հաղորդում է, թե գտնվում է Սիսում և սպասում է
կայսեր։ Ամենայն հավանականությամբ Գրիգոր կաթողի-
կոսը Հռոմկլայից շտապել էր Սիս՝ Լեռն Բ-ի հետ խորհր-
դակցելու և իրենց գործողությունները համաձայնեցնելու
համար։ Լեռն Բ-ը, որպես քաղաքական առաջնորդ, դի-
մում է շեղոքության և խաչակիրների և Սալահ ալ-Դինի
հանդեպ՝ սպասելով դեպքերի հետագա ընթացքին, իսկ
կաթողիկոսը, որը հոգեւոր առաջնորդ լինելուց բացի, երբեմն
հանդես է գալիս որպես արտաքին գործերը վարող անձ,

⁶⁹ Աբաբական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին,
էջ 297։

⁷⁰ Abu Shama, Ar-Raudatayn fi achbar ad-daulatayn, p. 150.

բարեկամական ու հավատարմական նամակներ է գրում թե՛
մեկ, թե՛ մյուս տիրակալներին: Ու թեկ, ի վերջո, կեռն
Բ-ը պարեն, անասնակեր ու տեղ է տալիս խաչակիրներին
Կիլիկիայում⁷¹, բայց, հավանաբար, անձամբ չի հանդիպում
նրանց. ո՞ւ Ֆրիդրիխ Շիկամորուսի և ո՞ւ էլ նրա որդու՝
Հենրիի Զ-ի հետ:

Եթե Ֆրիդրիխ Շիկամորուսից կամ նրա հաջորդներից
հայերը ունեն թագ ստանալու ակնկալիքներ (իսկ դա 8
տարի հետո իրականացավ), ապա Սալահ ալ-Դինն էլ
այդ ժամանակ գտնվում էր իր հզորության գագաթնակե-
տին և ցանկացած պահի կարող էր ներխուժել Կիլիկիա:
Ավելին, Հռոմեան՝ Հայոց կաթողիկոսանիստը, գտնվում էր
նրա տիրութների մեջ:

Մի փոքր միակողմանի է ներկայացնում վերոհիշյալ
դեպքերը Ռընե Գրուսեն՝ գրելով. կեռն Բ-ը ամեն կերպ
աշխատում էր օգնել խաչակիրներին, իսկ Գրիգոր կաթողի-
կոսի՝ Սալահ ալ-Դինին ուղարկած նամակի նպատակը,
ըստ նրա, այն էր, որ խաչակրաց բանակի հզորությունը
նկարագրելով բարոյալքի մահմեդականներին՝ նախքան եր-
կու բանակների հանդիպումը⁷²: Սակայն այս տեսակետը շի
հաստատվում աղբյուրների տեղեկություններով: Արու Շա-
մայի մոտ կա մի այսպիսի նախադասություն. «Նա (Հռ-
ոմեան) գտնում էր, որ եկողները (խաչակիր-
ները) մեծաթիվ են, իսկ նրանց ճանապարհը փակող-
ները վատ վիճակում են»⁷³: Անշուշտ այս և նման մի քա-
նի արտահայտություններ նկատի ունի Ռընե Գրուսեն,
երբ գրում է, որ կաթողիկոսը փորձում էր այդ ձևով բա-
րոյալքել մահմեդականների բանակը:

Վերոհիշյալ կարծիքը նախ տրամաբանված չէ: Եթե
կաթողիկոսի նպատակը միայն Սալահ ալ-Դինի բանակի

⁷¹ Խքն ալ-Ասիր, էջ 275:

⁷² R. Grousset, Histoire des Croisades, v. III, Paris, 1936, p. 15-16.

⁷³ Abu Shama, Ar-Raudatayn fi achbar ad-daulatayn, p. 150.

պարտված տեսնելն էր, ապա նա կվարվեր ճիշտ հակառակ ձևով: Նա կամ ոչինչ չէր հաղորդի մահմեղականներին, կամ էլ կզրեր, որ խաչակիրները փոքրաթիվ են և թուզ, թերեւս այդ ձևով փորձելով թյուրիմացության մեջ պահել նրանց: Այնինչ, ըստ Արու Շամայի տեղեկության, կաթողիկոսի այս նամակը փաստորեն ահազանգի դեր է կատարում Սալահ ալ-Դինի համար: Արու Շաման գրում է, «Երբ այս լուրը տեղ հասավ և իմացվեց, որ վիճակը վտանգավոր է, մարդիկ իրար անցան...: Ուումի երկիրը հետախուզվներ (տեքստում՝ աշքեր) և լրտեսներ ուղարկեցին և դեսպաններ՝ օգնություն խնդրելով...»⁷⁴:

Ավելին, իբն Շաղգագը հաղորդում է կաթողիկոսի՝ Սալահ ալ-Դինին ուղարկած մի երկրորդ նամակի մասին, որով կաթողիկոսը տեղեկացնում է խաչակիրների առաջինացման, նրանց ծայրաստիճան թշվառ վիճակի մասին⁷⁵:

Հետաքրքիր է հատկապես կաթողիկոսի հետևյալ հաղորդումը. մինչ խաչակրաց զորքը մոտենում էր Անտիոքին, կուն Բ-ը և Անտիոքի իշխանը, տեղեկանալով նրանց թուլության, ինչպես նաև թագավորի⁷⁶ տկարության ու հիվանդության մասին, փորձում էին զրավել նրանց ունեցվածքը⁷⁷:

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանը աղատվեց խաչակրաց հսկա բանակի վտանգավոր ներկայությունից, իսկ Սալահ ալ-Դինի արտաքին քաղաքականության մեջ կրկին առաջին պլան մղվեց պայքարը նոր համարում ստացած խաչակիրների դեմ: Ստեղծված իրավիճակում կուն Բ-ը ոչ միայն պահպանեց իր իշխանապետության դիրքերը, այլև նոր նվաճումների հասավ:

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ Արարական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, էջ 299—300:

⁷⁶ Հենրիխ Զ (1191—1197):

⁷⁷ Արարական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, էջ 300:

Երբ խաչակիրների բանակը մոտեցավ Սիրիային, սկզբում մահմեդականների մեջ խուճապ էր տիրում։ Սալահ ալ-Դինը նախընտրեց Հետ քաշել իր կայազորները մի շարք վայրերից, այդ թվում և Բաղրամ (Գաստոն) ամրոցից⁷⁸։

Սալահ ալ-Դինը, ըստ Իբն ալ-Ասիրիի, հրամայեց քանդել ամրոցը, որը, ըստ պատմիչի, «մեծ վնաս էր մահմեդականներին, քանզի Հայոց տեր (Սահիբ ալ-Արման) կառնի որդին (Իբն Լայուն), որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց ու կատարելագործեց այն և այնտեղ նըշանակեց իր զինվորներից մի խումբ, որն այնտեղից ասպատակում էր գրացի երկիրը և սրանից շատ տուժեց Հալեպի շրջակայքի ժողովուրդը։ Այն մինչև օրս էլ նրանց (Հայերի) ձեռքում է»⁷⁹։

Այսպիսով Բաղրամը, որ երկար տարիներ վիճելի տիրույթ էր Հայերի և Տաճարականների միջև (սկսած դեռևս Թորոս Բ-ի ժամանակներից), անցավ կառն Բ-ին։ Ամրոցը ռազմաստրատեգիական կարևոր դիրք ուներ. Հըսկում էր Բեյլանի կիրճին, որը Սիրիայի մուտքն էր՝ Կիլիկիայի կողմից, իսկ Հետափայում կարևոր հենակետ դարձավ կառն Բ-ի համար՝ Հյուսիսային Սիրիայում մղած կը-ոիվների ժամանակ։

Ահա թե ինչպես է այն նկարագրում եվրոպացի ուղեգիր Վիլբրանդ Օլդենբուրգցին, որը 1212 թ. այցելել է Կիլիկյան Հայաստան։ «Սա (Գաստոնը) շատ ուժեղ ամրոց է՝ երեք շարք շափականց հզոր և աշտարակավոր պարիսպներով շրջապատված, և գտնվում է Հայաստանի լեռների վրա՝ սահմանագլխին»⁸⁰։

Մինչ կառն Բ-ը ընդարձակում էր իր տիրույթները ու ամրացնում սահմանները, խաչակրաց Դ արշավանքի մասնակիցները համառ պայքար էին մղում Սալահ ալ-Դինի

⁷⁸ R. Grousset, Histoire des Croisades, v. III, p. 16.

⁷⁹ Իբն ալ-Ասիր, էջ 273։

⁸⁰ Wilbrandi de Oldenborg, Peregrinatio, in: Laurent, Peregrinatores medii aevi quatuor, Lipsiae, 1863, p. 174.

զորքերի դեմ՝ հանուն Պաղեստինի ծովափնյա մասի՝ գլխավորապես Ակրայի:

Վերջապես, երկու տարվա պայքարից հետո, 1192 թվականի սեպտեմբերի 2-ին Ռամլայում խաչակրաց Գ արշավանքի ղեկավարների և Սալահ ալ-Դինի միջև հաշտություն կնքվեց, համաձայն որի խաչակիրները վերստացան Ակրայից մինչև Հոբրե (Յաֆֆա) ընկած ծովափը, սակայն չկատարեցին իրենց գլխավոր խնդիրը՝ երուսաղեմը այցպես էլ շվերագրավվեց: Ընդհանուր առմամբ արշավանքն անհաջող անցավ⁸¹:

Մեզ հետաքրքրում է այն հարցը, թե արդյո՞ք Կիլիկիայի հայերը մասնակցել են խաչակրաց Գ արշավանքին: Թե՛ հայ և թե՛ օտար աղբյուրները այս մասին լրառումն են: Ընդհակառակը, ինչպես արդեն վերը նշվեց, այդ աղբյուրների տեղեկությունները գրեթե բացառում են հայերի ու խաչակիրների (մանավանդ գերմանացի խաչակիրների) զինակցության հնարավորությունը: Սակայն որոշ ուսումնասիրողներ, վկայակոչելով միջնադարյան գերմանացի մի բանաստեղծի տեղեկությունը, հնարավոր են համարում այդ զինակցությունը: Վերոհիշյալ աղբյուրում Ակրան գրավող թագավորների շարքում Գերմանիայի, Երուսաղեմի և Կիպրոսի թագավորների կողքին հիշվում է նաև

Լևոն թագավոր Ուրիայի (Ուրիինյան),
ինչպես նաև Հայաստանի⁸²:

Տեղեկությունը բավական որոշակի է, սակայն առայժմ հիմք չի տալիս հեռուն գնացող ենթագրությունների համար՝ մի քանի պատճառներով: Նախ՝ սա այդ մասին հաղորդող միակ աղբյուրն է, ընդ որում տեղեկությունը հանդիպում է գեղարվեստական երկում, որտեղ բացառված չէ, որ գերմանացի խաչակիրներին պարեն տրամադրած լևոն թ-

81 S. Lane-Poole, History of Egypt, p. 211.

82 Պ. Ալիշան, Սիսուան, էջ 449, Վ. Քյուրէշյան, Հայկական Կիլիկիա, նյու Յորք, 1919, էջ 11—12:

վերածվի Ակրան գրաված քաջարի քրիստոնյա թագավորի: Բացի այդ, այս տեղեկությունը հակասում է մյուս բոլոր հայ, արար և ասորի պատմիչների տեղեկություններին և ընդհանրապես Լեռն թ-ի շեզօք քաղաքականությանը: Հետեւաբար, քանի դեռ չկան այլ աղբյուրներ, որոնք կհաստատեն վերոհիշյալ հայ-խաչակիր զինակցությունը, այդ մասին առայժմ դժվար է խոսելը:

Այսպիսով, 1192 թվականի հաշտությամբ Սայահ ալ-Դինը մնաց գրության տերը և առաջվա պես իշխում էր մի հսկա տերության, որը ձգվում էր Հայկական Տավրոսի լեռներից մինչև Լիբրիական անապատը: Նա վերջնականապես թուլացրել էր խաչակիրներին՝ նրանց թողնելով միայն ծովափնյա մի նեղ շերտ: Ընդ որում եվրոպացից նոր համալրում խաչակիրները մոտ ժամանակներում չէին ըստապասում: Այս ամենը հիմք էր տալիս Սալահ ալ-Դինին՝ անցնելու նոր նվաճումների հյուսիսում և հյուսիս-արևելքում: Դրանով բարդանում էր Կիլիկիայի վիճակը. եթե մինչ այդ Սալահ ալ-Դինը աշխատում էր մեզմ վարվել հայերի և ասորիների հետ, այս ձեռվ փորձելով նրանց հեռու պահել խաչակիրներից (այդպես եղավ օրինակ 1187 թ. Երուսաղեմի գրավման ժամանակ), ապա այժմ արդեն նա դրա կարիքը չէր զգում:

Սալահ ալ-Դինի նվաճողական ծրագրերի մասին է պատմում Իրն ալ-Ասիրը: Ըստ նրա, սովորանը իր մոտ է կանչում որդուն՝ ալ-Աֆդալին ու եղբորը՝ ալ-Մալիք ալ-Ադիլին և նրանց հետ միասին մշակում նոր երկրների նը-վաճման ծրագրեր: Նախատեսվում է զավթել Իկոնիայի սովորանությունը, Մեծ Հայքի մի մասը, Ատրպատականը և մինչև իսկ Իրանը⁸³, այդ ընթացքում առաջին հերթին վերացնելով Ռուբինյան իշխանապետությունը:

Իսկ Սալահ ալ-Դինի որոշումը Կիլիկիան նվաճելու մասին, տեղեկանում ենք Սմբատ Սպարապետի «Ճարեգրքից»: Ըստ պատմիչի, իր իշխանության վերջին տարում

⁸³ Իրն ալ-Ասիր, էջ 278—279.

(1193) սուլթան Սալահ ալ-Դինը մարդ է ուղարկում Լեռնի մոտ՝ պահանջելով հանձնել Կիլիկիան և անձամբ ներկայանալ իրեն⁸⁴: Հայոց իշխանապետը, մի կողմ թողնելով դիվանագիտությունը և հաշտության հնարավորություններ շտեսնելով, հետեւյալ պատասխանն է տալիս պատվիրակին. «Ասա ցսուլտանն թէ երկիր ոչ ունիմ տալ քեզ, բայց եթէ գայցես յերկրիս իմում տաց քեզ յերկսայրից ըմպելիս, որպէս հաւատակցին քո Ըորստոմի»⁸⁵:

Այսպիսի համարձակ պատասխան ստանալով, սուլթանը, պատմիշի արտահայտությամբ, «մոճու որպես զառիւծ»⁸⁶ և զորքով հարձակվում է Կիլիկիայի վրա: Այսուբյանների բանակը հասնում է մինչև Սև գետը՝ Ռուբինյան իշխանության սահմանը, բայց այստեղ Սալահ ալ-Դինը հանկարծակի հիվանդանում է ու մեռնում⁸⁷: Այսպես Կիլիկիան փրկվեց Այսուբյանների Գ (Եթե հաշվենք նաև 1188-ի ենթադրյալ արշավանքը) արշավանքից: Եթե 1180-ին Ռուբինյանները մի ամրոց գիշելով ու նվերներով հեռացրին Սալահ ալ-Դինի բանակի ներխուժումը, զինված հականարված տվեցին, ապա այս անգամ արդեն Կիլիկիան կանգնած էր նվաճման անմիջական վտանգի առջև:

Սալահ ալ-Դինի մահից հետո Այսուբյան հսկա տերությունը բաժանվեց մի քանի մասերի: Նրա ժառանգությանը տեր դարձան որդիները՝ ալ-Աֆդալը, ալ-Աղիզը, ալ-Զահիրը և եղբայրը՝ ալ-Ադիլը: 1194 թվականին եղբայրների միջև սկսվեցին գահակալական կռիվներ: Այսպիսով Կիլիկիան ազատվեց ՀՊՕ ու վտանգավոր թշնամուց:

Սալահ ալ-Դինից ազատվեոց հետո Կիլիկիան իրեն ենթարկելու փորձ կատարեց Անտիոքի իշխան Բոհեմոնդ Գ-ը: 1193 թ վականին նա, ձերբակալելու նպատակով, Անտիոք հրավիրեց Լեռն Բ-ին: Նախօրոք տեղեկանալով այս

⁸⁴ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 204:

⁸⁵ Նկատի ունի թուրքմեն ցեղապետ Ռուստոմին:

⁸⁶ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 204:

⁸⁷ Նույն տեղում:

մասին, կեռն թ-ը շկրկնեց իր եղբոր՝ Ռուբենի սխալը: Նա
ոչ միայն շգնաց Անտիոք, այլև ինքը ծուղակի մեջ գցեց
Բոհեմունդի իշխանին: Այս մասին հաղորդում է Բար Հեր-
բեռ պատմիչը, որը մանրամասն նկարագրում է, թէ ինչ-
պիսի խորամանկությամբ կեռն թ-ը Բոհեմունդին կանչեց
Բաղրաս և ամրոցի հայ կառավարչի միջոցով ձերբակալեց
ու կապանքների մեջ տանջեց նրան⁸⁸:

Անտիոքի իշխանը մնաց գերության մեջ մինչև Ակրայի
տեր Սիր Հենրիի Շամպայնցու միջամտությունը, որից հետո
Հաշտություն կնքվեց⁸⁹:

Ըստ այդ Հաշտության, Բոհեմունդ Գ-ը վերադարձեց
Ռուբինյաններից իւլած սահմանամերձ հողերը և Հրա-
ժարվեց Բաղրասից մինչև Այս ընկած Դաշտային Կիլի-
կիայի հարավային մասի հանդեպ իր հավակնություններից:

Հաշտության երկրորդ կետով Բոհեմունդի որդին՝ Ռայ-
մունզը, ամուսնացավ կեռնի եղբոր՝ Ստեփաննեի աղջկա՝
Ալիսի հետ: Սրանցից ծնված Ռուբին-Ռայմունզը հետագա-
յում կեռն թ-ի կողմից հոշակվեց հայոց գահաժառանգ⁹⁰:

Նույն տարիններին կեռն թ-ը հաղթանակներ տարավ
նաև իկոնիայի սելջուկների և բյուզանդացիների նկատմամբ՝
իր իշխանապետությանը միացնելով Կիլիկիայում նրանց ձեռ-
քում մնացած վերջին բերդերը: Այդ մասին է գրում Բար Հեր-
բեռնը. «կեռնը կըլը Արալանի մահից հետո (1192) շատ հղո-
րացավ և գրավեց 72 ամրոց՝ մի մասը թուրքերից, իսկ մյուսը՝
հույններից: Եվ իր մղած բոլոր պատերազմներում նա
հաղթական էր»⁹¹:

Վերոհիշյալ հաղթանակների շնորհիվ, Ռուբինյան իշ-
խանապետությունը իր տարածքով և ուղղական ու տնտե-
սական կարողություններով բավական հզոր ու կայուն

⁸⁸ Bar Hebraeus, p. 343—344.

⁸⁹ Միսալէի Ասորոց պատրիարքի ժամանակագրութիւն, Երուսաղեմ,
1871, էջ 501:

⁹⁰ Ամրատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 204:

⁹¹ Bar Hebraeus, p. 344.

սլետական միավոր դարձավ՝ լիովին պատրաստ վերածվելու թագավորության:

1196 թվականին Լևոն Բ-ը Հռոմի պապ Կելեստինոս Գ-ի մոտ ուղարկեց պատվիրակություն, որի խնդիրն էր պապի միջնորդությամբ թագ ստանալ Հռոմեական սրբազն կայսրությունից: Իր հերթին պապի կողմից ուղարկված պատվիրակությունը մի քանի դավանաբանական պահանջներ առաջարկեց Կիլիկիայի Հայերին, որոնք առերիս ընդունվեցին: Լևոն Բ-ին թագեր ուղարկեցին Հռոմեական սրբազն կայսրության կայսր Հենրիի Զ-ն և Հռոմի պապ Կելեստինոս Գ-ը:

Լևոն Բ-ին թագ ուղարկեց նաև բյուզանդական կայսրը, փորձելով իր կողմը գրավել նորաստեղծ թագավորությանը և հեռու պահել Կիլիկիան Հռոմեական եկեղեցու ազգեցությունից: Սակայն Բյուզանդական կայսրությունը ԺԲ դարի վերջին կրկին թուլացավ, իսկ մի քանի տարի անց (1204) ժամանակավորապես վերացավ խաչակիրների Հարվածների տակ: Մինչդեռ Հռոմեական եկեղեցին իր ազգեցությունն էր տարածել գրեթե ողջ Եվրոպայում և նրա գերագահությունն էին ընդունել բազմաթիվ Հզոր տիրակալներ: Բնական է, որ Լևոն Բ-ը Հռոմեական սրբազն կայսրության և եկեղեցու Հովանավորությունը նախընտրեց Բյուզանդական քայլայվող կայսրությունից և իր ազգեցությունը կորցրած հունադավան եկեղեցուց:

1198 թվականին Տարսոնի ս. Սոփիա եկեղեցում Լևոն Բ-ը հանդիսավորապես օծվեց «Թագավոր Հայոց»: Թագադը բության հանդեսին ներկա էին Հունաց մետրոպոլիտը, ասորիների պատրիարքը, 15 հայ եպիսկոպոսներ և 39 հայ իշխաններ⁹²: Բացի եվրոպական տիրակալներից ու Հոգևոր պետերից, Լևոն Բ-ի թագադը բությունը ողջունեց նաև Բաղդադի Արբասյան խալիֆա ալ-Նասիրը (1180—1225), որը

⁹² Սմբատ սպարապետ, Տարեգիրք, էջ 208:

իր գեսպանների հետ թանկարժեք ընծաներ ուղարկեց նոր թագավորին⁹³:

Այսպիսով, 1198 թվականին առերես ընդունելով կաթոլիկական դավանանքի երեք կետերը և թագաղթվելով Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադոս Վիտելսբախի կողմից (ապա նաև Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսի) կոտու Բ-ը սերտ կապեր հաստատեց Հռոմեական եկեղեցու և եվրոպական մի շարք երկրների հետ: Սկսած 1199 թվականից աշխուզժ նամակագրություն սկսվեց Կիլիկիայի հայերի և իննոկենտիոս Գ (1198—1216) պապի միջև:

Կիլիկյան Հայաստանի և Հռոմեական եկեղեցու միջև հաստատված հարաբերությունների, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի թագավորների արտաքին քաղաքականության մասին շատ հետաքրքիր նյութեր կան լատինագիր հեղինակ Բրոկարդոսի գրքում: Նա գրում է. «Հայերը երբ Հռոմեական եկեղեցուն միացան, բանավոր ու գրավոր խոստացան հավատի միություն...»⁹⁴: Ապա Բրոկարդոսը բացատրում է. «Հայերը թուրքերի և սարակինոսների անվերջ արշավանքներին ու Հալածանքներին ենթարկվելով, գիմում են Հռոմեական եկեղեցուն «անկասկած դրդված և մղված ու այնքան մեծ սիրուց և հարգանքից, որքան անհրաժեշտությունից»⁹⁵: Վերջապես կաթոլիկ մատենագիրը զայրութով է գրում. «Հայերը, երբ Հռոմեական եկեղեցու միջոցով «ձեռք բերեցին թագավորություն, անուն և փառք»⁹⁶, երես թերեցին կաթոլիկներից՝ հետ խլելով այն հողերն ու վանքերը, որ տվել էին լատին հոգևորականությանը»⁹⁷: Այս տեղեկությունները հաստատում են այն միտքը, որ Հռոմեական Հայաստանի մասին պատճենագիրը զայրութով է գրում.

⁹³ Ս. Տեր- Մովսիսյան, Պատմություն Հայոց ոկիզրեն մինչև մեր օրերը, Վենետիկ, 1924, էջ 483:

⁹⁴ Brocardus, Directorium ad Passagium Faciendum, in: Recueil des Historiens des Croisades, doc. arméniens, t. II, Paris, p. 486—490.

⁹⁵ Նույն տեղում, էջ 490:

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ Brocardus, p. 486—490.

թագ ստանալով և համաձայնվելով նրանց առաջ քաշած դաւանաբանական երեք կետերին, ո՛չ Կիլիկիայի հայ բնակչությունը և ո՛չ էլ նույնիսկ վերնախավը կաթոլիկ շգարձան:

ԺԲ դարի վերջին քառորդում Կիլիկյան Հայաստանին հարևան պետությունների մեջ ամենաընդարձակը և հզորը Ալյուրյան սուլթանությունն էր: Հենց այս պետության հետ հարաբերություններն են կենտրոնական տեղ գրավում ԺԲ դարի 70—90-ական թվականների Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ: Սակայն այդ փոխարաբերությունները, սկսած Կիլիկիային հարևան երկրներում Սալահ ալ-Դինի բանակի առաջին անգամ հայտնվելուց (1174) մինչև սուլթանի մահը և տերության տրոհումը (1193), կրեցին փոփոխություններ, որոնք առաջին հերթին պայմանավորված էին Սալահ ալ-Դին—խաչակիրներ հակամարտության ընթացքով:

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանի և Ալյուրյան սուլթանության փոխարաբերությունները 1174—1193 թվականների ընթացքում կարելի է բաժանել շորս հիմնական փուլերի.

1) 1174—1187 թվականներ: Այս շրջանում Սալահ ալ-Դինի համար կարևոր խնդիրը մահմեդական ամիրությունների ենթարկումն է և երուսաղեմի խաչակրաց թագավորության ջախջախումը: Իսկ Ռուբեն Գ-ը և Կիլիկյան Հայաստանի վերնախավը՝ կորցնելով իրենց հզոր դաշնակցին (Զանգիների պետություն), փորձում են գոնե լավ հարաբերություններ պահպանել դրացի խաչակիրների հետ՝ հետևելով պայքարի հետագա ընթացքին:

2) 1187—1190 թվականներ: Այս շրջանում Սալահ ալ-Դինը ջախջախում է խաչակիրներին և, մի կողմ թողնելով նախկին զգուշավոր վերաբերմունքը ոչ ֆրանկ քրիստոնյաների նկատմամբ, առավել հարձակողական է դառնում և նույնիսկ 1188-ին մի զորացոկատ է ուղարկում Կիլիկիա՝ հավանաբար հետախուզական նպատակներով: Սակայն այս շրջանը վերջանում է այն ժամանակի, երբ Մերձավոր

արևելքում հայտնվում են խաչակրաց գ արշավանքի մաս-
նակիցները:

3) 1190—1192 թ. սեպտեմբերի 2. կրկին Սալահ ալ-
Դինի համար առաջին պլան է մղվում պայքարը ուժեղա-
ցած խաչակիրների դեմ, իսկ Ակոն Բ-ը և Կիլիկիայի վերնա-
խավը վարում են շեղոք քաղաքականություն՝ փորձելով հե-
ռացնել վտանգը երկրից, իսկ Հնարավորության դեպքում՝
նաև օգուտ քաղել երկու մեծ ուժերի բախումից, որի ելքը
դեռևս անորոշ էր:

4) 1192 թ. սեպտեմբերի 2—1193 թ.: Ռամլայի հաշ-
տությունից հետո Սալահ ալ-Դինը կրկին իրեն դրության
տեր է զգում: Նա անցնում է իր նվաճողական ծրագրի ի-
րագործմանը, որի ճանապարհին առաջին արգելքներից մե-
կը Կիլիկյան Հայաստանն էր: Սուլթանի անսպասելի մահով
Կիլիկիայի հենց սահմանագլխին ընդհատվում է հայոց իշ-
խանապետության համար աղետաբեր այդ արշավանքը:

Կիլիկիան ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
 ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՅՅՈՒԹՅԱՆ
 ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԻՈՔ-ՏՐԻՊՈԼԻՍԻ ԿՈՄՄՈՒԹՅԱՆ
 ՀԵՏ 1198—1226 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺԲ դարի վերջին Կիլիկյան Հայաստանը քաղաքական
 ու տնտեսական վերելք էր ապրում: Լևոն Բ-ի ռազմական
 հաղթանակները և իշխանապետության սահմանների ընդար-
 ձակումը, հայոց թագավորության հռչակումն ու նրա ճա-
 նաշումը ժամանակի խոշոր տերությունների կողմից ամուր
 հիմքեր էին ստեղծել Կիլիկյան Հայաստանի բուռն ժաղկման
 համար:

ԺԲ դարի վերջին 6—7 տարիներին Կիլիկյան Հայաս-
 տան հղորացումը պայմանավորված էր նաև նրանով, որ
 հարեան բոլոր պետությունները (բացառությամբ Իկոնիայի
 սովորականության) զգալիորեն թուլացել կամ մասնատվել էին:
 Ընդ որում այս պետություններից Ռուբինյանների արտա-
 քին քաղաքականության մեջ նախորդ քսանամյակում կա-
 րենոր տեղ էր զրավում Այյուբյան սովորականությունը, որը,
 ինչպես արդեն նշվեց, իր հիմնագրի՝ Սալահ ալ-Դինի մա-
 հից հետո դարձավ միջդինաստիական պայքարի թատերա-
 քեմ:

Սալահ ալ-Դինի տերությունը ժառանգել էին երեք
 որդիները և եղբայրը՝ ալ-Ազիլը: Որդիներից ալ-Աֆդալը
 տիրում էր Հարավային Սիրիային և Պաղեստինին (կենտրո-
 նը՝ Գամասկոս): Մյուս որդին՝ ալ-Ազիզը, կառավարում էր

Եգիպտոսը, իսկ ամենաավագը՝ ալ-Մալիք ալ-Ջահիրը՝ Հյուսիսային Սիրիան (կենտրոնը՝ Հալեպ):

Սուլթանի եղբորը՝ ալ-Աղիլին, բաժին էր Հասելու այնքան մեծ տարածք՝ Վերին Միջագետքն ու Դիար Բաբրը: Սակայն բոլոր այս տիրակալների մեջ նա ամենափորձված քաղաքագետն էր և ուներ զորավարական ու դիվանագիտական մեծ ընդունակություններ:

1196—1199 թվականների ընթացքում ալ-Աղիլը, օգտըվելով իր եղբորորդիների միջև ծագած միջդինաստիական պայքարից, մեկ պետության մեջ միավորեց Եգիպտոսը, Հարավային Սիրիան, Պաղեստինը, Վերին Միջագետքը և սրբանց Հարակից որոշ շրջաններ՝ հիմնականում վերականգնելով Սալահ ալ-Դինի տերությունը¹: Սուլթանի որդիներից միայն ալ-Մալիք ալ-Ջահիրը՝ հորեղբոր գերագահությունն ընդունելու գնով, կարողացավ պահպանել իր իշխանությունը Հյուսիսային Սիրիայում՝ Հալեպ կենտրոնով:

Հիշյալ փոփոխություններից հետո, մոտավորապես 1200—1201 թթ., Մերձավոր արևելքի քաղաքական քարտեզը համեմատաբար կայուն տեսք ստացավ: Մինչդեռ այդ նույն՝ 1201 թ. սկսած, քաղաքական մթնոլորտը սկսեց շիկանալ Սիրիայի Հյուսիս-արևմուտքում՝ Անտիոքի շրջանում:

1200 և 1201 թթ. մահացել էին նախ Անտիոքի գահաժառանգ Ռայմունդը, ապա նաև նրա հայրը՝ Անտիոքի իշխան Բոհեմունդ Գ-ը: Գահի միակ ժառանգը Բոհեմունդ Գ-ի թոռ Ռուբեն-Ռայմունդն էր, որը մոր կողմից կուն Բ-ի եղբոր թոռն էր: Սակայն նույն՝ 1201-ին, Անտիոքին տիրացավ Բոհեմունդ Գ-ի կրտսեր որդին՝ Տրիպոլիսի կոմս Բոհեմունդ Դ Միակնանին, որը երկու տարրեր քաղաքական միավորներից կարողացավ ստեղծել մեկ միասնական՝ Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը:

¹ Գեռ ավելին, 1207 թվականին, ալ-Աղիլի որդին՝ ալ-Առաջը, որը Դիար Բաբրի կառավարիլն էր, օգտվելով Շահ Արմենների պետության թուլացումից, տիրեց Խլաթին ու մերձակա շրջաններին, որոնք շեր նվաճել նույնիսկ Սալահ ալ-Դինը:

Այսպիսով, եթե 1109 թվականին Մերձավոր արևելքում կար խաչակիրների հիմնած շորս պետություն (Երուաղեմի թագավորություն, Անտիոքի իշխանություն, Տրիպոլիսի և Եղեսիայի կոմսություններ), իսկ 1151-ից երեքը (Եղեսիայի կոմսությունը արդեն չկար), ապա 1201 թ. Միջերկրականի արևելյան ափին պահպանվել էր Երկու խաչակիր պետություն՝ Երուաղեմի թագավորությունը (որի կենտրոնը արդեն Ակրան էր) և Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը (մայրաքաղաքը՝ Անտիոք)²:

Բոհեմունդ Բ-ի տիրապետության տակ ընկնելուն պես Անտիոք քաղաքի բազմազգ բնակչությունը՝ կազմված ֆրանկներից, Հույներից, Հայերից, Երկատվեց իրար թշնամի Երկու խմբավորումների՝ Բոհեմունդ Բ-ի և Ռուբեն-Ռայմունդի կողմնակիցների:

Այսպես սկիզբ առավ պայքարը Հանուն Անտիոքի, որը մեկուկես տասնամյակ (1201—1216) զբաղեցրեց Կիլիկիայի Հայկական թագավորության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության ուղղմական ուժերի հիմնական մասը: Այս ընթացքում Անտիոքը առնվազն երեք անգամ (1203, 1206, 1216) պաշարվեց Հայկական զորքերի կողմից և մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ:

Իր ուղղմական հզորությամբ Ժարի սկզբին Կիլիկիան Հայաստանը ի վիճակի էր պարտության մատնելու Անտիոք-Տրիպոլիսի խաչակիրներին, սակայն Բոհեմունդ Դ-ը, արագ կողմնորոշվելով ստեղծված իրավիճակում, անմիշապես ձեռք բերեց ուժեղ և կայուն դաշնակիցներ՝ ի դեմս Հալեպի և Իկոնիայի սուլթանությունների: Թե՛ Հալեպի Այցուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Զահիրը և թե՛ Իկոնիայի սելջուկյան սուլթան Ռուքն ալ-Դինն (1200—1203) ու նրա հաջորդները խիստ անհանգուտացած էին Կիլիկիան թագավորության հզորացմամբ: Եթե Իկոնիայի սուլթանները ձգտում էին թույլ շտալ կւոն Բ-ին ընդարձակելու իր թագավորության սահմանները՝ դեպի Հյուսիս և Հյուսիս-արե-

² Այստեղ հաշվի չի առնված Կիպրոսի թագավորությունը, որը ըստեղծվեց խաչակրաց Դ արշավանքից հետո:

վելք, իսկ պատեհ՝ առիթով փորձում էին գրավել կիլիկյան կարևոր բերդերը Տավրոսյան լեռներում, ապա Հալեպի սուլթանության համար «Անտիոքյան պատերազմը»³ (1201—1216) կենսական նշանակություն ուներ: Բանն այն է, որ ալ-Մալիք ալ-Զահիրը, չնայած պահպանել էր իր սուլթանությունը և նույնիսկ որոշ շափով ընդարձակել այն՝ գրավելով Լաթաքիան ու Ջաբալան, սակայն նրա դիրքերը շարունակում էին անկայուն մնալ: Մի կողմից Հալեպի սուլթանության վրա անընդհատ կախված էր ալ-Աղիլի կողմից նվաճվելու վտանգը, իսկ մյուս կողմից երկրի խոշոր ավատատերերի մեջ շատ էին ընդդիմագիրները, որոնք գործակցում էին Եղիպատոսի սուլթանի հետ⁴:

Հալեպի սուլթանության համար պակաս վտանգավոր չէր նաև Լեռն Բ-ի առաջխաղացումը: Վերջինիս կողմից Անտիոքի գրավումը անմիջական սպառնալիք կստեղծեր Հալեպ քաղաքի համար: Այս ամենը ստիպում էր ալ-Մալիք ալ-Զահիրին՝ գաշնակցելու Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Իկոնիայի սուլթանության հետ:

Արդեն 1201 թվականին սկսվեցին առաջին ընդհարումները Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Կիլիկիայի թագավորության զորքերի միջև: Այս մասին տեղեկանում ենք 1201 թ. Հոկտեմբեր 1 թվակիր նամակից՝ ուղարկված Լեռն Բ-ի կողմից Հռոմի պատ իննոնկենտիոս Գ-ին: Հայոց արքան դիմում է Հռոմի քահանայապետին՝ միջնորդ լինելու իր և Բոհեմոնդ Գ-ի միջև, քանի որ վերջինս դաշինքի մեջ էր իկոնիայի սուլթան Ռուֆն ալ-Դինի հետ և նրանք փորձում էին երկու կողմից հարձակում գործել Կիլիկիայի վրա⁵: Ամենայն հավանականությամբ, նույն՝ 1201-ին, Հալեպի

³ Անտիոքի համար շուրջ մեկուկես տասնամյակ մղված պայքարը, որին տարբեր ժամանակ մասնակից դարձան առնվազն երեք պետություններ, կող Կայենի կողմից կոչվել է «Անտիոքյան պատերազմ»: Մենք ևս օգտագործում ենք այդ անվանումը:

⁴ C. Cahen, La Syrie du Nord, p. 581.

⁵ Pontificia commissio ad redigendum codicem iuris canonici orientalis, Fontes, Series III, vol. II, Acta Innocentii p. III (1198—1216), Vatican, 1944, p. 559—562.

սուլթանությունը ևս օժանդակում է Բոհեմունդին⁶: Սակայն պատերազմական բուն գործողությունները սկսվում են 1203 թվականին:

1203 թվականի նոյեմբերի 11-ին Հայկական մի զորախումբ գրավում է Անտիոքի մոտակա գյուղերը, ապա պաշարում քաղաքը: Լեռն Բ-ը փորձում է լատին պատրիարքի միջոցով (որը Ռուբեն-Ռայմոնդի և Լեռն Բ-ի Համախոններից էր), խաղաղ ճանապարհով, տիրել քաղաքին, սակայն դա նրան չի հաջողվում: Տաճարական ասպետները և Բոհեմունդի մյուս կողմնակիցները ուժեղ դիմադրություն են ցույց տալիս Հայկական զորախմբին և միաժամանակ աղավնափոստով նամակ են ուղարկում Հայեափի սուլթանին՝ օգնության կանչելով նրան:

Ալ-Զահիրը անմիջապես արձագանքում է իր դաշնակցի դիմումին և բանակ ուղարկում Անտիոքի ուղղությամբ, որը Հասնում է մինչև Որոնտես գետը: Լեռն Բ-ը նախընտրում է թողնել Անտիոքի պաշարումն ու հետ քաշվել (1203 թ. գեկտեմբերի սկզբին)⁷:

Հիշյալ գեպքերից հետո սկսվեց պատերազմը Կիլիկիայի թագավորության և Հալեպի սուլթանության միջև, որը թեև «Անտիոքյան պատերազմի» բաղկացուցիչ մասն է կազմում, բայց կարող է դիտվել նաև որպես առանձին պատերազմ:

Երկու Հակառակորդների դեմ միաժամանակ պայքարելը կարող էր ծանր հետևանքներ ունենալ Կիլիկիայի Համար, այդ պատճառով Լեռն Բ-ը որոշում է ժամանակորապես ընդհատել Բոհեմունդ Դ-ի դեմ պայքարը և ասպարեզից հեռացնել նրա ամենամոտ դաշնակցին:

Այս պատերազմի մասին հայ պատմիչները (բացառությամբ Կիրակոս Գանձակեցու) գրեթե ոչինչ չեն հաղորդում: Ուսումնասիրողները ևս կամ անտեսել, կամ շատ հպանցիկ են անդրադարձել այս պատերազմին: Այդ պատ-

⁶ C. Cahen, La Syrie du Nord, p. 600—601.

⁷ Al-Dahabi, Kitab duwal al-Islam, Damas, 1979, p. 187, C. Cahen, La Syrie du Nord, p. 604.

ճառով հնարավորին շափ մանրամասն կանդրադառնանք հիշյալ պատերազմի ուղմական գործողություններին, դրա պատճառներին, արդյունքներին ու հետևանքներին՝ հիմնը վելով առաջին հերթին արաբ հեղինակների (իրն ալ-Ադիմ, իրն ալ-Ասիր, ալ-Զահարի) տեղեկությունների վրա:

1203 թ. վերջին Հալեպի զորքի ուղմական գործողություններին ի պատասխան, 1204 թ. սկզբներին Լևոն թ-ն անցնում է հակա՞րձակման: Շարժվելով դեպի արևելք հայկական զորքը արշավում է Ամկ լճի կողմերը, այստեղից քշում, տանում անասունների հոտերը: Ապա Լևոն թ-ը ամրացնում է (ըստ պատմիչի՝ կառուցում է) Դասիր ամրոցը՝ մալ ալ-Դին իրն ալ-Ադիմ պատմիշը. «Նա (Լևոնը) պահելու նպատակով⁸: Այսպիսի գործողությունների գիմելով Հայոց արքան ստիպում է հակառակորդին հաշտություն կնքել այն պայմանով, որ նա շմիջամտի Անտիոքի գաճի շուրջ ծավալված պայքարին: Ապա, ինչպես զրում է Քամալ ալ-Դին իրն ալ-Ադիմ պատմիշը. «Նա (Լևոնը) պաշարեց Անտիոքը և ավերեց նրա արվարձանները (որի հետևանքով) մեծ թանկություն եղավ: Խակ ալ-Մալիք ալ-Զահիրը Անտիոքի ժողովրդին սննդամթերք էր մատակարարում, մինչև որ (Անտիոքի ժողովուրդը) ուժեղացավ (լիացավ):⁹:

Այս մասին արաբ պատմիշը հիշատակում է հիշրայի 601 թ. (1204—1205) դեպքերի մեջ: Այսպիսով, չնայած կնքված հաշտությանը, Հալեպի սուլթանը շարունակում էր օգնել Բոհեմունդ Դին, եթե ոչ զենքով, ապա գոնե պարենով: Սրանով նա խախտում էր Լևոն թ-ի հետ կնքած հաշտության պայմանը:

Հիշրայի 602 թվականին (18 օգոստոս 1205—7 օգոստոս 1206) Լևոն թ-ը ձեռնարկեց առավել ծավալուն ուղմական գործողություններ ընդդեմ Հալեպի սուլթանության: Համաձայն

⁸ Kamal ad-Din ibn al-Adim, t. III, p. 157.

⁹ Նույն տեղում:

արաբ պատմիշների տեղեկությունների, 1205—1206 թվականների ձմռանը կեռն Բ-ն իր բանակով հասնում է Դարպասակի ամրոցին: Կիլիկեցիները երկար ժամանակ կռվում են Դարպասակի արվարձաններում ամրացած մահմեդական բանակի դեմ: Առավոտյան հայ զինվորները ցրվում են Ամկ լճի շրջակայքում և հալածում այնտեղի թուրքմեն ցեղերին¹⁰:

1205 թ. ամռանից մինչև 1206 թ. ամռանը կեռն Բ-ն անընդհատ նման արշավանքներ էր ձեռնարկում զեպի ալ-Մալիք ալ-Զահիրին ենթակա տարածքը՝ Հարձակման վըտանգի մեջ պահելով տեղական կայազորներին¹¹: Իրն ալ-Ասիր պատմիշն այս մասին զորում է. «Այդ տարում կիրճերի տեր Հայազգի կեռնի որդին (իրն կայուն ալ-Արմանի)¹² մի քանի անգամ արշավեց Հալեպի նահանգի վրա, կողոպտեց, հրկիղեց, գերեց ու գերեվարեց»¹³:

Հալեպի սուլթանը ստիպված մեծ զորք է հավաքում և օգնության կանչում «այլ թագավորների»¹⁴: Ավելի որոշակի է զորում այս մասին իրն ալ-Աղիմը՝ «ստանալով ալ Մալիք ալ-Աղիլի և այլ մահմեդական տիրակալների օգնությունը...»¹⁵:

Դժվար է ասել, թե ինչու էր ալ-Մալիք ալ-Աղիլը օգնում իր երեկվա թշնամուն, որի տիրութների հանդեպ հավակնություններ ուներ: Թերևս նա նպատակ ուներ խանգարել Կիլիկյան Հայաստանի հետագա հզորացմանը, մանավանդ որ 1205—1206 թվականների արշավանքների ընթացքում Հայերը բավական խորացել էին Հյուսիսային Սիրիայում՝ տիրելով մինչև անգամ Հարիմ ամրոցին, որը Կիլիկիայի սահմաններից բավական հեռու էր: Ինչպես հետագայում կտեսնենք, քաղաքական հանգամանքների փոփոխության հետ կապված, ալ-Աղիլ սուլթանը փոխեց

¹⁰ Ibidem.

¹¹ Al-Dahabi, p. 189.

¹² Խոսքը հենց կեռն Բ-ի մասին է:

¹³ Իրն ալ-Ասիր, էջ 285:

¹⁴ Իրն ալ-Ասիր, էջ 285:

¹⁵ Kamal ad-Din ibn al-Adim, t. III, p. 157.

նաև իր վերաբերմունքը Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության հանդեպ:

Ինչ վերաբերում է «...և այլ մահմեդական տիրակալների» օգնությանը, ապա դրանք հավանաբար Կենտրոնական Սիրիայի (Համա, Հոմս) կամ Վերին Միջագետքի ամիրներն էին (Մոսուլի Զանգիներ և այլն), որոնք կախման մեջ էին Այսուբյան տոհմի սուլթաններից՝ ալ-Աղիլից կամ ալ-Զահիրից:

Այսպես, մեծ զորք հավաքելով ալ-Մալիք ալ-Զահիրը առաջապահ զորքի հրամանատար է նշանակում Մայմոն ալ-Կասրի անունով մի մեծ ամիրի: Նա իրեն վստահված զորքով պաշարում է Հարիմը, իսկ Հալեպի սուլթանի մի ուրիշ զոկատ՝ Թիգինը (տեղադրությունը մեզ անհայտ է): Ըստ իրն ալ-Աղիմի, Լևոն Բ-ի բանակը գտնվում էր Բաղրասում (Գաստոն), իսկ մահմեդականների զորքը՝ Դարպասկում¹⁶: Լևոն Բ-ն այստեղ, թերևս առավել քան որեւէ այլ պատերազմում, ցուցաբերեց ուազմավարական մեծ հմտություն: Տեղեկանալով մահմեդական բանակի տեղաշարժերի ու տեղաբաշխման մասին, նա, գիշերով, շրջանցեց Ամկ լիճը հակառակորդի համար անսպասելի ճանապարհով: Առավոտյան հայկական զորքը հայտնվեց լճի հարավային կողմում՝ հանկարծակի բերելով Մայմոն ալ-Կասրիի զինված ուժերին և փախուստի մատնեց նրանց¹⁷:

Նույն ճակատամարտը մի փոքր այլ կերպ է նկարագրում իրն ալ-Ասիրը¹⁸: Ըստ նրա, Մայմոնի բանակի մի մասը անջատվել էր նրանից զեպի Դարպասակ տարվող ուազմամթերքին ուղեկցելու համար: Այդ մասին իմանալով, հայկական բանակը Լևոն Բ-ի զլիսավորությամբ արագ առաջ է շարժվում, նախ պարտության է մատնում Մայմոն ալ-Կասրիի զորքին, ապա հանում զինված ուժերին, նրանց սրի է բաշում և մեծ ավարով վերա-

¹⁶ Ibidem.

¹⁷ Kamal ad-Din ibn al-Adim, t. III, p. 158.

¹⁸ Իրն ալ-Ասիր, էջ 286:

դառնում Կիլիկիա: Ալ-Մալիք ալ-Զահիրը հեռու էր գտնվում ու պամփի դաշտից և չի կարողանում օգնել զորացոկատներից ոչ մեկին: Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության միջև պատերազմի մասին իր Հաղորդումը իրն ալ-Ասիրը ավարտում է հետեւյալ կերպ. «Այստեղ ևս մահմեդականները փախուստի դիմեցին, իսկ Հայերը ավարի հետ միասին վերադարձան իրենց երկիրը և ամրացան իրենց լեռներում ու բերդերում»¹⁹:

Իրն ալ-Ասիրի տեղեկություններից կարելի է եղրակացնել, որ կիլիկեցիները կատարյալ Հաղթանակ են տարել ու վերադարձել՝ Հավանաբար առանց Հաշտություն կնքելու:

Սակայն այստեղ պատմիչների տեղեկությունները ոչ միայն տարրերվում, այլև Հակասում են միմյանց: Ըստ իրն ալ-Աղիմի, Հալեպի սուլթանը ոչ միայն օգնություն է Հասնում Ամկ լճի մոտ ջախջախված իր զորացոկատներին, այլև Հաշտություն է կնքում ջահավետ պայմաններով, ըստ որոնց Լևոն Բ-ը պիտի քանդեր Դարպասակի մոտ ամրացրած իր բերդը (Դասիր), վերադարձներ մահմեդականներից խըլված ավարը և Հարձակվեր Անտիոքի վրա²⁰:

Սակայն Հաշտության այսպիսի պայմանները տարօրինակ են թվում, եթե նկատի ունենանք Լևոն Բ-ի տարած փալուն Հաղթանակները, որոնց մասին վկայում է ոչ միայն իրն ալ-Ասիրը, այլև նույն՝ իրն ալ-Աղիմը: Ավելին, ըստ Կիրակոս Գանձակեցու, Հալեպի սուլթանի զորքը ջախջախելով, Լևոն Բ-ը Հարկ է պահանջում նրանից²¹: Ալ-Մալիք ալ-Զահիրին Հարկատու դարձնելը Հավանաբար ավելի խորհրդանշական իմաստ ուներ, սակայն Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը թիւկան է դարձնում իրն ալ-Աղիմի վերոհիշյալ Հաղորդումը:

1203—1206 թվականների եռամյա պատերազմը Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության միջև, ամե-

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Kamal ad-Din ibn al-Adim, t. III, p. 158.

²¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ

նայն հավանականությամբ, տարածքային փոփոխություններ շմտցրեց: Բաղրամը մնաց Հայերի, իսկ Դարպասակը՝ Այլուրդյանների ձեռքում: Այս ամրոցների միջով անցնում էր երկու պետությունների սահմանը: Պատերազմի կարևոր արդյունք կարելի է համարել այն, որ Հայեափի սուլթանությունը գաղարեցրեց ռազմական գործողությունները ընդդեմ Կիլիկիացիների և շուրջ երկու տարի ռազմական բախումների մեջ շմտավ հայոց թագավորության հետ:

Դրանից հետո Լևոն Բ-ը բարեկոմական հարաբերություններ հաստատեց Մերձավոր արևելքի հղոր տիրակալի՝ Եղիպատոսի Այլուրյան սուլթան ալ-Մալիք ալ-Եղիլի հետ, որը գերազա՞ն էր համարվում բոլոր Այլուրյանների մեջ և դա նրան օգնեց հետագա քաղաքական ծանր պայքարում:

Ազատվելով վտանգավոր հայկառակորդից, Լևոն Բ-ը հնարավորություն ստացավ վերսկսել զինված պայքարը Անտիոքի իշխանության օրինական ժառանգ Ռուբեն-Ռայմունդի իրավունքների պաշտպանության պատրվակով:

Կիլիկիայի հայկական թագավորության ռազմական հաղթանակները անհանգստացրել էին հարեան բոլոր պետություններին, այդ թվում և Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը, մանավանդ որ դեռևս ժթ դարի 90-ական թվականներին Լևոն Բ-ը սրանից խլել էր մի շարք լեռնային ամրոցներ: Վերոհիշյալ պատերազմից շատ շանցած, Իկոնիայի սուլթանությունը միացավ հակակիլիկյան պետությունների դաշինքին (թեև այդպիսի մի դաշինքի մասին է խոսվում դեռևս 1201 թվականին՝ իննոկենտիոս Գ պապին Լևոն Բ-ի ուղարկած նամակում):

Օգտվելով այն հանգամանքից, որ Հայերը իրենց հիմնական զինված ուժերը փոխադրել էին հարավ, Իկոնիայի սուլթանը հարձակումներ էր գործում Կիլիկիայի հյուսիսային սահմանամերձ բերդերի վրա:

Քամալ ալ-Դին իրն ալ-Աղմամ պատմիւր հիջրայի 605 թ. (1208 Հուլիս 16—1209 Հուլիս 6) դեպքերի մեջ հաղորդում է նաև հետեւյալը. «Քելիխոսրով իրն Կըլըջ Արսլանը ուղղվեց դեպի իրն Լևոնի երկիրը՝ օգնություն խնդրելով սուլ-

թան ալ-Մալիք ալ-Զահիրից: Նա (ալ-Զահիրը) զորք ուղարկեց, որին առաջնորդում էր Սայֆ ալ-Դին իրն իլմ ալ-Դինը և նրան ընկերակցում էր Այրեք ալ-Ֆատիհը: (Սրանք) հավաքվեցին Մարաշում ու պաշարեցին Բուրնուսը (Բերդուս), ապա գրավեցին այն, ինչպես նաև մի շարք այլ բերդեր իրն կառնի երկրից»²²:

Հստ Անանուն Եղեսացու, Քեյխոսրովի վերոհիշյալ հարձակումը ձեռնարկվել էր ի պատասխան կառն Բ-ի կողմից սելջուկների մի զորաբանակի ջախջախման: Հստ ասորի պատմիչի, կառն Բ-ը տեղեկանալով, որ Քեյխոսրովը Կիլիկիան ասպատակելու նպատակ ունի, նախապես դարձնակալելով ու ծուղակի մեջ զցելով, կոտորեց սելջուկ թուրքերի զորաբանակը՝ մեծ թվով գերիներ վերցնելով ու խլելով մեծաքանակ ավար: Եվ միայն դրանից հետո է Քեյխոսրովը Հալեպի զորքի օգնությամբ նոր հարձակման անցնելով գրավում Բերդուսը²³:

Այսպիսով Կիլիկիան առնվել էր թշնամական պետությունների օղակի մեջ. արևմուտքից, Հյուսիսից և Հյուսիսարևելքից՝ Իկոնիայի սելջուկյան սովորական, Հարավից ու Հարավ-արևելքից՝ Անտիոք-Տրիպոլիսի կոմմության և Հալեպի սուլթանության կողմից: Այսպիսի պայմաններում կառն Բ-ը, ըստ իրն ալ-Աղիմի, դիմեց ալ-Մալիք ալ-Աղիմի միջնորդությանը: Վերջինս նամակներ գրեց Քեյխոսրովին և ալ-Մալիք ալ-Զահիրին՝ համոզելով նրանց, որ կառն Բ-ի հետ հաշտություն կնքեն: Եվ դա իրականացավ: Հստ Հաշտության, կառն Բ-ը պիտի վերադարձներ Բաղրամը Տաճարականներին, շմիջամտեր Անտիոքի գործերին և վերադարձներ Ռուսն ալ-Դինի՝ Քեյխոսրովի եղբոր օրոք սելցուկներից խլված ունեցվածքը²⁴:

Հիշյալ երեք կետերից կառն Բ-ը կատարեց միայն վերջինը: 1216 թվականին նա գրավեց Անտիոքը, իսկ Բաղ-

²² Kamal ad-Din ibn al-Adim, t. III, p. 159.

²³ Անանուն Եղեսացի, էջ 171:

²⁴ Kamal ad-Din ibn al-Adim, t. III, p. 160.

րասը (Համենայն դեպս 1212 թվականին) մտնում էր նրա տիրույթների մեջ²⁵:

1209 թ. կեռն Բ-ը Ռուբեն-Ռայմունդին հայտարարեց գահաժառանգ, քանի որ արու զավակ չուներ: Դրանով նա փորձում էր մեկ պետության մեջ միավորել Կիլիկիան և Անտիոքը:

1210 թվականին մահացավ Իկոնիայի սուլթան Քեյխոսրվը, և կեռն Բ-ն անմիջապես միջամտեց նրա երկու որդիների միջև ծագած գահակալական պայքարին՝ ժամանակավորապես թուլացնելով իր գլխավոր հակառակորդներից մեկին:

Մինչ այդ Անտիոքում շարունակվում էր ներքին պայքարը: Բոհեմունդ Դ-ը փորձում էր ամեն կերպ ազատվել իր հակառակորդներից: Եվ քանի որ նա 1208 թվականին բանտարկեց իր գլխավոր հակառակորդներից մեկին՝ Անտիոքի լատին պատրիարքին, նրա հարաբերությունները Հռոմի հետ սրվեցին: Բայց Բոհեմունդին այդպես էլ չհաջողվեց ազատվել իրեն ընդդիմադիր ուժերից, որոնք շարունակում էին աջակցել Ռուբեն-Ռայմունդին, և թագավորը շուտով հաջողության հասավ: 1216 թվականին նա գրավեց Անտիոքը և գահին բազմեցրեր Ռուբեն-Ռայմունդին: Ինչպես գրում է Սմբատ Սպարապետը, կեռն Բ-ը Անտիոքի իշխաններից ումանց (այդ թվում և սենեշալ Ամորիին) մեծ պարզեներ խոստանալով իր կողմը գրավեց: Վերջիններս գիշերով բացեցին քաղաքի գարպասները և կեռն Բ-ը մեծ զորքով մտավ քաղաքը: Ֆրանկների մեծ մասը ամրացավ ու դիմադրեց Անտիոքի միջնաբերդում, բայց շուտով ըստիպված էր հանձնվել²⁶:

Անտիոքի գրավումը մեծ նվաճում էր Կիլիկիայի հայկան պետության համար: Թեև այն շմիացվեց հայկական թագավորությանը, բայց գտնվում էր կեռն Բ-ի աղեցության ներքո և այստեղ մշտապես հայկական զորք կար:

²⁵ Wilbrandi de Oldenborg, Peregrinatio, p. 174.

²⁶ Սմբատ Սպարապետի Տարեգիրը, էջ 106—107:

Անտիոքի գրավումը կարելի է համարել Լևոն Բ-ի հզորության գաղափնակետը: Նրա գահակալության հետագա տարիները հիմնականում անհաջող ընթացան Կիլիկիայի համար:

Անտիոքի գրավման լուրը Հալեպում խուճապ առաջացրեց: Ալ-Մալիք ալ-Զահիրը դիմեց Իկոնիայի սուլթան Քեյքառափին և Եղիպտոսի սուլթան ալ-Աղիլին՝ միացյալ արշավանքի կոչ անելով ընդդեմ Լևոն Բ-ի թագավորության: Թեև այս անգամ արդեն նա ալ-Աղիլի հետ մեծ հույսեր չէր կարող կապել, քանի որ, ինչպես գրում է իրն ալ-Աղիմ պատմիլը, «Իրն Լևոնը մոտ հարաբերությունների մեջ էր իր (ալ-Մալիք ալ-Զահիրի) հորեղբոր (ալ-Աղիլի) հետ²⁷»:

Ինչպես վերևում ասվեց, 1208-ին հենց ալ-Աղիլի միջամտությամբ է Լևոն Բ-ը հաշտություն կնքել Իկոնիայի և Հալեպի սուլթանների հետ: Իրն ալ-Աղիմի վերոհիշյալ հաղորդումից կարելի է եղրակացնել, որ հետագայում էլ Լևոն Բ-ը բարեկամական հարաբերություններ էր պահպանել Այզուբյան սուլթանի հետ: Եթե նկատի ունենանք ալ-Աղիլի բաղաքական կշիռը մերձավորարևելյան հարցերում և այն, որ նա շահագրգուված չէր կարող լինել Կիլիկիա-Անտիոք միացյալ պետության ստեղծմամբ, վերոհիշյալ լավ հարաբերությունների պահպանման մեջ հիմնական դերը պիտի վերագրել Լևոն Բ-ին՝ այն համարելով գիվանագիտական նվաճում:

Հակառակ ալ-Մալիք ալ-Զահիրի շանքերի, միացյալ արշավանք Կիլիկիայի դեմ այդպես էլ տեղի շունեցավ, սակայն Իկոնիայի սուլթանությունը, օգտվելով այն հանգամանքից, որ Լևոն Բ-ի հիմնական զինված ուժերը գրտնվում են Անտիոքում, նույն՝ 1216 թվականին, հյուսիսից ներխուժեց Կիլիկիա:

Սելջուկները մեծ զորքով պաշարեցին Կապան ամրոցը, բայց չկարողացան գրավել այն: Համենայն դեպս սելջուկներին հաջողվեց գերի վերցնել հայոց գունդստարը

²⁷ Kamal ad-Din ibn al-Adim, t. III, p. 168—169.

Կոստանդինին և մի քանի մեծ իշխանների ու վերադառնալ հկոնիա: Միայն երեք տարի անց (1219) Լեռն Բ-ին հաջողվեց ազատել իշխաններին՝ փոխարենը սուլթանին հանձնելով Լուլուա և Լողատ բերդերը²⁸:

Լեռն Բ-ի գահակալության վերջին տարիներին (1216—1219) մասամբ խախտվեց երկրի միասնականությունը: Օգտվելով թագավորի հիվանդությունից, և թուլությունից, որոշ խոշոր ավատատերեր, որոնք իրենց զորքով չօգնեցին Լեռնին հկոնիայի դեմ պայքարում, սկսեցին զլուս բարձրացնել: Թագավորի մահից հետո (1219) այս ավատատերերի կենտրոնախույս տրամադրությունները ավելի բացահայտ կերպով ի հայտ եկան:

Նույն այս վիճակից փորձեց օգտվել և Ռուբեն-Ռայմունդը, որը Լեռն Բ-ի գահակալության վերջին տարիներին թշնամացավ հայոց թագավորի հետ և նույնիսկ նրան ձերբակալելու փորձ կատարեց: Իսկ մինչ այդ նա իր դեմ էր տրամադրել նախկինում համակիր իշխաններին: Օգնություն շտանալով ո՞շ Կիլիկյան Հայաստանից և ո՞շ էլ Անտիոքի բնակչությունից, նա պարտվեց Բոհեմունդ Դ-ի զորքից և եռամյա (1216—1219) կառավարումից հետո կրկին դիմեց Անտիոքը իր հորեղբորը²⁹:

Բոհեմունդ Դ-ի հաջողությանը նպաստեց ֆրանկ ասպետ Դիլոմ գը Ֆարաբելի կազմակերպած դավադրությունը: Ռուբեն-Ռայմունդը ոչ մի վճռականություն չցուցաբերեց և փաստորեն առանց լուրջ դիմադրության գիշերով փախազքաղաքից, իսկ նրան հավատարիմ մնացած հյուրընկալ ասպետները՝ տեսնելով իրենց իշխանի բացակայությունը, ստիպված էին քաղաքի միջնաբերդը հանձնել Բոհեմունդին: Այսպիսով, Բոհեմունդ Դ-ը վերջնականապես գրավեց Անտիոքը և իշխեց այստեղ մինչև իր մահը (1233):

1219 թ. շրջադարձային էր թե՛ Անտիոքի և թե՛ Կիլիկիայի համար: Բոհեմունդ Դ-ի հաղթանակով կրկին, այս անդամ արդեն վերջնականապես, միավորվեցին Տրիպոլիսն

²⁸ Սմբատայ Սպարապետի Տարեգիրը, էջ 221—222.

²⁹ Bar Hebraeus, p. 371.

ու Անտիռքը մեկ պետության մեջ: Այս վիճակը շարունակվեց մինչև երկրի նվաճումը մամլուքների կողմից (1266):

Լեռն Բ-ի մահից հետո Անտիք-Տրիպոլիսի կոմսությունը վերստացավ ներքին կայունությունը, մինչդեռ Հայոց թագավորության մեջ 1219-ին գլուխ բարձրացրին կենտրոնախույս ուժերը: Վերջիններիս մեկ տարի անց փորձեց օգտագործել Ռուբեն-Ռայմունդը: Նա Անտիքից փախել էր Եղիպտոսի Գամիեթ քաղաքը: Այստեղ խաչակրաց և արշավանքի մասնակիցները կարդինալ Պելաժի գլխավորությամբ պաշարել էին այդ կարևոր նավահանգստը: Գահազուրկ իշխանը հույս ուներ խաչակրաների օգնությամբ նվաճել Կիլիկիան:

Դեռևս մահվանից առաջ Լեռն Բ-ը՝ զրկելով Ռուբեն-Ռայմունդին ժառանգական իրավունքներից, հաջորդ էր նշանակել իր դստերը՝ Զաքելին, իսկ որպես խնամակալներ՝ Գաստոնի տեր Աղանին (Սիր Աղան) և Լամբրոնի տեր Կոստանդինին, որոնք պետք է ամուսնացնեին նրան Հունգարիայի թագավոր էնդրե Բ-ի որդու՝ էնդրեի հետ: Սակայն այդ ամուսնությունը չկայացավ, քանի որ վերջինս, լսելով Լեռն Բ-ի մահվան մասին, հրաժարվեց գալ Կիլիկիա:

Հավանաբար նույն՝ 1219-ին, Սիր Աղանը սպանվեց և Կոստանդին իշխանը դարձավ Զաքելի միակ խնամակալը: Ժդ դարի 20-ական թթ.՝ երկրի համար ծանր տարիններին, նա մեծ դեր խաղաց Կիլիկիայի հայկական թագավորության միասնականության և անկախության պահպանման գործում:

Լեռն Բ-ի և Սիր Աղանի մահից հետո Ռուբեն-Ռայմունդը իր մոր (ժագումով՝ Ռուբենյան) և մի խումբ ֆրանկ ասպետների հետ Եղիպտոսից նավեց դեպի Կիլիկիա և ափ դուրս եկավ Կոռիկոսի նավահանգստում: Կոռիկոսի տեր Պարոն Վահրամը սկզբում թույլ շովեց վերջիններիս անցնել իր տարածքներով, հետո զղջաց ու որոշեց գործակցել նըրանց հետ: Ռուբեն-Ռայմունդն ու Պարոն Վահրամը միացյալ ուժերով գրավեցին Տարսոնը, ապա նաև Աղանան ու ճամբար խփեցին Մամեստիայի մոտ: Այստեղ նրանց դեմ

դուրս եկավ Կոստանդին պայլը: Հայկական բանակի գլուխ անցած նա փախուստի մատնեց ու հետապնդեց նրանց մինչև Տարսոն, ապա պաշարեց ու ազատազրեց Տարսոնը՝ ձերակալելով խռովության բոլոր ղեկավարներին՝ Ռուբեն-Ռայմոնդի հետ միասին³⁰: Դա տեղի ունեցավ 1220—1221 թվականներին: Կիլիկիայի գահին տիրելու Ռուբեն-Ռայմոնդի փորձը, ինչպես նաև երկրի վիճակն ու միջազգային իրադրությունը, ստիպեցին Կիլիկիայի հայ իշխաններին ու Հոգևորականությանը շուտափույթ լուծել Զաքելի ամուսնության հարցը:

Այդ ժամանակ Կիլիկիայի համար հատկապես մեծ վտանգ էր ներկայացնում Հյուսիսային Հարեանը: Սկսած 1204 թվականից, երբ խաչակրաց Դ արշավանքի մասնակիցները գրավեցին Կոստանդնուպոլիսը, իկոնիայի սելջուկները գործողությունների լիակատար ազատություն ստացան Փոքր Ասիայում:

Սելջուկ տիրակալները ամեն պատեհ առիթ օգտագործում էին Կիլիկիայի Հյուսիսային սահմանները ներխուժելու համար: Այդպես եղավ 1208, 1216, 1219 թվականներին: Այդ վտանգը չէր թուլացել նաև ԺՊ դարի 20-ական թվականներին:

Ահա այսպիսի պայմաններում, 1222 թ., Կոստանդին իշխանը խորհրդակցություն է հրավիրում՝ Զաքելին փեսացու ընտրելու համար: Կոստանդին պայլը կամբրոնի իշխանների տոհմից էր, որը երկար տարիներ Ռուբենյան տոհմի անհաշտ թշնամին էր եղել ու թեև կեռն Բ-ի օրոք նրանց տիրույթները միացվել էին Հայկական պետությանը, սակայն Կիլիկիայի իշխանների մեջ գեռես թաքնված թշնամանը կար այդ տոհմի նկատմամբ: Այդ է պատճառը, որ 1222 թվականին Կոստանդին իշխանը շհամարձակվեց իր որդիներից որևէ մեկի թեկնածությունը առաջազրել:

Երկար խորհրդակցելուց հետո, ի վերջո, հայ իշխան-

³⁰ Bar Hebraeus, p. 379—381.

ները և բարձր հոգևորականությունը որոշեցին Զարելին ամուսնացնել Բոհեմունդ Դ-ի որդու՝ Ֆիլիպի հետ³¹:

Այս ամուսնությամբ Կիլիկիայի հայ իշխանները փորձում էին վստահելի դաշնակից ձեռք բերել՝ ի դեմս Անտիոք-Տրիպոլիսի կոմսության: Բացառված չէ, որ նրանք նկատի էին առնում նաև Հարեւան պետությունների հակակիլիկյան գաշինքները: Զարելի և Ֆիլիպի ամուսնությունը կարող էր խզել այդ գաշինքները:

Այսպիսով, Զարելը 1222 թ. ամուսնացավ 16-ամյա Ֆիլիպի հետ, որը, ըստ պայմանավորվածության, պետք է հետեւ հայկական կենցաղին և կատարեր հայոց եկեղեցու ծեսերը: Առաջվա նման երկիրը շարունակում էր կառավարել Լամբրոնի տերը՝ Կոստանդին իշխանը:

Սակայն Ֆիլիպը մեկ-երկու տարի անց խախտեց Հիշյալ պայմանները, արքունիքից հեռացրեց հայ իշխաններին և իրեն շրջապատեց ֆրանկներով: Այդ մասին է գրում Սմբատ Սպարապետը. «Եւ Ֆիլիպն յորժամ եղեւ թագաւոր՝ սկսաւ եղջիւր ածել իշխանացն Հայոց, եւ արհամարհէր զնոսա»³²:

Այստեղ անպայման իր դերն ուներ նաև նրա Հայրը՝ Բոհեմունդ Դ-ը, որի դրդմամբ Ֆիլիպը Անտիոք ուղարկեց Անոն Բ-ի թագը, արքայական գահը և այլ գանձեր: Ֆիլիպի այսպիսի գործելակերպը հայ իշխանների մեջ դժգոհություն առաջ բերեց: Նրանք Կոստանդին իշխանի զլիավորությամբ ձերբակալեցին Ֆիլիպին ու արգելափակեցին Թիլ Համզուն ամրոցում, որտեղ էլ 1224 կամ 1225 թվականին նա մահացավ (հնարավոր է՝ թունավորեցին):

Այսպիսով, Ֆիլիպի գահակալությունը տևեց ընդամենը երկու տարի: Սա փաստորեն երկրորդ փորձն էր Կիլիկիայի և Անտիոքի միջև ստեղծելու ազգակցական կամ խնամիական կապերով ամրապնդված մի դաշինք (առաջին այդպի-

³¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225:

³² Նույն տեղում:

սի փորձը ձեռնարկել էր կեռն Բ-ը): Երկու դեպքում էլ թե՛ կեռն Բ-ը և թե՛ Բոհեմունդ Դ-ը վերջնական նպատակ ունեին՝ հարկան երկիրը միացնել սեփական պետությանը: Այս փորձերից ոչ մեկը հաջողություն չունեցավ:

Բոհեմունդը չէր կարող հաշտվել որդու գահընկեցության ու ձերբակալման փաստի հետ: Ըստ ասորի պատմիշ Բար Հերբեռսի, Ֆիլիպի ձերբակալությունից հետո Բոհեմունդը պահանջում է իրեն հանձնել որդուն, բայց մերժվում է Կիլիկիայի իշխանների կողմից: Ապա նա ինքը մտնում է Կիլիկիա, հասնում թիւ Համգուն ամրոց, որտեղ բանտարկված էր Ֆիլիպը և խնդրում, որ իրեն հանձնեն որդուն: Բայց շուտով տեղեկանում է, որ որդին թունավորված է: Մի քանի օր անց Ֆիլիպը մահանում է³³:

Բար Հերբեռսը իր վերոհիշյալ հաղորդման մեջ շի հիշատակում հայերի և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության միջև ռազմական որևէ բախման մասին, իսկ Սմբատ Սպարապետը այդ մասին գրում է համառոտ ու բավական անորոշ. «...եւ եղեւ խոռվութիւն մեծ ընդ նոսա (հայս) եւ ընդ անտիոքացիսն մինչեւ բարձաւ նա (Ֆիլիպը) ի միջոյ եւ ապա եղեւ խաղաղութիւն»³⁴:

Մինչդեռ արար պատմիշ իրն ալ-Ասիրը բավական մանրամասն շարադրում է Ֆիլիպի ձերբակալմանը հաջորդած պատերազմի, այդ ընթացքում ստեղծված երկու զույգ պետությունների՝ միմյանց դեմ ուղղված ռազմական դաշինքների և այլ հարակից հարցերի պատմությունը³⁵:

Պատմիշը գրում է. «Այդ տարում (հիշրայի 623 թ.) 1226 թ. հունվարի 2—1226-ի դեկտեմբերի 2) Անտիոքի տեր ֆրանկ Բրինսը (իշխան) հավաքեց մեծ զորք և շարժվեց հայերի դեմ, որոնք իրն Լայունի (կեռնի որդու) երկրի կիրճերում էին (ամրացած) և նրանց միջև սաստիկ պատե-

³³ Bar Hebraeus, p. 380—381.

³⁴ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225:

³⁵ Իրն ալ-Ասիր, էջ 331—333:

րազմ տեղի ունեցավ՝³⁶։ Ապա իրն ալ-Ասիրը մանրամասն նկարագրում է, թե ինչպես ծագեց այդ պատերազմը և, որոնք էին դրա պատճառները. Լեռնի մահը, նրա դստեր՝ Զաբելի ամուսնությունը Ֆիլիպի հետ, ապա վերջինիս դեմ Հայերի ապստամբելը, Բոհեմունդի պահանջը՝ աղաւարձակել իր որդուն և Կիլիկիայի Հայերից նրա ստացած մերժումը³⁷:

Իրն ալ-Ասիրը իր շարադրանքում բավական մեծ տեղ է հատկացնում Հռոմի պապի (Հռոմորիուս Դ) վերաբերմունքին՝ Կիլիկիայի և Անտիոքի վերոհիշյալ բախման նըկատմամբ։ Ըստ արար պատմիչի, Բոհեմունդը թույլտվություն է խնդրում պապից՝ Կիլիկիայի վրա Հարձակվելու Մերժում ստանալով, Բոհեմունդը դաշինք է կնքում Իկոնիայի սուլթանի հետ՝ որոշում ընդունելով Հարձակվել Հայոց թագավորության վրա։ Լսելով այդ մասին և ենթարկվելով իրենց անմիջական ղեկավարի՝ Հռոմի պապի ցուցումներին, Տաճարական և Հյուրընկալ ասպետները Հրաժարվում են ենթարկվել Անտիոքի իշխանին և վերջինս ստիպված է լինում պատերազմն սկսել առանց նրանց մասնակցության³⁸։

Ըստ եղած Համաձայնության, Իկոնիայի սուլթանը Հարձակման անցավ 1225 թվականի վերջերին։ Հյուրընկալ ներխուժելով սուլթան Քայ Կուրաղին սկզբում Հաջողվեց գրավել շորս բերդ, սակայն ձմեռը վրա հասավ, և նա ստիպված հետ քաշեց զորքերն ու վերադարձավ իր երկիրը³⁹։

Երբ Բոհեմունդը իր բանակով ներխուժեց Կիլիկիա, Հայ իշխանները դիմեցին Հալեպի սուլթանությանը և ուղարկան օգնություն ստացան այնտեղից։ Ինչպես գրում է իրն ալ-Ասիրը, «Բոհեմունդը առաջ խաղաց, պատերազմեց նրանց (Հայերի) հետ, սակայն արդյունքի շհասնելով վերադարձավ»⁴⁰։

³⁶ Նույն տեղում, էջ 331։

³⁷ Իրն ալ Ասիր, էջ 332։

³⁸ Նույն տեղում։

³⁹ Նույն տեղում։

⁴⁰ Նույն տեղում, էջ 333։

Իրն ալ-Ասիրի այս տեղեկությունները շատ արժեքավոր են, մանավանդ որ Հայկական ազգյուրները (Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի և այլք), ինչպես նաև այլ պատմիչներ Հիշյալ դեպքերի մասին գրեթե ոշխնչ չեն հաղորդում:

Ինչպես երկում է պատմիչի վերոհիշյալ Հաղորդումից, 1224—1226 թվականներին ևս փորձ արվեց՝ Կիլիկիան տարբեր կողմերից Հարձակման ենթարկելու և այդ ձեռվ այն ծնկի բերելու:

Ֆիլիպի գերությունից (1224) և Կիլիկիան Հայաստանի ու Անտիոք-Տրիպոլիսի կոմսության միջև 1224—1226 թթ. բախումից հետո, Կիլիկիայի իշխանները Կոստանդին պայլի գլխավորությամբ սկսեցին նոր ուղիներ փնտրել երկրի անվըտանգության ապահովման համար: Երբ Բոհեմունդ Դ-ը Կիլիկիայի գեմ դուրս բերեց Ռուբինյանների վաղեմի ու անհաջող թշնամուն՝ Իկոնիայի սուլթանությանը, Կիլիկիայի իշխաններին այլ քան չէր մնում անելու, քան շուտափույթ դաշնակից փնտրել: Տվյալ պարագայում ամենավըստահելի դաշնակիցը կարող էր լինել Հալեպի սուլթանությունը, որը, սակայն, մինչ այդ, միշտ էլ հանդես էր եկել Կիլիկիան Հայաստանի գեմ: Սակայն քաղաքական իրադրությունը փոխել էր: Եթե կեռն Բ-ի օրոք Հայոց թագավորությունը Անտիոքին տիրելով կարող էր սպառնալ Հալեպի ինքնուրույնությանը, ապա այժմ արդեն Կիլիկիան ներքին դժվարություններ էր անդրում և չուներ նման Հավակնություններ, իսկ Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը Բոհեմունդ Դ-ի գլխավորությամբ վտանգավոր հարեան էր և Հավակնում է իր աղքեցությունը տարածել ու միայն Կիլիկիայում, այլև Հալեպի Ալյուրյաններին պատկանող գավառներում:

Շատ լավ գիտակցելով այս ամենը, Կիլիկիայի վերնախավը՝ Կոստանդին պայլի գլխավորությամբ, կարողացավ իր կողմը դրավել Հալեպի սուլթանությանը՝ հուշելով նըրան, որ Բոհեմունդ Դ-ի ուժեղացումը ձեռնտու չէ նաև Հալեպի Ալյուրյանների համար: Հենց դա նկատի ունի իրն ալ-

Ասիրը՝ գրելով. «Հայերը լուր ուղարկեցին Հալեպի աթաբեկ Շիշար ալ-Դինին՝ օգնության կանչելով և զգուշացնելով, որ վատ կլինի, եթե բրինսը գրավի իրենց երկիրը, քանի որ Հալեպի գավառներին դրացի է»⁴¹:

Հալեպից ուղարկած «զորքն ու զենքը»⁴² վճռական նըշանակություն ունեցած Բոհեմունդի հարձակմանը դիմագրավելու գործում: Բայց որ շատ ավելի կարեոր է, Կիլիկիան վերջապես գուրս եկավ թշնամական պետությունների շրջափակումից, որը նրան ստիպում էր երկար ժամանակ միայնակ պայքարել իր հակառակորդների դեմ:

Ինչպես երկում է իրն ալ-Ասիրի տեղեկություններից, 1225—1226 թվականներին Կիլիկիայի թագավորության և լատին կոմսության փոխհարաբերություններում ոչ պակաս դեր է խաղացել նաև Հռոմեական եկեղեցին, որը շահագրդոված չէր երկու քրիստոնյա երկրների պատերազմով, քանի որ այն երկուստեք կթուլացներ նրանց: Հռոմորիուս Գ պապը նամակներ է հղում երկու պետությունների զեկավարներին՝ փորձելով կանխել բախումը: Սակայն եթե Կիլիկիայի կառավարողները ձգտում էին լավ հարաբերություններ պահպանել Հռոմեական եկեղեցու հետ, ապա Բոհեմունդ Դ-ը մշտական հակասությունների մեջ էր Անտիոքի լատին պատրիարքի հետ, որը, բնականաբար, ազդում էր Հռոմի պապի հետ նրա հարաբերությունների վրա: Իր նամակներից մեկում Հռոմորիուս Գ-ը կոմսին ենթարկեց բանադրանքի, որից հետո Տաճարական և Հյուրընկալ ասպետները հրաժարվեցին ծառացել Բոհեմունդին⁴³:

Այսպիսով, երբ իկոնիայի սելչուկների զանգվածային ներխուժումը ոչ մի տարածքային փոփոխություն չըերեց,

⁴¹ Իրն ալ-Ասիր, էջ 333:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նրանք թեև տարբեր պետությունների մեջ էին ապրում և փառություն այդ պետությունների հողատերերի շարքն էին դասվում՝ ունենալով իրենց վանքերն ու բերդերը, սակայն անմիջականորեն ենթակա էին Հռոմի պապին:

իսկ Բոհեմունդ Դ-ին հավատարիմ մնացած ուժերը հետ մզկցին Հալեպի սուլթանի աջակցությամբ, Կիլիկյան Հայաստանը վերգտավ իր նախկին կայունությունը:

Բոհեմունդի դեմ երկու անգամ հաղթանակ տանելուց հետո Կոստանդին իշխանը, որն արդեն իր կողմն էր գրավել Հայոց կաթողիկոսին ու Կիլիկիայի խոշոր ավատանքերին, 1226 թվականին առաջ քաշեց իր որդու՝ Հեթումի թեկնածությունը որպես Զաքելի փեսացու: Կիլիկիայի իշխանների համաձայնությամբ Հեթումը ամուսնացավ Զաքել թագուհու հետ և հոչակվեց «Թագավոր Հայոց»՝ հիմք դնելով Հեթումյան-Ռուբինյան միացյալ հարստության: Այսպիսով վերջնականապես վերացավ այդ երկու տոհմերի միջև Հակառակության կամ թշնամության ամեն մի հնարավորություն:

Լևոն Բ-ի գահակալության տարիներին (1198—1219) Կիլիկյան Հայաստանը քաղաքական և տնտեսական մեծ հաջողությունների հասավ: Միջնադարյան թե՛ Հայ և թե՛ օտար պատմիչները վառ գույներով են նկարագրում Հայոց արքայի տարած փայլուն հաղթանակները՝ նրա գահակալության շրջանը հիմնականում ներկայացնելով որպես Կիլիկյան պետության համար համատարած հաջողությունների անամապ մի շրջան: Անշուշտ այս պատմիչների տեղեկությունները մեծ մասամբ հավաստի են, սակայն նրանց հաղորդումներում կա նաև իդեալականացում, որը այս կամ այն շափով իր ազգեցությունն է թողել նաև պատմական ուսումնասիրությունների վրա: Ճիշտ է, բոլոր ուսումնասիրողներն էլ նշում են նաև Լևոն Բ-ի կրած պարտությունների մասին (1216 թ. Իկոնիայի սովորականությունից, 1219 թ. Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունից), սակայն գնահատելով այդ ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանին հարևան երկրներում տիրող քաղաքական իրադրությունը, նրանք այն բարենպաստ են համարում և հաճախ դրանով էլ բացատրում Լևոն Բ-ի ուսպմական հաջողությունները:

Կարելի է ասել, որ ուսումնասիրողները մանրազնին քննության շեն ենթարկել քաղաքական այն յուրահատուկ

պայմանները, որոնց շրջանակում գտնվում էր Կիլիկյան Հայաստանը 1201—1222 թվականներին: Մի կողմից Ռուբինյանները լավ հարաբերությունների մեջ էին Այրուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի, Հռոմի պապեր հնոնկենտիոս Գ-ի և Հռոնորիուս Գ-ի հետ, իսկ մյուս կողմից՝ թշնամացած էին Կիլիկիային սահմանակից բոլոր երեք պետությունների՝ Իկոնիայի սուլթանության, Հալեպի Այրուբյան սուլթանության և Անտիոք-Տրիփոլիսի կոմսության հետ:

Աղբյուրների (մանավանդ՝ արաբական) տեղեկությունների համադրումը բերում է այն համոզման, որ 1201—1222 թվականների ընթացքում Հայոց թագավորությունը ու միայն անընդհատ պատերազմներ էր մղում հարևան երկրների, այլև (ինչպես, օրինակ 1208 թ.) ստիպված պայքարում էր միաժամանակ երեք պետությունների դեմ: Եթե նկատի ունենանք նաև, որ ԺԴ դարի առաջին տասնամյակներին Իկոնիայի սուլթանությունը ապրում էր իր ամենահզոր ժամանակաշրջանը (որը շարունակվեց մինչև մոնղոլական արշավանքները), ապա պարզ կդառնա, որ հիշյալ տարիներին՝ 1201—1222, քաղաքական միջնորդությունը բոլորովին էլ բարենպաստ էր Կիլիկյան Հայաստանի համար: Չնայած դրան, կը ուն Բ-ը ու միայն պահպաննեց ԺԴ դարի վերջին երեք տասնամյակներում Ռուբինյանների ձեռք բերած տարածքային նվաճումները, այլև փորձում էր գրավել նախկին Անտիոքի իշխանության տարածքը: Բացի դրանից, նա հաջող պատերազմ մղեց Հալեպի սուլթանության դեմ: Այս ամենը հնարավոր դարձավ հիմնականում շնորհիվ ուազմաքաղաքական ու տնտեսական այն հաջողությունների, որոնց հասել էր Կիլիկիան Ռուբինյան իշխանության հիմնադրումից (1080) հետո՝ անցած 120 տարիների ընթացքում:

Կիլիկիայի տնտեսական բուռն աճը ևս սկսեց հենց կը ուն Բ-ի օրոք՝ ԺԴ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին: Այն պայմանավորված էր, դեռևս ԺԴ դարի 70-ական թվականներից սկսած, Դաշտային Կիլիկիայի բարերեր հողերի կանոնավոր մշակությամբ, քաղաքների աճով, ինչպես նաև

1201 թվականից պետական հովանավորության արժանացած ծովալին առևտրի վերելքով⁴⁴:

Կիլիկյան Հայաստանի ռազմական հաջողություններում մեծ դեր խաղացին նաև հայոց արքայի՝ Լևոն Ռուբինյանի անձնական հատկանիշները:

Այս ամենը հնարավորություն տվեց Կիլիկյան պետությանը երկար ժամանակ, փաստորեն միայնակ, պայքարելու հարեւան պետությունների դեմ: Անշուշտ որոշակի դեր խաղացին նաև Եգիպտոսի Ալյուրյան սուլթանությունը և Հռոմեական եկեղեցին:

1222 թ. Ֆիլիպի և Զարելի ամուսնությամբ, մանավանդ 1225—1226 թթ. Հայունացավ Հայոց թագավորության ներքին քաղաքական վիճակը, զգալիորեն բարելավվեցին փոխհարաբերությունները հարեւան պետությունների հետ: Կիլիկյան պետության համար սկսվեց համեմատաբար խաղաղ և բուռն իրադարձություններով ոչ այնքան հարուստ մի քանչյակ, որը շարունակվեց մինչև ժդ դարի 40-ական թվականները, այսինքն մոնղոլների հայտնվելը Կիլիկիային հարեւան երկրներում:

* * *

Կիլիկիան առևտրի տեսակետից շատ նպաստավոր դիրքում էր գտնվում: Սիրիայի և Փոքր Ասիայի հատման անկյունը Միջերկրականի հյուսիս-արևելքում կարևոր տեղ ուներ մերձավորարևելյան առևտրում: Սիրիայից դեպի Իկոնիա

⁴⁴ Մեր կարծիքով, ծովալին առևտրին զայիկ տալու Լևոն թ-ի ջանքերը (հենց 1201—1203 թվականներից սկսած) վկայում են Երկրի մեկուսացվածությանը հաղթահարելու նրա ձգտման մասին:

և Կոստանդնուպոլիս տանող ցամաքային ճանապարհը անցնում էր Կիլիկիայի վրայով։ Սրան ավելանում էին Եփրատի ավազանից և Հեռավոր Արաբիայից եկող առևտրական ուղիները։ Դրանք կտրում-անցնում էին Կիլիկիան մի ծայրից մյուսը։

Կիլիկիան թե՛ աշխարհագրականորեն և թե՛ տնտեսապես առավել կապված էր Սիրիայի, Հատկապես Հյուսիսային Սիրիայի հետ։ Հալեպից և Անտիոքից եկող առևտրական քարավանները Աղեքսանդրեկ էին անցնում Բեյլանի կիրճով, որը փաստորեն Կիլիկիայի դարպասն էր Սիրիայի կողմից։

Աղեքսանդրեկից մի քանի կիլոմետր դեպի հյուսիս գտնվում էր Պորտելլան՝ Կիլիկյան Հայաստանի գլխավոր մաքսատունը, որն ընկած էր լեռների և ծովածոցի միջև⁴⁵։ Այստեղից առևտրական ճանապարհը ձգվում էր Հայկական ողջ տարածքով՝ հասնելով նախ Մամեստիա, ապա Աղանա և վերջապես մտնում էր Տավրոսյան մի լեռնանցք (Դրունք Կիլիկիո), որի վրա հսկում էր Գուգլակ ամրոցը։ Տավրոսյան լեռներից այն կողմ ճանապարհը տանում էր դեպի հկոնիա (Հավանաբար անցնելով Լարանդայով)։

Մամեստիայի և Աղանայի միջև այս գլխավոր ճանապարհին միանում էր Եփրատի միջին հոսանքից եկող մի այլ ուղի, որն անցնելով Մարաշի միջով հասնում էր Հիշյալ երկու քաղաքներին։ Սննդամթերքի զգալի մասը հիշյալ քաղաքները ստանում էին այդ ուղիով։

Կիլիկյան Հայաստանը ոչ միայն կապող օղակ էր մերձավորաբնելյան առևտրում, այլև արտադրում էր բազմատեսակ ապրանքներ, որոնք մեծ պահանջարկ ունեին Մերձավոր արեւելքում։

Կիլիկիայից արտահանում էին այծի մազ, որն իր երկարությամբ և ամրությամբ հռչակված էր դեռևս Հին Աշխարհում։ Այծի մազը օգտագործվում էր գործվածքների արտադրության մեջ։

⁴⁵ W. Heyd, Histoire du commerce du Levant au moyen âge. t. I, Leipzig, 1886, p. 367.

Տավրոսյան լեռների հանքերում արդյունահանվում էին տարրեր մետաղներ, հիմնականում՝ երկար⁴⁶: Կիլիկիայի մետաղը արտահանվում էր Սիրիա և Փոքր Ասիայի ու Դիար Բարքի հետ Սիրիայում օգտագործվող մետաղի գիմավոր մատակարարն էր⁴⁷:

Կիլիկիան Սիրիային էր մատակարարում նաև նրա աղի զգալի մասը: Հայտնի է, որ այն արդյունահանվում էր Մամեստիայի շրջակայրում գտնվող աղի լճերից⁴⁸:

Լեռնային Կիլիկիայի անտառները առատորեն մատակարարում էին փայտանյութ, իսկ դաշտավայրերը հնարավորություն էին տալիս ստանալու և արտահանելու ցորեն, գինի, շամիչ: Վերջապես երկրից դուրս մեծ արժեք ունեին նաև Կիլիկիան Հայաստանի ձիերն ու ջորիները⁴⁹:

Միջերկրածովյան երկրներում հոշակված էր Կիլիկիան բամբակը, որը ևս աճեցվում էր Դաշտային Կիլիկիայի բերրի դաշտերում: Թե՛ Հայ իշխանները և թե՛ Անտիոքի լատին իշխանները (որոնց տիրությունները ժԱ. դարի վերջին—ժՅ. դարի առաջին երեսնամյակում տարածվում էին նաև Դաշտային Կիլիկիայում) խրախուսում էին բամբակի արտադրությունը, որը, սկսած 1140 թվականից, ճենովացի առևտրականների միջոցով արտահանվում էր միջերկրածովյան երկրներ: Վերջիններս այդ շահութաբեր ապրանքը ձեռք էին բերում հիմնականում Անտիոքի շուկայում⁵⁰:

Բացի բամբակից, Կիլիկիայում աճեցվում էին նաև տեխնիկական այլ բույսեր, այդ թվում՝ սաֆրան կանեփ և այլն⁵¹:

Կիլիկիայի տնտեսական կապերի մասին հետաքրքիր տեղեկություններ կա Յակուտ ալ-Համալիի «Աշխարհագրա-

⁴⁶ W. Heyd, Histoire du commerce du Levant, t. I, p. 367.

⁴⁷ C. Cahen, La Syrie du Nord, p. 475.

⁴⁸ Ibidem.

⁴⁹ W. Heyd, t. I, p. 368.

⁵⁰ M. Lombard, Les Textiles dans le Monde Musulman VII—XII ss., Paris—La Haye—New York, 1978, p. 68—69.

⁵¹ C. Cahen, La Syrie du Nord, p. 473.

կան բառարանում»: Խոսելով Մսիսի (Մամեստիա) մասին, արար աշխարհագիրը զրում է. «Մսիսը ունի առանձնահատուկ արհեստ, որ է մուշտակագործությունը և այնտեղ պատրաստված մուշտակները արտահանվում են ամեն կողմ և հատը մինչև երեսուն դինար է զնահատվում⁵²:

Կիլիկիայի և Հարեւան Սիրիայի միջև առևտրական հրարավոր փոխարաբերությունների մասին որոշ գաղափար է տալիս Ուսամա իրն Մունկիզի «Խրատագիրքը»⁵³:

Ուսաման, խոսելով իր հոր և Կիլիկիայի իշխանապետ Թորոս Առաջինի և նրա եղբոր՝ Լևոնի միջև ամեն տարի, որպես բարեկամության նշան, փոխանակված նվերների մասին, անուղղակիորեն նկարագրում է Կիլիկիայի և Կենտրոնական Սիրիայի (Շայզար) և վերջինիս միջնորդությամբ Եղիպտոսի միջև կատարված ապրանքափոխանակության մասին: Էստ նրա, Հայքը (Հայ իշխանները) ամեն տարի իր հորը (Շայզար) ուղարկում էին մոտ 10 որսորդական բազե, նաև բյուզանդական շներ: Ապա անդրադառնալով այն ապրանքներին, որոնք իր հայրը որպես Հատուցում ուղարկում էր Կիլիկիայի Հայ իշխաններին, Ուսաման գրում է. «Խսկ Հայրս ուղարկում էր նրանց ձիեր, անուշահություններ և եղիպտական կերպասները»⁵⁴:

Այսպիսով, նա ուղարկում էր ոչ միայն տեղական ապրանք, այլև եղիպտական կերպասներ, որոնք այստեղ էին բերվում Հավանաբար ցամաքային ճանապարհով՝ Պաղեստինի վրայով: Ուսամայի տեղեկությունը թերևս մեծ նշանակություն չունենար, եթե նրանում չհիշատակվեր, որ այդ ապրանքները որոշակի քանակով և ամեն տարի փոխանակվում էին:

Չնայած վերը բերված փաստերին, ինչպես Կիլիկիայում, այնպես էլ Հարեւան երկրներում ավելի քան մեկ Հար-

⁵² Օտար աղբյուգները Հայաստանի և Հայերի մասին, էջ 109—110.

⁵³ Այսամա ին Մոնքազ, Կնիգա Նազидանիա, Ա., 1958, ստր. 297—298.

⁵⁴ Նույն տեղում, էջ 298:

յուրամյակ (ԺԱ. դարի վերջ—ԺԲ. դարի վերջ) առևտուրը որոշ շափով անկում էր ապրել: Սելջուկների կատարած ավերածությունները ԺԱ. դարի Բ կեսին, և նույն ժամանակ ու դրանից հետո Կենտրոնական Ասիայում ստեղծված անկայուն վիճակը փակել էր Զինաստան տանող ցամաքային ճանապարհը և նվազեցրել իրանի վրայով Հեռավոր արևելքի երկրների առևտրաշրջանառությունը միջերկրածովյան երկրների հետ: Հնդկական օվկիանոսի երկրներից եկած ապրանքները բերվում էին ոչ թե Պարսից ծոցով և ապա Սիրիայով, այլ Եգիպտոսի վրայով: Այս վիճակը գրեթե անփոփոխ մնաց մինչև մոնղոլական նվաճումները: Սակայն հիշյալ հարյուրամյակի վերջում մի շարք հանգամանքներ նպաստեցին առևտրի նոր աշխուժացմանը: Դրանք էին.

ա) Սիրիայի և Վերին Միջազգետքի տիրույթներում մասնատվածության վերացումը իմադ ալ-Դին Զանգիի, Նուր ալ-Դինի և մանավանդ Սալահ ալ-Դինի օրոք, երբ Մերձավոր արևելքի մի հակա տարածք միավորվեց մեկ պետության մեջ:

բ) Արևելյան Միջերկրականի բոլոր պետությունների (խաչակրաց և հայկական) կնքած առևտրական պայմանագրերը Վենետիկի, Ճենովայի և այլ եվրոպական պետությունների հետ:

գ) Կիլիկիայի հայկական թագավորության ստեղծումը՝ ԺԲ. դարի 70—80-ական թվականներին Դաշտային Կիլիկիան վերջնականապես միացվեց Հայկական իշխանապետությանը: Դրանից հետո Ռուբրինյան իշխանապետերը ոչ միայն տիրեցին Տարսոն, Աղանա և Մամեստիա խոշոր ու վաճառաշահ քաղաքներին, այլև այն առևտրական ճանապարհին, որը ճյուղավորվելով անմիջական առևտրական կապ էր Հայաստանում Կիլիկյան Հայաստանի և այնպիսի խոշոր կենտրոնների հետ, ինչպիսիք էին Անտիոքը, Հալեպը, Մարաշը, Մալաթիան և Իկոնիան:

ԺԲ. դարի վերջին տասնամյակներում Ռուբրինյանները վերջնականապես հաստատվեցին նաև Միջերկրականի կի-

լիկյան ափին՝ Սելևկիայից մինչև Աղեքսանդրեկ. Դա Հը-նարավորություն տվեց Կիլիկիայում զարգացնելու նավագնացությունն ու նավաշինությունը: Ռազմական նավեր Կիլիկիայի հայերը ունեին, ըստ երեսութիւն, գեռես ժբ դարի կեսերից (հայտնի է 1156 թ. Թորոս Բ-ի արշավանքը գեպի Կիպրոս կղզին, 1192 թ. Լևոն Բ-ի ծովամարտը Կիպրոսից վերադառնալիս և այլն):

Սկսած 1201 թվականից, երբ Լևոն Բ-ը առևտրական պայմանագիր է կնքում Ճենովայի, իսկ 1203 թ. Վենետիկի վաճառականների հետ, Կիլիկիայում զարգանում է ծովացին առևտուրը: Կիլիկիայի երկու գլխավոր նավահանգիստները՝ Այասն ու Կոռիկոսը, դառնում են միջերկրածովյան առևտուրի կարեռը կենտրոնները: Կիլիկիայի նավահանգիստները, սկսած ժադրի սկզբից, աշխույժ կապեր են հաւատառում ոչ միայն Կիպրոսի (Ֆամագուստա, Կիրենիա), այլև Կոստանդնուպոլիսի, Վենետիկի, Ճենովայի և իտալական ու հարավֆրանսիական մի շարք այլ ծովափնյա քաղաքների հետ: Այդ նավահանգիստները կապված էին նաև Այցուրյանների սովորանության: Երուսաղեմի թագավորության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության խոշորագույն նավահանգիստների հետ:

Հիմնականում իտալացի վաճառականների աշխույժ գործունեության շնորհիվ առևտրական կապեր հաստատավեցին Կիլիկյան նավահանգիստների և Սուայդիայի (Անտիոքից ոչ հեռու), Ակրայի, Ալեքսանդրիայի և այլ քաղաքների միջև:

Շատ հաճախ վերոհիշյալ քաղաքների միջև միջանկյալ կայանի գեր էին կատարում Կիպրոսի նավահանգիստները, որոնց գերը մեծացավ այն ժամանակ, երբ խաչակրաց Գարշավանքի (1189—1192) մասնակիցները նվաճեցին կղզին բյուզանդացիներից և հիմնեցին խաչակրաց թագավորություն:

Այն որպես միջանկյալ կայան օգտագործեց նաև Վիլբրադ Օլդենբուրգցին՝ 1211—1212 թվականներին, երբ այցելում էր Կիլիկյան Հայաստան: Եվրոպացի ուղեգիրը իր «Ճանապարհորդության» մեջ մանրամասն նկարագրում է

իր ուղին Պաղեստինից Կիլիկիա, որը ժարի սկզբին թերևս ամենաբանուկ ճանապարհներից մեկն էր:

Օլդենբուրգցին Եվրոպայից նավելով (Հավանաբար Կիպրոսի նավահանգիստներից մեկն օգտագործելով որպես միջանկյալ կայան) ափ է գուրս գալիս Ակրայում և այստեղից մինչև Կիլիկիա ճանապարհը շարունակում ցամաքով:

Աշա նրա անցած ուղին. Ակրա-Տյուրոս-Սիդոն-Բեյրութ-Տրիպոլիս-Ջիբլե - Լաթաքիա-Սուայդիա-Անտիոք-Բաղրաս-Աղեքսանդրեկ-Պորտելլա-Մամեստիա: Այնուհետև նա շրջում է ողջ Կիլիկիայում (Մամեստիա, Աղանա, Տարսոն, Սիս, Անաղարքա և այլուր), ապա Կոռիկոսում նավ է նըստում՝ անցնելով Կիպրոս և այնտեղից Եվրոպա⁵⁵:

Օլդենբուրգցու Հաղորդած տեղեկություններից կարելի էր ենթադրել, որ Հիշյալ ուղին, Անտիոքի և Բաղրասի միջև, մի Հատվածում միանում էր Հարիմի վրայով դեպի Հալեպ գնացող մի այլ ճանապարհի:

Առևտրական ուղիների (ծովային և ցամաքային) փոփոխման համար վճռական նշանակություն ունեցան Եգիպտոսի Մամլուքյան սուլթանության (Հիմնադրվեց 1250) նովաճումները: Մամլուքները ընդամենը քառորդ դարի ընթացքում (1266—1292) մեկը մյուսի հետեւց գրավեցին Երոսաղեմի թագավորությունն ու Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը՝ վերջ դնելով խաչակրաց պետություններին Արեվելքում:

⁵⁵ Wilbrandi de Oldenborg, Peregrinatio, p. 163—180.

Ա. Մ Փ Ռ Փ Ռ Ի Մ

Կիլիկյան Հայաստանի և Մերձավոր արևելքի արարական երկրների փոխարաբերություններին նվիրված ներկա աշխատության հիմնական եղրակացությունները հետևյալն են.

Հայկական, արարական, ասորական, լատին և բյուզանդական սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս լուծելու ուսումնասիրության հիմնական խնդիրները:

Հետեւով ԺԲ դարի 40—70-ական թվականներին Կիլիկյան Հայաստանի՝ Զանգիների պետության հանդեպ քաղաքականության կրած փոփոխություններին, եղրակացնում ենք, որ խաչակիրների հետ դաշինքից դեպի Նուր ալ-Դինի հետ դաշինքից հաստատմանն անցնելու շրջադարձային կետ էր Հարիմի ճակատամարտը 1164 թվականին։ Այն ի հայտ բերեց մի կողմից խաչակիրների ռազմական թուլությունը, իսկ մյուս կողմից՝ Զանգիների աճող զգորությունը։ Ընդ որում Թորոս Բ-ի իշխանության վերջին տարիները (1164—1169) եղան չեղողության, իսկ Մլեհի կառավարման տարիները (1170—1175)՝ անցման փուլ։ Մերտ հարաբերություններ հաստատվեցին ոչ միայն Զանգիների, այլև տարածքաշրջանի մի քանի այլ մահմեդական պետությունների հետ։ Այս փոխաշավելեատ դաշինքը մեծ նշանակություն ունեցավ Ռուբինյան իշխանապետության համար։ Նուր ալ-Դինի ռազմական զգորությունը նպաստեց բյուզանդացիների և խաչակիրների հանդեպ Մլեհի հաղթանակներին։

Հայկական իշխանապետության և Այլուրյան սուլթանության փոխարաբերությունների բնույթը փոփոխություններ էր կրում՝ կախված Սալահ ալ-Դինի և խաչակիրների ուժերի հարաբերակցությունից։

1187 թվականի Խոստոմի արշավանքը պետք չէ նույնացնել Սալահ ալ-Դինի սիրիական զորքի ներխուժման հետ (1188 թվական): Իր իշխանության տարիներին Սալահ ալ-Դինը երեք արշավանք ձեռնարկեց գեպի Կիլիկիա (1180, 1188, 1193), որոնցից երկրորդը բավական անորոշ է և կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրման:

Արաբ պատմիչների արժեքավոր տեղեկությունները և հատկապես նրանց երկերում հանդիպող Գրիգոր Գ կաթողիկոսի նամակները Սալահ ալ-Դինին հնարավորություն են տալիս ճշտելու կառն Բ-ի և Գրիգոր Տղայի դիրքորոշումը խաչակրաց Գ արշավանքի մասնակիցների և Սալահ ալ-Դինի միջև ընթացող հակամարտության նկատմամբ:

Տվյալ բարդ իրավիճակում նրանք չեղոք քաղաքականություն էին վարում, որը համապատասխանում էր հայկական պետության շահերին:

ԺԲ դարի վերջը նշանավորվեց Մերձավորաբնելյան պետությունների նոր մասնամամբ՝ կապված Սալահ ալ-Դինի մահից հետո նրա սովորանության մեջ ծագած երկպառակության և տրոհման հետ: Առաջացած քաղաքական իրավիճակը Կիլիկիայի հայկական պետության զորացման ու ընդարձակման գիտավոր գործոններից մեկն էր: Հենց այս տարիներին Կիլիկիայում հոլակվեց հայոց թագավորություն (1198):

Կիլիկիան թագավորության և Հալեպի Ալյուրյան սովորանության միջև պատերազմը (1203—1206) «Անտիոքյան պատերազմի» (1201—1216) բաղկացուցիչ մասն էր, որի ընթացքում ձեւավորվեցին հայկակիլիկիան ռազմական միություններ: Դրանց մեջ հիմնականում ներգրավվեցին երեք պետություններ՝ Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը, Հալեպի Ալյուրյան և Խոսրովի սելջուկյան սովորանությունները: Այս դաշինքների առաջացումը կապված էր հայոց թագավորության ռազմական և տնտեսական հզորացման հետ: Հարեւան պետությունների համար հատկապես վտանգավոր էր հայերի կողմից Անտիոքի և Հյուսիսային Սիրիայի որոշ գավառների նվաճումը:

Լեռն Բ-ի օրոք Կիլիկիան գտնվում էր անբարենպաստ քաղաքական իրավիճակում: Դեպի ծով դուրս գալու և ծովային տերությունների հետ առևտրական պայմանագրեր ստորագրելու թագավորի ձգտումը մասամբ պայմանավորված էր Հարեան պետությունների հետ Հարաբերությունների սրմամբ:

Աշխատության մեջ ի հայտ են բերվում պատմագրության մեջ քիչ հայտնի կամ բոլորովին անհայտ այնպիսի փաստեր, ինչպիսիք են Լեռն Բ-ի նամակագրությունը Եղիպատոսի սուլթան ալ-Մալիք ալ-Աղիլի և Հոռմի պապ Իննոկենտիոս Գ-ի հետ: Դրանք արժեքավոր դիվանագիտական փաստաթղթեր են, որոնք բացահատում են հայոց թագավորի՝ երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար գործադրված շանքերը:

Լեռն Բ-ի քաղաքականությունը շարունակեց Կոստանդին պայլը (խնամակալ), որը գրեթե մեկ տասնամյակ Կիլիկիայի փաստական կառավարիչն էր: Զարելի և Ֆիլիպի ամուսնությամբ (1222 թ.) և հատկապես Հալեպի սուլթանության հետ դաշինքի հաստատումով (1226) թշնամական օղակից վճռական ճեղքում կատարվեց: Նոր Հարստության հիմնադիր՝ Հեթումի գահակալմամբ Կիլիկիայում հաղթահարվեց նաև ներքին անկայունությունը:

ЗАКЛЮЧЕНИЕ

Работа посвящена взаимоотношениям между Киликийской Арменией и арабскими странами Ближнего Востока и основана на сведениях армянских, арабских, сирийских, латинских и византийских источников.

Проследив изменения во внешней политике Килийской Армении по отношению к государству Зенгидов в 40—70-е годы XII-го века, сделан вывод, что переломным пунктом перехода от союзничества с крестоносцами к установлению союза с Нур ал-Дином было сражение при Хариме в 1164 году. Оно выявило, с одной стороны, военную слабость крестоносцев, с другой—усиливающуюся мощь Зенгидов. При этом последние годы правления Тороса II (1164—1169) были годами нейтралитета, а годы княжения Млеха (1170—1175)—переходным этапом к политике установления тесных контактов не только с Зенгидами, но и с другими мусульманскими государствами региона. Этот взаимовыгодный союз имел большое значение для княжества Рубенидов. Военная мощь Нур ал-Дина способствовала победам Млеха над византийцами и крестоносцами.

Характер взаимоотношений армянского княжества с Айюбидским султанатом, претерпевал изменения в зависимости от соотношения сил Салах ал-Дина и крестоносцев. В них можно проследить несколько этапов.

Поход Ростома в 1187 году на Киликию нельзя отождествлять с вторжением сирийских войск Салах ал-Дина (1188). Салах ал-Дин в течение своего правления предпринял три похода на Киликию (1180, 1188,

1193), второй из которых нуждается в дополнительных сведениях.

Ценные сведения арабских историков и особенно встречающиеся в их трудах два письма католикоса Григора IV к Салах ал-Дину позволяют определить позицию князя Левона II и католикоса Григора к противоборству между участниками III крестового похода и Салах ал-Дином. Их позицию в данной сложной ситуации можно охарактеризовать как политический нейтралитет, больше всего соответствовавший интересам армянского государства.

Конец XII века ознаменовался новым распадом государств Ближнего Востока, связанным с возникшей после смерти Салах ал-Дина междуусобицей и раздлом султаната. Создавшаяся политическая ситуация явилась одним из главных факторов усиления и расширения Киликийского армянского государства и провозглашения его царством в 1198 году.

Война между армянским царством и Алеппским Айубидским султанатом (1203—1206) была частью так называемой «Антиохской войны» (1201—1216), в течение которой образовались антикиликийские военные блоки. В них участвовали, в основном, три государства—графство Антиохия-Триполи, Алеппский Айубидский и Иконийский сельджукский султанаты. Создание этих союзов было связано с усилением военной и экономической мощи армянского царства, с угрозой захвата им Антиохии и близлежащих регионов, в том, числе и части территории Алеппского султаната.

При Левоне II (начиная с 1201 года) Киликия находилась в неблагоприятной политической ситуации. Его стремление выйти к морю и подписание им торговых соглашений с морскими державами (Венеция, Генуя) связано также с обострившимися отношениями с соседними государствами.

В исследовании выявляются малоизвестные или вовсе неизвестные в литературе факты переписки Левона II с египетским султаном ал-Малик ал-Адилом и Папой Римским Иннокентием III, которые являются ценными дипломатическими документами, раскрываю-

щими усилия армянского царя вывести страну из трудного положения.

Политику Левона II продолжил байл (регент) Константин, почти целое десятилетие находившийся у власти в Киликии. Брак Филиппа и Забел (1222), и особенно союз с Алеппским султанатом (1226), значительно способствовали прорыцу вражеского окружения. Воцарение Гетума (в том же 1226 году)—основателя новой династии в Киликийской Армении—положило конец семилетней нестабильной ситуации внутри страны.

SUMMARY

This work is dedicated to the relations between the Cilician Armenia and the Arab countries of the Near East. It is based on the reports of the Armenian, Arabic, Syriac, Latin and Byzantine sources.

While observing the changes in the foreign policy of the Cilician Armenia towards the Zengid state in the 40—70 years of the XII century, we come to a conclusion, that the turning-point from the alliance with the Crusades to the alliance with Nur al-Din was the battle of Harim in 1164. It revealed, on one hand the military weakness of the Crusaders, and on the other, the increasing power of the Zengids. Alongside with that the last years of the government of Toros II (1164—1169) they were years of neutrality, and the years of the rule of Mleh (1170—1175)—a transition period to establishing close contacts not only with the Zengids, but also with the other Moslem states of the region. This mutually-beneficial treaty was of great importance for the Rubenid principality. The military power of Nur al-Din favoured the victories of Mleh against the Byzantines and the Crusaders.

The character of the relationship of the Armenian principality with the Ayyubid sultanate changed depending on the correlation of forces of Salah al-Din and the Crusaders. We can observe some stages in that relationship.

The campaign of Rostom in 1187 against Cilicia, must not be identified with the invasion of the Syrian troops of Salah al-Din (1188). During his reign Salah al-Din in 1180, 1188 and finally in 1193 unleashed campaigns against Cilicia. The data concerning the second campaign is unsufficient.

The valuable information of the Arab historians and especially the two letters of Catholicos Gregory IV to

Salah al-Din permits to assess the attitude of prince Levon II and Catholicos Gregory towards the antagonism between the participants of the III Crusade and Salah al-Din. Their position in that complicated situation can be characterized as political neutrality, which was in the interests of the Armenian state.

The end of the XII century was marked by a new collapse of the Near East states, as a result of the civil war in the Ayyubid sultanate, which stirred after Salah al-Din's death. The political situation of that period was one of the main factors of the strengthening and enlargement of the Cilician Armenian state and its proclamation as a Kingdom in 1198.

The war between the Armenian kingdom and the Ayyubid sultanate of Aleppo (1203—1206) was a part of the so called «Antiochian war» (1201—1216), during which some alliances were formed against Cilicia. Mainly three states participated in that alliances—the County of Antiochia—Tripoli, the Ayyubid sultanate of Aleppo and the Seljuk sultanate of Iconium.

During the reign of Levon II (since 1201) Cilicia was in an unfavourable political situation. This was one of the motives of the king's aspiration to sign agreements with the naval powers (Venice, Genoa).

The investigation exposes some little known or unknown facts, such as the correspondence of Levon II with the sultan of Egypt al-Malik al-Adil and with the Pope Innocent III, which are valueable documents of diplomacy. They reveal the attempts of the Armenian king to withdraw his country out of the difficult situation.

Levon II's policy was continued by Constantin the regent, who would rule in Cilicia for about ten years. The marriage of Philip and Zabel (1222) and especially the truce with the sultanate of Aleppo (1226) considerably favoured to the break-through out of the encircle of the hostile states. The accession of Hetum (in the same 1226 year)—the founder of a new dynasty in the Cilician Armenia, put an end to the last-for-seven-years internal instable situation in Cilicia.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՄԿՋԲՆԱՂՅՑՈՒԹՅՆԵՐ

Աբուսահիլ Հայ (Արու Սալիհ Հայ), Պատմութիւն Եկեղեցեաց և վանորէից Եղիպատոսի, Վենետիկ, ս. Ղազար, 1933:

Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, թարգմ. Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982:

Աբարական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, Յակուտ ալ-Համալի, Աբուլ-Ֆիդա, Իրն Շաղդադ, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965:

Դիւան Հայոց պատմութեան, Հ. Խ., Թիֆլիս, 1912:

Իրն ալ-Ասիր (թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագր. Արամ Տեր-Ղևոնդյանի) Երևան, 1981, (Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, 11, Աբարական աղբյուրներ, Բ):

Իրն Խալիքան, Ականավոր Հայեր Եղիպատոսի մեջ, թարգմ. արարերներից Գ. Մըսրէնանի, Գահիրե, 1947:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961:

Մանր Ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց Գ. Ա. Հակոբյան, Երևան, Հ. 1, 1951, Հ. 2, 1956:

Մատթէոսի Աւոճայեցւոյ Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

Միքայել Ասուրի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871:

Միսիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Ժամանակագրական, Մոսկվա, 1860:

Յովհաննու Գարդելի Ժամանակագրութիւն Հայոց, Ա. Պետերբուրգ 1891: Ներսես Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, Երևան 1973:

Մամուէլի Անեցւոյ Հաւաքչունքի կրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956:

Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859:

Ստեփաննու Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910:

Ստեփաննու Օրբելյանի Ժամանակագրութիւն, կազմեց Ա. Աբրահամյան, Երևան, 1942:

- Чардакијај Բարձրարերդցոյ, Պատմութիւն արևելքական, Մոսկվա, 1861:
- Վահրամայ Բարոնոյ Պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859:
- Иоанн де Плано Карпини, История монголов и Вильгельм де Рубрук, Путешествие в восточные страны/введение, перевод и примечания А. И. Маленна.—С-Пб., 1911.
- Марко Поло, «Книга» / Пер. старофранцузского текста И. П. Минаева / ред. и вступ. статья И. П. Магидовича, М., 1956.
- Никиты Хониата История.—С-Пб., 1869.
- Три еврейских путешественника XI и XII ст. / пер. прим. и карты Марголина.—С-Пб., 1881.
- Усама ибн Мункыз. Книга назидания / пер. М. А. Салье.—М., 1958.
- Abu Shama, Ar-Raudatayn fi achbar ad-daulatayn.—Beyrouth, 1974.
- Arab Historians of the Crusades/ selected and translated from the arabic sources by F. Gabrieli / translated from the italian by E. J. Costello.—Berkeley & Los-Angeles, University of California, 1984.
- Alberti Aquensis, Historia Hierosolymitana.—Paris, t. IV,—Recueil des Historiens des Croisades, Historiens Occidentaux.
- Bar Hebraeus, The Chronography of Bar Hebraeus Gregory Abu-l-Faraj / translated by E. Budge, Amsterdam, 1976.
- Brocardus, Directorium ad Passagium Faciendum.—Recueil des Historiens des Croisades, documents arméniens.—Paris, 1869, t. II.
- Cinnamus, Recueil des Historiens des Croisades.—Historiens Grecs, Paris, 1875, t. I.
- Al-Dahabi, Kitab duwal al-Islam.—Damas, 1979.
- Ernoul, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier/ par M. L. de Mas Latrie.—Paris, 1871.
- Fulcher of Chartres. Chronicle of the First Crusade / translated by M. E. McGinty.—London, 1941.
- Ibn al-Adim, Histoire d'Alep par Kamal ad-Din Ibn al-Adim / ed. Sami Dahan.—Institut Français de Damas, t. I, Damas, 1951.
- t. II, Damas, 1954.
- t. III, Damas, 1968.
- Ibn Challikan's Biographical Dictionary / translated from the arabic by Bn MacGuckin de Slane.—New York & London, Johnson Reprint Corporation, t. I, 1842, t. III, 1868, t. IV, 1871.
- Ibn al-Furat, Tarikh ad-duwal wa l-muluk / ed. Hasan Muhammad al-Shamas.—Basra, 1967, t. IV.
- Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar ad-duwal.—Beyrouth, 1890.

Ibn al-Jauzi S.. Mirat az-Zaman.—Ankara, Ankara Universitesi Dil ve Tarihi, Cografya Fak., 1968.

Ibn Shaddad, Liban, Jordanie, Palestine, topographie historique / ed. critique d'Al-Alaq Al-Hatira.—Damas, 1963.

Ibn al-Qalanisi. Dhail tarikh Dimashq / ed. by H. F. Amedroz.—Beyrouth, 1908.

Ibn al-Wardi, t. II.

Al-Idrisi. Opus Geographicum.—Neapoli, Romae, 1976.

Michel le Syrien, Chronique de Michel le Syrien / tr. en français par J.-B. Chabot.—Bruxelles, 1963, t. III.

Pontificia commisio ad redigendum codicem iuris canonici orientalis, fontes, series III, v. II, Acta Innocentii p. III (1198—1216).—Vatican, 1944.

Tagribirdi, An-Nugum az-Zahira fi muluk Misr u-al-Kahira.—al-Kahira, 1938, t. VII.

Wilbrandi de Oldenborg, Peregrinatio. In: J. C. M. Laurent, Peregrinatores Medii Aevi Quatuor.—Lipsiae, 1864.

William of Tyre, A History of deeds done beyond the Sea / trans. and annotated by E. A. Babcock and A. C. Krey—New York, 1943, v. II.

2. ԱԽՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալիշան Պ., Հայ-վենետ, Վենետիկ, 1896:

Ալիշան Պ., Ծնորչալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873:

Ալիշան Պ., Միսուան, Վենետիկ, 1885:

Ալպոյանեան Ա., Պատմութիւն Հայ գաղթականութեան, Հ. Բ, Կահիրէ, 1961:

Բոզոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30—70-ական թվականներին, Երևան, 1988:

Բունեազյան Ա., Սոցիալ-տնտեսական Հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, Երևան, 1973:

Հայ ժողովրդի պատմություն, 8 Հասորով, Երևան, Հ. Գ, 1976:

Հովհաննիսյան Աշոտ, Դրվագներ Հայ պատագրական մտքի պատմության, Երևան, Հ. Ա, 1957:

Մբարեան Գ., Ականավոր Հայեր Եղիպառութեազ, Գահիրէ, 1947:

Ասկյան Հ., Կիլիկիո վանքերը, Վիեննա, 1957:

Զահշեան Մ., Պատմութիւն Հայոց, Երևան, Հ. Գ, 1984:

Պտուկեան Գ., Կիլիկիան Հայաստանի գրամները, Վիեննա, 1963:

Սուբիասյան Ա., Կիլիկիայի Հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978:

Տէր-Ղազարյան Յ., Հայկական Կիլիկիա, Տեղագրութիւն, Անթիկաս (Կիրանան), 1966:

Տէր-Մովսիսիան Ս., Պատմութիւն Հայոց սկիզբին մինչև մեր օրերը, մաս Բ, Վենետիկ, 1923:

Քասունի Ս. Ե., Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի բազարական հոլովութիւն մէջ, Պեյրութ, 1974:

Քասունի Ե., Ռուբեն Գ (1175—1187) և իր կտակը, Պեյրութ, 1987:

Քիւրքչյան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եռք, 1919:

Օրմանեան Մ., Ազգապատում, Պեյրութ, Հ. Ա., 1959:

Ածոնց Հ., Արմենիա в эпоху Юстиниана.—С-Пб., 1908.

Васильев А. А., Латинское владычество на Востоке.—Л., 1923.

Гордлевский В. А., Государство Сельджукидов Малой Азии.—М., 1960.

Зaborov M. A., Введение в историографию крестовых походов / латинская хронография XI—XII вв. / .—М., 1966.

Зaborov M. A., Крестоносцы на Востоке.—М., 1980.

Зaborov M. A., Крестовые походы.—М., 1956.

Заходер Б. Н., История восточного средневековья / Халифат и Ближний Восток / .—М., 1944.

История Византии в трех томах.—т. 2, М., 1967, т. 3, М., 1967.

История дипломатии / под ред. В. П. Потемкина.—М., 1941.

История стран Зарубежной Азии в средние века.—М., 1970.

Лэн-Пуль С., Мусульманские династии / пер. с англ. В. В. Бартольд.—С-Пб., фак. Восточных языков имп. С-Петербургского университета, 1899.

Микаелян Г. Г., История Киликийского армянского государства.—Ереван, 1952.

Семенова Л. А., Из истории Фатимидского Египта.—М., 1974.

Семенова Л. А., Салах ал-Дин и мамлюки в Египте.—М., 1966.

Степаненко В. П., Византия в международных отношениях на Ближнем Востоке / 1071—1176 / .—Свердловск, 1988.

Успенский Ф. И., История византийской империи.—М.—Л., 1948, т. III.

Успенский Ф. И., История крестовых походов.—С-Пб., 1901.

Bedoukian P., Coinage of Cilician Armenia.—Danbury, Connecticut, 1979.

Boase T., The Cilician Kingdom of Armenia.—Edinbur. London, 1978.

Cahen Cl., La Syrie du Nord et la principauté franque d'Antioche.—Paris, Institut Français de Damas.

Cahen Cl., Les chroniques arabes concernant la Syrie l'Egypte et la Mesopotamie.—Paris, 1936.

Charanis P., The Armenians in the Byzantine Empire.—Lisboa, Calouste Gulbenkian Foundation, Armenian Library, 1963.

Der-Nersesian S., The Kingdom of Cilician Armenia / in: A History of the Crusades.—Philadelphia, edit. Wolff and Hazard, 1962, v. II.

Dulaurier Ed., Recherches sur la chronologie arménienne.—Paris, 1859.

Elisseeff N., Nur ad-Din.—Damas, 1967, t. I—III.

Encyclopaedia of Islam.—London, E. J. Brill, Luzac & co., v. I, 1960, v. III, 1965.

Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem.—Paris, Académie Française, v. I, 1934, v. II, 1935, v. III, 1936.

Grousset R., L'Empire du Levant / 11ème ed.—Paris, ed. Payot, 1978.

Hasan Ibrahim Hasan, Al-Fatimiyyun fi Misr.—Al-Kahira, 1932.

Heyd W., Histoire du commerce du Levant au Moyen Age.—Leipzig, Otto Harrassowitz librairie, 1885—1886, t. I—II.

Hitti Ph. K., History of the Arabs.—London, Macmillan & co., 1958.

Hitti Ph. K., History of Syria, including Lebanon and Palestine.—London, Macmillan & co., 1951.

Hitti Ph. K., Makers of Arab History.—London, 1969.

Hoyhannesian A., Cilician Armenia and the Crusaders.—Detroit, 1958.

Lammens H. S. J., La Syrie, précis historique.—Beyrouth, 1921, v. I.

Langlois V., Le voyage dans la Cilicie.—Paris, 1861.

Langlois V., Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la dynastie Roupénienne.—St.-Petersbourg, 1860.

Langlois V., Numismatique de l'Arménie au Moyen Age.—Paris, 1855.

Langlois V., Le Trésor des chartes d'Arménie au Cartulaire de la chancellerie royale des Roupénienes.—Venise, 1863.

Lane-Poole S., History of Egypt in the Middle Ages.—London, Methuen & co., 1901.

Lane-Poole S., Saladin and the Fall of the Kingdom of Jerusalem.—Beirut, 1964.

Laurent J., Etudes d'Histoire Arménienne.—Louvain, Editions Peeters, 1971.

- Lebeau Ch.**, Histoire du Bas-Empire.—Paris, 1834, t. XVI.
- Lombard M.**, Les Textiles dans le Monde musulman VII—XII ss.—Paris—La Haye—New York, ed. Mouton, Etudes d'Economie médiévale, III, 1978.
- Luchaire A.**, Innocent III. La question d'Orient.—Paris, 1911.
- Macler F.**, Les Arméniens en Syrie et en Palestine.—Marseille, 1919.
- Macler F.**, Cambridge Medieval History.—Cambridge, 1923.
- Marcel M. J.**, Histoire de l'Egypte depuis la conquête arabe jusqu'à la domination française.—Paris, 1872.
- Minorsky V.**, Studies in Caucasian History.—London, Taylor's Foreign Press, 1953.
- Morgan J. de**, Histoire du peuple Arménien.—Venise, 1881.
- Mutafian Cl.**, La Cilicie au carrefour des empires.—Paris, édition «Les belles lettres», 1988, t. I., t. II.
- Nickolson R. L.**, Joscelyn III and the Fall of the crusader states 1134—1198.—Leiden, 1973.
- O'Leary L. de**, A Short History of the Fatimid Khalifate.—London, Kegan Paul, Trench Truber & co., E. P. Dutton & co., 1923.
- Ollivier A.**, Les Templiers.—Paris, 1958.
- Ormanian M.**, L'Eglise Arménienne.—Antélias, Liban, Catholicosat arménien de Cilicie, 1954.
- Ostrogorsky G.**, History of the Byzantine state/ tr. from the german by G. J. Hussey.—New Jersey, Rutgers University Press, 1969.
- Rey E.**, Les colonies franques de Syrie au XII ème et XII ème siècles.—Paris, éd. Picard, 1883.
- Richard J.**, La Papauté et les missions d'Orient au Moyen Age.—Rome, Paris, 1976.
- Richard J.**, Le comté Tripoli sous la dynastie Toulousaine (1102—1187)—Paris, Librairie Orientaliste Paul Geuthner, 1945.
- Runciman S.**, A History of the Crusades.—Cambridge University Press, v. I, 1954, v. II, 1955, v. III, 1955.
- Rüdt-Collenberg W.**, The Rupenids, Hethumides and Lusignans.—Paris, C. Gulbenkian Foundation Armenian Library.—1963.
- Savvides A. G. C.**, Byzantium in the Near East: Its relations with the Seljuk sultanate of Rum in Asia Minor, the Armenians of Cilicia and the Mongols A. D. c. 1192—1237.—Thessalonike, 1981.
- Schlumberger G.**, Byzance et Croisades.—Paris, 1927.
- Tékéyan P.**, Controverses christologiques en Arménie—Cilicie dans la seconde moitié du XII ème s. (1165—1198).—Roma, Pont. Inst. Orient. Studiorum, 1939.

Tournebize F., *Histoire Politique et Religieuse de l'Arménie*.—Paris, 1900.

Vasiliev A. A., *History of the Byzantine Empire*.—Madison, The University of Wisconsin Press, 1958. v. I—II.

3. ՀՅԴԱՎԱԾՆԵՐ

Ալպոյանեան Ա., *Հայագավանության տարածման շրջանակը, «էջմիածին», 1947, մայիս-հունիս*:

Արտավազդ արքեպիսկոպոս, *Հայ-լատին հարաբերությունները հունականին հարաբերութեանց լույսով, «էջմիածին», 1945, հոնվար-փետրվար: Բարբիկյան Հ., *Միքայել Բաբակիոսի «Ներբողյանը» և Կիլիկյան Հայաստանի առաջին թագավորի հարցը*, ՊԲՀ, 1984, հ. 4:*

Թասպիկյան Ս., *Հայերը և Խաչակիրները, Վիեննա, Հանգես Ամսորեա, 1960—1966:*

Տեր-Ղետնդյան Վ., *Կիլիկյան Հայաստանը և Միքիան XII դարի 40—70-ական թվականներին, Երևան, ՊԲՀ, 1986, հ. 2:*

Տեր-Ղետնդյան Վ., *Սալահ ալ-Գինի պետությունը և Կիլիկյան Հայաստանը*.—Երևան, Լրաբեր հասարակական դիտությունների, 1986 հ. 11:

Տիրացյան Ա., *Կիլիկյան հայկական պետության սեփական նախատերմիդ ունենալու հարց շուրջ, «էջմիածին», 1957:*

Арутюнова В. А., *Византийские правители Эдессы в XI в.—Византийский временник*, т. 35. М., 1973.

Семенова Л. А., *Особенности феодализма в Египте.—В кн.: Типы общественных отношений на Востоке в средние века*.—М., 1982.

Dédéyan G., *L'Immigration arménienne en Cappadoce au XI ème siècle*.—Byzantion, t. XLV, 1975, fasc. I.

Yarnley C. J., *Philaretos, Armenian bandit or Byzantine General?*—Revue des Etudes Arméniennes, nouvelle série, t. IX, Paris, 1972.

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

Ն Ե Բ Ա Ս Ո Ւ Ի Թ Յ Յ Ո Ւ Ն	5
Գ Լ Ո Ւ Խ Ա Կ ի լ ի կ ի ա ն և Մ ե ր ձ ա վ ո ր ա ր և և լ ք ի ա ր ա բ ա կ ա ն ե ր կ ր ն ե - ր ը Ժ Ա -Ժ Բ դ ա ր ի Ա կ ե ս ի ն	23
Գ Լ Ո Ւ Խ Ա Բ Ռ ո ւ ր ի ն յ ա ն ի շ խ ա ն ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն ը և Ս ի ր ի ա յ ի ու Հ յ ու - ս ի ս ա յ ի ն ե ր ա բ ի պ ե տ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը Ժ Բ դ ա ր ի 40—70-ա կ ա ն թ վ ա - կ ա ն ն ե ր ի ն	39
Գ Լ Ո Ւ Խ Ա Գ կ ի լ ի յ ա ն Հ ա յ ա ս տ ա ն ը և Ա յ լ լ ո ւ ր յ ա ն ս ո ւ թ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը Ժ Բ դ ա ր ի 70—90-ա կ ա ն թ վ ա կ ա ն ն ե ր ի ն	74
Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ ի կ ե ա յ ի Հ ա յ կ ա կ ա ն թ ա զ ա վ ո ր ո ւ թ յ ա ն փ ո խ հ ա ր ա - ր ե ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը Ա յ լ լ ո ւ ր յ ա ն ս ո ւ թ ա ն ո ւ թ յ ա ն և Ա ն տ ի ո ր -Տ ը ր ի պ ո - լ ի ս ի Կ ո մ ս ո ւ թ յ ա ն Հ ե տ 1198—1226 թ վ ա կ ա ն ն ե ր ի ն	113
Ա մ փ ո փ ո ւ մ Հ ա յ ե ր ե ն	143
Ա մ փ ո փ ո ւ մ ս ո ւ ս ե ր ե ն	146
Ա մ փ ո փ ո ւ մ ա ն գ լ ե ր ե ն	149
Օ գ տ ա գ ո ր ծ վ ա ծ զ ր ա կ ա ն ո ւ թ յ ա ն ց ա ն կ	151

ՎԱՀԱՆ ԱՐԱՄԻ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ԱՐԱԲՈՒԿԱՆ ԵՐԿՐՈՆԵՐԸ 1145—1226 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հրատ. Խմբագիր Ա. Ե. Գովասարյան
Տեխ. Խմբագիր Զ. Հ. Սարգսյան

Հանձնված է շարվածքի 30.09.1993թ.: Ստորագրված է տպագրության
26.09.1994թ.: Զափը 84×108¹/32: Թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սո-
վորական»: Բարձր տպագրություն: Պայմ. 8,4 մամ., տպագր. 10,0 մամուլ:
Հրատ.-հաշվարկ. 6,95 մամուլ: Տպարանակ 500: Պատվեր № 125:
Գինը՝ պայմանագրային:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակություն, 375019, Երևան, Մարշալ
Բաղրամյան պող. 24 դ.:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակության տպարան, 378410, ք. Աշտարակ 2:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0262486

[500m]
[250m]

A ii
83468